




הַשְׁמִינִית

1880
1881
1882
1883
1884






ՎԱՐԴԵՏՆԵՐ

Հայկական թագավորական հազերամյան

ՍԱԲԻՐ ՈՒԶԱԵԿ
732(ԿԴ.925)(092.Հայոցական)

ՎԱՀԱՆ ԿՄՐՄԱՆՅԱԼ



A $\frac{T}{3199}$

Հայոցական 1962 կը հասնի

Սաբիր Ռիզանի «Վավիկ Վարդանյան» գիրքը նվիրված է ՀԱՍՏ-
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ արտիստ, ոեժիսյոր Վ. Վարդանյանի կյանքին ու
ստեղծագործությանը։ Հեղինակն իր այս ուսումնասիրության մեջ
բնութագրում է ականավոր արվեստագետի անցած ստեղծագործա-
կան ուղին, վերլուծում նրա լավագույն և բնորոշ գերակատարում-
ներն ու բնմաղրությունները, նշում նրա գերասանական ու ոեժ-
ոյորական արվեստի առանձնահատկությունները։

САБИР АЛЕКПЕРОВИЧ РИЗАЕВ.

ՎԱՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

(На армянском языке)

Армянское государственное издательство (Айпетрат).

Армянское театральное общество

Ереван, 1962 г.



Քսաներորդ դարի սկզբին հայկական թատրոնի առաջ ծառացած ամենակարևոր խնդիրներից մեկը պրոֆեսիոնալ ռեժիսուրայի ստեղծումն էր:

Պրոֆեսիոնալ ռեժիսյորի բացակայությունը արգելակում էր հայ թատրոնի առաջխաղացումը, զրկում նրան բեմադրվող դրամատուրգիայի գաղափարական բովանդակության խոր բացահայտման հնարավորությունից: Նոր ժամանակաշրջանը թատրոնի առաջ դնում էր նոր խնդիրներ, իսկ թատրոնը, գաղափարական-գեղարվեստական ղեկավար չունենալու պատճառով, չէր կարող իրագործել իր միսիան: Թատրոնի պրակտիկան ցույց էր տվել, որ պրոֆեսիոնալ ռեժիսյորի բացակայությունը թատերական արվեստի հետագա զարգացման խոշքնդուն է:

Հայ թատրոնը տառապում էր «գաստրոլյորային» հիվանդությամբ: Առաջատար դերասանները լրջորեն պատրաստում էին զլիավոր դերերը, իսկ գաստրոլի

վայրում պատահական ձևով կազմված սիրողների ողջ
խումբը միայն խաղակցում էր «պրեմյերներին»:

Նման ներկայացումներում «ռեժիսյորի» գերը հան-
դում էր ներկայացման կազմակերպմանը՝ միայն և ոչ
թե ստեղծագործական խնդիրների լուծմանը:

Մինչումը շինուալոր էր գոր-
ծիչները, քաջ գիտենալով, որ այսպիս շարունակվել չի
կարող, պայքար սկսեցին հայրենի բնմի ստեղծագոր-
ծական վերափոխման համար:

Որոնումների այդ շրջանը համընկավ Մոսկվայի
Գեղարվեստական թատրոնի ծնունդի և գործունեության
փառավոր շրջանին: Եվ օրինաշափի էր այն հետաքրքրու-
թյունը, որ հանդես բերին հայ թատրոնի գործիչները գե-
պի ՄԽԱՏ-ը: Գեղարվեստական թատրոնի գործունեու-
թյան մյուս կարևոր կողմերին առընթեր հայ գործիչ-
ներին գրավում էր նրա ռեժիսուրան ևս, որ կարճ միջո-
ցում, հանձինս Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Իվ. Խեմի-
րովիչ-Դանչենկոյի՝ համաշխարհային հոչակ էր ձեռք
բերել:

Ռեժիսյորի անհրաժեշտությունը հայ թատրոնում
ավելի ևս ակնառու դարձավ, երբ Գեղարվեստական
թատրոնում ռեժիսուրան արդեն վճռում էր գաղափարա-
կան-ստեղծագործական ամենաբարդ հարցեր: «Հայ
թատրոնին հարկավոր է ռեժիսյոր: Ռեժիսյորը — թատ-
րոնի կենտրոնական սյունն է...»¹, — այս էր այն գոր-

¹ «Հուշարար», 1907, № 5,էջ 68:

ծիշների պահանջը, որոնց անհանգստացնում էր հայ թատրոնի հետագա ճակատագիրը:

Իր առաջ ունենալով ոռւսական թատրոնի փորձը, հայ թատրոնի գործիչներն առաջ էին քաշում ոչ միայն սեփական ոհմիսուրայի ստեղծման պահանջը, այլև ընդունում, որ «Հարկավոր է «նոր դպրոցով» դեկավարվող ոհմիսյոր»: «Նոր դպրոց» ասելով հասկանում էին ոռւս ոհմիսուրան, նրա գագաթը՝ Գեղարվեստական թատրոնը:

1911 թվին քննադատ Գ. Ամիրյանը «Բաքու» թերթում խոստովանում է, որ առաջ «անսամբլի բացակայությունը հանդիսանում էր հայ թատրոնի անխուսափելի նշանը: Բայց վերջինս Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ազդեցությունն արտացոլվել է հայ թատրոնի վրա ևս: Ծեմիսուրան, որ գրեթե հետին տեղն էր մղված հայերի մոտ, այժմ պիեսների բեմադրության մեջ գտել է իր տեղը»:

Հայ ոհմիսուրայի ստեղծման գործի ճշմարիտ ջատագովը դարձավ Օվի Սևումյանը, որ սերտորեն կապված էր Գեղարվեստական թատրոնի պրակտիկային, մասնակցել էր 1908—1909 թվականներին Մոսկվայում կայացած ոհմիսյորների համագումարին: Օվի Սևումանը անձնական ծանոթություն էր հաստատել Կ. Ս. Ստանիսլավսկու, Վ. Ի. Խվ. Նեմիրովիչ-Դանչենկոյի հետ, ուսումնասիրել էր Ստանիսլավսկու «սիստեմը», և կըրքուտ պրոպագանդ էր մղում հայ իրականության մեջ՝ ՄԽԱՏ-ի արվեստի համար: Հայ թատերական գործիչնե-

րի նոր սերնդի գլխավոր խնդիրն էր ստեղծել անսամբ-
լային ներկայացում, որ կարող էր մինչև վերջ և խորը
բացել գրամատիկական երկի գաղափարը: Խորապես
գիտակցելով գեղարվեստական անսամբլի հսկայական
նշանակությունը, պայքար մղելով հայ թատրոնում գրա-
հաստատման համար, Սևումյանն իրավացիորեն նկա-
տում էր, որ աշքի ընկնող գերասաններ, որոնք հոչակա-
վոր կարող են լինել ամեն մի բեմում էլ, հայ թատրոնն
այժմ էլ ունի՝ հանձինս Սիրանուշի և Արելյանի... Բայց
նրանք գեղարվեստական անսամբլին փոխարինել չեն
կարող¹:

Մինչումը ցիոն հայ թատրոնի ողջ պատմությունը
ցույց է տալիս, որ պրոֆեսիոնալ ռեժիսուրա ստեղծե-
լու պրոբլեմն այդպես էլ մնաց շուծված, շնայած
1900-ից 1920 թվականը երեան են գալիս առանձին
պրոֆեսիոնալ ռեժիսորներ: Ռեժիսուրայով էին գրադ-
վում ականավոր գերասաններ Հովհաննես Արելյանը,
Սիրանուշը, Օլգա Մայսուրյանը, Խասհակ Ալիխանյա-
նը և ուրիշներ: Հանդես էին գալիս պրոֆեսիոնալ ռե-
ժիսորներ ևս, որոնք գերասանական գործունեության
հետ միասին զբաղվում էին նաև ռեժիսուրայով: Նրան-
ցից էին՝ Ա. Արմենյանը, Ամո Խարազյանը: Նույն այդ
ժամանակամիջոցում ասպարեզ եկան պրոֆեսիոնալ ռե-
ժիսորներ, ինչպես օրինակ՝ Օվիլ Սևումյանը, Ստեփան
Քափանակյանը, Լևոն Քալանթարը:

1. Տե՛ս «Հուշարար», 1908, № 5, էջ 65:

Հայ թատրոնում պրոֆեսիոնալ ռեժիսյորների երեւան գալը, որքան էլ նպաստում էր թատրոնի զարգացմանը, չէր կարող արմատապես վերափոխել ազգային թատերական արվեստի սուհղծագործական ողջ պրակտիկան:

Իսկական իմաստով պրոֆեսիոնալ ռեժիսուրա հայ թատրոնում ստեղծվեց սովորական շրջանում միայն:

Հանդես եկավ սովորակայ պրոֆեսիոնալ ռեժիսորների մի ամբողջ պլիադա, որտեղ իր ուրույն տեղը գրավեց ուսպուրլիկայի ժողովրդական արտիստ Վավիկ (Անուշավան) Վարդանյանը:

1

Վ. Վարդանյանը ծնվել է 1900 թվականին Դուբա քաղաքում (այժմ Աղբեկջանական ՍՍՌ), ուսուցչի ընտանիքում: Պատաննեկության տարիներն անց է կացրել Դերբենդ քաղաքում՝ Կասպից ծովի ափին:

Ուսուցիչ Տիգրան Վարդանյանի ընտանիքը պատկանում էր հայ ինտելիցիանու այն ընտանիքների թվին, որոնք խորապես հետաքրքրվում էին գրականությամբ, արվեստով: Վավիկ Վարդանյանի քույրը՝ Խուզաննան, դեռ մանուկ հասակից հրապուրվում է արտասանությամբ, հանդես գալիս ընտանեկան երեկութներում:

Այն տարիներին, երբ հայ թատրոնին լրջորեն անհանգստացնում էր ռեժիսյորների բացակայությունը, երիտասարդ Վավիկ Վարդանյանն ապրում էր թատրո-

նով հափշտակվելու մի շրջան, երազում արտիստ գառնալու հեռանկարը: Վառ երևակայությունը պատանուն տեղափոխում էր թատերական բնմահարթակ, որտեղ, երևակայական հանդիսականի առաջ, նա հանդես էր գալիս մերթ ոռմանտիկ հերոսի կերպարով, մերթ՝ կըրքու սիրահարի, մերթ էլ՝ համաշխարհային վշտի ծանրության տակ կքած արքայազն Համլետի կերպարանքով: Եվ Կասպից ծովի կանաչավուն ալիքների ափին հաճախ կարելի էր տեսնել միայնակ նստած երիտասարդ Վավիկին, որ երազում էր թատրոնի կախարդական աշխարհի մասին, ուր ամեն ինչ այնպես գեղեցիկ է, վեհու բերկրալի: Բայց նախքան թատերական աշխարհի բերկրանքը ճաշակելը, Կասպիականի ալիքները տասնութամյա Վավիկին տարան հյուսիս՝ Աստրախան:

Պայթեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեպւլիուցիան, ապա նրան հաջորդեցին քաղաքացիական պատերազմի դժվարին տարիները: Սկսվեց կյանքի լուրջ փորձությունների շրջանը: Երազող պատանին բախվեց կյանքի ու նրա հիմքերը սասանող իրադարձությունների հետ: Եվ լուսավոր ապագայի պատանեկան անուրջներ ապրող երիտասարդը բոլորանվեր տրվեց այդ պագան կառուցելու գործին:

Կաղմակերպչական ընդունակությունները, եռանդը, և որ գլխավորն է, դեպի թատրոնն ունեցած սերը, երիտասարդ Վարդանյանին մղեցին զբաղեցնելու Հայկական գործերի կոմիսարիատի Աստրախանի բաժանմունքին կից զրամատիկական ստուդիայի վարիչի պաշտո-

նը: Դա 1918 թվականն էր: Այդ տարիներին Աստրախանում կուլտուրայի և պրոպագանդայի բաժնի վարիչ էր Հայկ Գյուլիքեվսյանը՝ հայ ռեռլյուցիոն ինտելիգենցիայի լուսավոր դեմքերից մեկը: Երկու տարի աշխատել է Վ. Վարդանյանը Հ. Գյուլիքեվսյանի ղեկավարությամբ, կազմակերպել բազմաթիվ ներկայացումներ՝ Աստրախանը սպիտակդվարդիականներից պաշտպանող բանակայինների ու բնակչության համար: Ս. Մ. Կիրովի կողմից ղեկավարվող Աստրախանի հոչակավոր պաշտպանության ժամանակ Վ. Վարդանյանը և իր հատուկ բանակի կազմի մեջ էր:

Պաշարված քաղաքը ծանր օրեր էր ապրում: Քաղցնությունները ամեն օր բազում մարդկային կյանքեր էին խլում: Բայց պաշարման օրերին Աստրախանի կուլտուրական կյանքը շմարեց: Շարունակում էին գործել կուլտուրական հիմնարկները, ներկայացումներ էին տրվում դրամատիկական ստուդիայի սիրողական ուժերով: Նոր հանդիսատեսի հետ շփվելով, երիտասարդ Վարդանյանն սկսեց կուահել, թե որն է թատրոնի իսկական ուժը: Երբեմնի երազանքը կախարդական հեքիաթի նմանող թատրոնի մասին պայթեց օճառի պղպջակի նման, և նա թատրոնի իսկական կոչումը տեսավոր թե զարդարված բեմահարթակներում ու գեղեցիկ հագնված պերսոնաժների շրջապատում, այլ ռազմիկների խստահայաց դեմքերին, որոնք հավաքվել էին նայելու հապճեալ պատրաստված ներկայացումը, որի մասնակիցները ամենից քիչ մտածում էին թատերական հարդարանքի:

մասին և բուռն կերպով փնտրում մարդկային անկեղծ զգացումներ։ Այսպես կատարվեց սովհետահայ թատրոնի ապագա գործչի՝ Վ. Վարդանյանի առաջին ստեղծագործական-մարտական մկրտությունը։ Իրոք մարտական էր այդ մկրտությունը, քանի որ դա տեղի էր ունեցել թշնամու արկերի որոտի ու պայմանական տակ, ուազմական շրջապատման պայմաններում։ Երիտասարդ թատերասերի այս յուրահատուկ մուտքը թատրոն ունեցավ իր առավելությունները և նրան վերջնականապես ու ընդմիշտ կապեց թատերական արվեստին։

1918—1920 թվականներին, Աստրախանում աշխատելուց հետո, Վ. Վարդանյանը տեղափոխվում է Հյուսիսային Կովկաս՝ Ստավրոպոլ, ուր նրա նախաձեռնությամբ հայկական թատրոն է կազմակերպվում։ Քսանամյա Վարդանյանը նշանակվում է նորաստեղծ թատրոնի ղեկավոր և գլխավոր ռեժիսոր։ Դա սովհետահայ պրոֆեսիոնալ առաջին թատրոններից մեկն էր։ Նույն այդ տարիներին Հյուսիսային Կովկասում կազմակերպվել էին ուրիշ հայկական թատրոններ ևս, որոնց ղեկավարում էին Վ. Վաղարշյանը և ուրիշներ։ Հետագայում այդ թատրոնների ստեղծագործող ուժերը քիչ դեռ շնորհին Սովետական Հայաստանում պիտական թատրոնի կազմակեպման գործում։

Այն ժամանակ, երբ Հայաստանում սովհետական կարգեր հաստատելու համար դեռևս պայքար էր մղվում՝ Հյուսիսային Կովկասում և աղատագրված Ռուսաստանի մի շարք քաղաքներում նորաստեղծ Սովհետական կազմակեպման գործում։

տական իշխանության հովանավորությամբ արդեն ըսկ-սել էին գործել հայ առաջին թատերախմբերը:

Հյուսիսային Կովկասի հայ թատերական խմբերի նշանակությունը իրոք մեծ է եղել: Փաստորեն այստեղ է ստեղծվել հայ սովետական թատրոնը, որի պատմությունը մինչև այսօր էլ հանիրավի «սկսում» են 1921 թվականից, այսինքն՝ այն օրվանից, երբ Սովետական Հայաստանում կազմակերպվեց առաջին պետական դրամատիկական թատրոնը (այժմ Գարդիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոն): Մինչդեռ սովետահայ թատրոնի պատմությունը սկսվում է հենց 1917-ից, այսինքն՝ այն ժամանակվանից, երբ ստեղծվել են առաջին հայ սովետական թատերական խմբերը Սովետական Ռուսաստանի տարբեր ծայրամասերում՝ Հյուսիսային Կովկասում թե Ղրիմում, Մոսկվայում թե Խարբեկովում:

Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ստեղծված Ազգությունների գործերի ժողովրդական Կոմիսարիատը Հոկտեմբերյան ռեռլյուցիայի առաջին իսկ օրվանից սկսեց կենսագործել Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականությունը:

Նշանակալից է այն փաստը, որ արդեն 1917 թվականի դեկտեմբերին Ազգությունների գործերի ժողովադատին կից ստեղծվեց Հայկական գործերի կոմիսարիատ, որն սկսեց զբաղվել հայ ժողովրդին դաշնակցականների ու իմպերիալիստական ինտերվենտների լծից ազատելու, Սովետական Ռուսաստանի սահման-

բոնը շրջում ու ներկայացումներ էր տալիս հայաբնակ վայրերում, մայրենի լեզվով ցուց տալիս հայ դրամատուրգների պիեսները:

Այստեղ, ստավրոպոլյան թատրոնում, Վ. Վարդանյանն առաջին անգամ գնում է ինքնուրույն բեմադրություններ, այստեղ էլ հենց սկսվում է Վ. Վարդանյանի ոհմիսյորթական գործունեությունը:


Նրա անմիջական զեկավարությամբ կազմակերպված ստավրոպոլյան հայկական թատրոնի ուսպերառար բաղկացած էր գլխավորապես հայ գրողների պիեսներից: Իր ստեղծագործական գործունեության ստավրոպոլյան երեք տարիների ընթացքում Վարդանյանն ունենում է ավելի քան տասը ինքնուրույն բեմադրություն, որոնց մեջ այնպիսի բարդ պիեսներ, ինչպիսիք են՝ Շիրվանղաղեի «Պատվի համարը», «Եվգինին», «Ավերակների վրան», «Զար ոգին»:

Ոհմիսյորի համար դժվար չէր բեմականորին բնութագրել դրամատուրգի առաջ քաշած կերպարները, որովհետև գրանց կենդանի նախատիպերին նա տեսել էր ու գիտեր ոչ միայն կյանքում, այլև մինչունույցիոն հայ թատրոնում, որ ստեղծել էր Շիրվանղաղեի դրամատուրգիայի բեմական մարմնավորման հիանալի արագիցիաներ: Հայ կլասիկ պիեսների բեմադրությունները գարձան ոհմիսյորթական առաջին դպրոցը երիտասարդ Վարդանյանի համար:

Ոհմիսյորական գործունեության հանապարհին արված առաջին իսկ քայլերը միաժամանակ պարզուց



Արթան («Նամուս»)



Մատին («Հասակում»)

սույց էին տալիս ընտրված պրոֆեսիայի ողջ դժվարությունը:

Մինչև թատրոնի ինքնուրույն զեկավարության անցնելը, Վ. Վարդանյանը հափշտակվել էր գերասանական ստեղծագործությամբ: Բայց երբ հարկ եղավ, որպեսզի երիտասարդ դերասանը կանգնի դերասանական մի ամսողը կոլեկտիվի գլուխ, երբ ամենօրյա կյանքը ստիպում էր մտածել ամբողջական ներկայացում ստեղծելու մասին, որից սպասվում էին մեծ մտքեր ու զգացումներ, Վ. Վարդանյանը հասկանում էր, որ առանց լուրջ, պրոֆեսիոնալ պատրաստականության, անհնար է ժամանակակից թատրոն զեկավարել:

Նոր կյանքը առաջ էր քաշում իր պահանջները, հանդիսականներն այլևս չեին կարող բավարարվել սիրողական ներկայացումներով: Թատրոնը դառնում էր դաստիարակության լիաբժեք պարոց, մտնում էր կուսավորական ժողովրդական Կոմիսարիատի հիմնարկներից ցանցի մեջ, և նրանից լուրջ աշխատանք էր պահանջվում: Վ. Վարդանյանը շուներ ո՛չ թատերական արվեստի լուրջ դիտելիքներ, ո՛չ էլ մեծ պրակտիկա՝ սկսած գործը շարունակելու համար:

Գիտակցելով թատրոնի կարեոր դերը, մեծ դժվարությունների հարությունը թատերական արվեստի «գաղտնիքները» բացելու ճանապարհին, Վարդանյանը համոզվեց, որ իրեն անհրաժեշտ է սովորելու գնալ: Նա մեկնում է Մոսկվա՝ ուսանելու: Ել 1923—1925 թվականներին Վարդանյանը սովորում է Ռ. Ն. Սիմոնովի

ղեկավարած հայկական դրամատիկական ստուդիա-
յում:

Դժվար է գերագնահատել Ծուբեն Սիմոնովի ստու-
դիայի դերը սովետահայ թատրոնի հիմնադրման գոր-
ծում: Այդ ստուդիայի պատերի ներսում նոր թատրոնի
ապագա վարպետներին սովորեցնում էին թատերական
արվեստի հիմունքները, նրանց մեջ սեր ներարկում գե-
պի թատրոնը, նրանցից պատրաստում էին ինքնուրուցն
ձևով մտածող բեմի արվեստագետներ: Այստեղ թատե-
րական արվեստի մասին դասախոսություններ էին՝ կար-
դում և ստեղծագործական զրույցներ անցկացնում բհմի
ականավոր վարպետներ Յու. Զավադսկին, ի. ի. Ռապ-
պապորտը, Ռ. Ն. Սիմոնովը և ուրիշներ: Ուսուցումը
ստուդիայում ընթանում էր Ստանիսլավսկու սիստեմով,
որն իր բուն ծաղկման այդ շրջանում նոր ուղիներ էր
բացում բեմական ստեղծագործության գաղտնարան-
ներում:

Ռ. Սիմոնովի ստուդիայում ուսումնառության տա-
րիները նշանակալից էին նաև նրանով, որ Վ. Վարդան-
յանը առաջին անգամ տեսնում էր աշխարհի հռչակավոր
թատրոնները՝ Փոքր թատրոնը և Գեղարվեստական թատ-
րոնը: Այստեղ, հափշտակված Գեղարվեստական ու
Փոքր թատրոնի պիեսների բեմադրություններով, Ե.
Վախթանգովի նախկին ստուդիայի ներկայացումներով,
Վավիկ Վարդանյանը տեսնում է, թե որքա՞ն տարրեր
էին դրանք այն երազանքներից, որ նա փայփայել էր
պատանի հասակում:

Այժմ Վարդանյանն այդ բոլորն ընկալում էր լրջորեն, տեսնում էր իսկական վարպետություն, ձգտում տիրել թատրոնի գաղտնիքներին:

Բայց ինչպես հասնել դրան: Այս հարցը դարձավ զլխավորը երիտասարդ ռեժիսորի համար, իսկ դրա պատասխանն անհնար էր իսկույն գտնել: Սկսվեցին ուսումնառության տարիները՝ ուսումնառություն ոչ միայն ստուդիայում, այլ գործնականում: Տեղեկանալով, որ Կ. Ս. Ստանիսլավսկին դասախոսություններ է կարդում հրեական ստուդիայում, Վ. Վարդանյանը վճռում է անպայման լսել նրա ստեղծագործական գրույցները: Այստեղ նա առաջին անգամ տեսավ Կ. Ս. Ստանիսլավսկուն, լսեց նրա գերող գրույցները թատերական արվեստի վերաբերյալ: Բեմի մեծ ռեժիսորմատորի դասախոսությունները երիտասարդ ռեժիսորին ստիպեցին լըրջորեն խորհնել իր ստեղծագործության հետագա ուղիների մասին:

Այդ տարիներին Մոսկվայի թատերական կյանքը շատ էր խայտարղետ: Հատկապես բազմազան էին այսպիսի կոչված ստուդիական թատրոնների տեսակները, որոնք տարբեր ստուդիական անուններով ասպարեզ էին բերում իդեական-գեղարվեստական տարբեր հայացքներ, մերժում կամ հաստատում էին այսպիս կոչված ակադեմիական թատրոնների գրաված դիրքերը:

Տարբեր ստուդիաների եռուն գործունեության այս պայմաններում երիտասարդ Վ. Վարդանյանի համար հեշտ չէր կողմնորոշվել: Այդ ստուդիաների ներկայա-

յումները հանդես էին բերում իրարամերժ գեղարվեստական սկզբունքներ: Մի մասը ոեալիստական արվեստ էր սովորեցնում, մյուսները փորձում էին «նոր արվեստ» ստեղծել, բացեիրաց հակադրվելով Գեղարվեստական թատրոնին: Ավելի ակտիվ հանդես էին գալիս ֆորմալիստական ստուդիաները՝ ն. Ֆորեհգերի «Աղատ արվեստանոցը», Բ. Ֆերդինանդովի «Փորձնական-հերոսական թատրոնի արվեստանոցը», «Եքսցենտրիկ դերասանի ֆաբրիկա» (ֆեկս) և «Մշեղելովի անվան իմպրովիզացիայի ստուդիան»: Բավական է հիշել, որ այդ ստուդիաներում բեմական արվեստի ամենաբարձր ըսկըզբունքն էր «զուտ ժամանակակից կինեմատոգրաֆիական ամերիկանիզմը և հաղթանակող տրյուկը, ըստ որում ամեն մի հոգեբանության հարկավոր է լոկ որպես գործող անձանց արարքների ազատ հիմնավորում միայն»¹:

Հակասություններ կային Ռ. Ն. Սիմոնովի նորաստեղծ ստուդիայի աշխատանքներում ևս, ուր սովորում էր Վ. Վարդանյանը: Չնայած առանձին տատանումներին, այդ ստուդիայի գործունեությունը, նրա զարգացումը ընթանում էր ոեալիզմի ուղիով:

Սակայն շափազանց բարդ և հակասական էր թվում այն ժամանակ բեմական ոեալիզմի հարցը: Այն տարիներին, երբ Վ. Վարդանյանը ստանում էր իր պրոֆե-

¹Տե՛ս Յակով Անուշկինի Հոդվածը «Театр и студия» ամսագրում, 1922, № 1—2.

սիոնալ կրթությունը, Մոսկվայում աշխատում էին ստեղծագործական ամենատարբեր նախասիրությունների թատրոններ. ՄևԱՏ-ը, Փոքր թատրոնը, Վ. Վախթանգովի անվան թատրոնը, Վ. Մեյերխոլդի անվան թատրոնը (*ՏԻՄ*), Կամերային թատրոնը, ԳուսեՏ (Հրեական թատրոնը), այսպես կոչված երիտասարդ բանվորների թատրոնները (*ՏՐԱՄ*) և այլն: Այդ թատրոններից յուրաքանչյուրը ուներ իր հասկացողությունը բեմական ռեալիզմի մասին: Հայ երիտասարդ ռեժիսորը Ստանիլավսկու զրուցներից հետո դիտեց Մեյերխոլդի թատրոնի ներկայացումները, Փոքր թատրոնի տրադիցիոն բիմադրություններից հետո հափշտակվեց Վախթանգովի անվան թատրոնի «Արքայադուատր Տուրանդու»-ով: Դա իսկապես թատերական հոսանքների բուռն ծաղկման շրջանն էր, երբ յուրաքանչյուր ուղղություն ձգտում էր որքան հնարքավոր է համոզիչ ձևով ապացուցել իր գեղարվեստական դիրքերի ճշտությունը:

Թատերական իրարամերժ հոսանքների գաղափարական աստառը հասկանալ, երիտասարդ Վարդանյանն, իհարկե, այն ժամանակ չէր կարող: Նա տեսնում է ընկալում էր թատերական ներկայացում ստեղծելու այլազան մեթոդներ, հազորդակից լինում ռեժիսուրայի ամենամեծ վարպետների պրակտիկային, որոնք նոր ուղիներ էին հարթում համաշխարհային թատերական արվեստի պատմության մեջ:

Կիսապրոֆեսիոնալ սիրողական ներկայացումներից հետո, որոնք Վարդանյանը տեսել էր Հյուսիսային Կով-

կասում, 20-ական թվականների թատերական Մոսկվան իսկական ստեղծագործական ակադեմիա էր սկսնակ ուն-ժիսյորի համար: Հենց այստեղ ձևավորվեց ապագա ռե-ժիսյորի ստեղծագործական խառնվածքը, այս շրջանում էր, որ նա սկզբունքորեն գտավ գեղարվեստական այն պլատֆորմը, որից հետագայում այլևս չբաժանվեց:

Եվ որքան էլ խայտարկետ լիներ Մոսկվայի թատե-րական հոսանքների քարտեզը, երիտասարդ Վարդանյա-նին ձգում էր Գեղարվեստական թատրոնի դպրոցը, Ստանիսլավսկու սիստեմը:

Մեծիսյորական արվեստի ասպարեզում քիչ «սիս-տեմներ» չկային այն ժամանակ, որոնց ստեղծողները իրենց ղեկավարած թատրոնների միջոցով պրակտիկո-րեն ցուցադրում էին իրենց ուսմունքը:

1922 թվականից սկսած Վանոլոդ Մեյերխոլդը թե տեսականորեն, թե գործնականում նորագույն մտքեր էր դեկլարացիա անում ունիսուրայի ասպարեզում: Նրա սկզբունքը ևս հակադրվում էր Ստանիսլավսկու ուս-մունքին: Այնպիսի բեմադրություններում, ինչպիսիք են «Մեծահոգի եղքերակիրը», «Մանդատը», «Վարժապետ Բուրուսը», «Ծառացող հողը», Մեյերխոլդը փայլուն կեր-պով հաստատում է իր ստեղծագործական դիրքերը, որոնք արտաքուստ շատ քիչ ընդհանուր բան՝ ունեին Գեղարվեստական թատրոնի հետ:

Մեյերխոլդի ստեղծագործությունը ժխտվեց ու բա-ցասվեց միայն հետագա տարիներին, եղան մեծ արվես-տագետը հանիչավի դուրս մղվեց ասպարեզից և դա-

տապարտվեց: 1920-ական թվականներին և 30-ական թվականների սկզբին մեյերխոլդյան ուղղությունը թատրոնում ուներ ոչ միայն մեծ ընդունելություն, այլև վայելում էր գաղափարական վստահություն:

Այժմ՝ անհատի կուլտի հետևանքները հաղթահրելոց հետո, հնարավոր դարձավ օրյեկտիվությունները, որոնք անհիմն ու գլխովին ժխտվում էին: Մեյերխությունը նորից ներկայացավ իր իսկական կերպարանքով՝ իրու սովորական թատրոնի ամենատաղանդավոր և անհանգիստ գործիչներից մեկը:

Չի կարելի ասել, որ հայկական դրամատիկական ստուդիայի սաները քիչ բան են սովորել Մեյերխոլդի արվեստից: Ժամանակին մեծ արվեստագետին մեղադրեցին այն բանում, թե նա անտեսում է դերասանական արվեստը, դերասանին: Մեյերխոլդի թատրոնը «ռեժիսորական» հայտարարելով՝ որոշ թատերագետներ փաստորեն աղավաղում էին նրա մտքերը: Իսկ ինքը՝ Մեյերխոլդը, ասել է, թե այսպես կոչված «ռեժիսորական» թատրոնը ոչ այլ ինչ է, քան դերասանական թատրոն՝ գումարած ընդհանուր կոմպոզիցիայի հմտությունը: «Զեք գտնի այնպիսի ռեժիսոր, — եթե իսկական ռեժիսոր է, անշուշտ, — որն իր արվեստը ավելի բարձր դասի դերասանի շահերից, երբ վերջինս թատրոնի գլխավոր դեմքն է: Ռեժիսորայի վարպետությունը, միջանցենի կառուցման արվեստը, լուսի ու երաժշտության հերթագայումները — այս բոլորը պետք է ծառայեն ա-

կանավոր, բարձրորակ դերասաններին», — ահա թէ ինչ
է դավանել Մեյերխոլդը: Ապագա հայ ռեժիսյորները,
որոնք այն տարիներին հնարավորություն են ունեցել
դիտել Մոսկվայի խայտարդետ թատերական կյանքը,
անշուշտ, նախընտրելով Ստանիսլավսկու դպրոցը, իր-
բեք չեն անտեսել այն լավը և ուսանելին, որ տեսել են
ուրիշ թատերական ուղղությունների ստեղծագործական
կյանքում:

Քիչքան չեն տեսել հայկական դրամատիկական ստու-
դիայի սաները, նրանց թվում և Վալիկի Վարդանյանը,
Թայիրովի Կամերային թատրոնում, ուր ռեժիսյորական
արվեստը, հատկապես թատերական նկարչությունը,
հանձին Գևորգ Յակովլովի, իսկապես բարձր մակարդա-
կի վրա էին գտնվում:

Մոսկվայի հայ դրամատիկական ստուդիան, նրա-
երիտասարդ սաները լայն հնարավորություններ են ու-
նեցել հազորդակից լինելու սովորական թատրոնի լա-
վագույն վարպետների ինքնատիպ արվեստին: Այդ մա-
սին լավ է արտահայտվել գրող Կարեն Միքայելյանը:
«Գտնվելով թատերական համաշխարհային արժեք ներ-
կայացնող մի այնպիսի կենտրոնում, ինչպիսին Մոսկ-
վան է, — ասում է նա, — հայ դրամատիկական ստու-
դիան կարողացել է սպունգի պես ծծել թատերական ար-
վեստի զանազան ուղղություններից այն ամենը, ինչ որ
արժեքավոր է, խուսափելով կույր հետևողականությու-
նից: Նա կրում է ազգեցությունը Գեղարվեստական թատ-
րոնի լրջության, Մեյերխոլդի հեղափոխականության,

Թայիրովի կլասիցիզմիւ Զունենալով այդ բոլորից և ոչ
մեկի ծայրահեղությունը՝ նա ունի ինքնարժեք մեծու-
թյուն դառնալու գրավականը¹:

Վավիկ Վարդանյանը Մոսկվայում ուսանում էր այն-
պիսի մի հետաքրքիր ժամանակաշրջանում, երբ չնայած
թատերական ուղղությունների բազմազանությանը, ա-
մեն մի թատրոն, ամեն մի վարպետ ձգտում էր հաս-
տատել իր ինքնուրուցն արվեստը: Ստանիսլավսկու ա-
շակերտ Վախիթանգովը մինչ այդ արդեն կարողացել էր
յուրովի զարգացնել իր ուսուցչի սիստեմը և ստեղծել
այնպիսի ներկայացում, ինչպես «Արքայադուստր Տու-
րանդուստը», որը նման չէր Գեղարվեստական թատրոնի
աշխատանքներին:

Հենց ստուդիայի պատերի ներսում էլ, ուր սռվորում
էր Վ. Վարդանյանը, ուժեղ էր ժամանակակից թատերա-
կան հոսանքների ազդեցությունը:

Հայկական դրամատիկական ստուդիայի ղեկավար
Ռ. Ն. Սիմոնովը պատմում է, թե «Վախիթանգովին հու-
զում էր իր ստուդիայում Ստանիսլավսկուց և Մեյերխոլ-
դից եկող թատերական կուլտուրայի փորձն օգտագոր-
ծելու միտքը: Նա երազում էր այնպիսի մի ներկայա-
ցում, ուր իրար պիտի բախվեին Ստանիսլավսկին, Մե-
յերխոլդըն ու Վախիթանգովը: Ես, Վախիթանգովի այդ միտ-
քըն բնէալում էի իրեն թատրոնը, ժամանակակից թատ-
րոնի կուլտուրան սինթեզող ներկայացման միջոցով նրա

¹Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, 9 օգոստոսի:

վարպետությունը հարստացնելու ձգտում, ուր հանուն ամբողջական թատրոնի կուլտուրական վերելքի պիտի շնչվեին այս կամ այն թատրոնի «պարտիական» պատշաճնելիությունները»¹:

Հենց այն շրջանում, երբ Ռ. Սիմոնովը զբաղվում էր ստուդիայում սովորող հայերով, նա ինքը գտնվում էր Վախթանգովի, Մեյերխոլդի (որ անձամբ պարապում էր Ռ. Սիմոնովի հետ) ստեղծագործական ազգեցության տակ: «Երկու տարի առանց եվգենի Բագրատիոնովիցի, —հիշում է Ռ. Սիմոնովը, —մեզ համար շփոթի, մեր ուժերի նկատմամբ անվտանգության դժվարին տարիներին, Մեյերխոլդը մեր մեջ եռանդ ու ցանկություն արթնացրեց ապրել արվեստով, ոեժիսցորական երևակայության հարուստ նյութ տվեց և կոնկրետացրեց թատրոնի աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր»²:

Ստուդիայի ղեկավարի այս տրամադրություններն, անկասկած, ազդում էին նաև ուսման ծրագրի վրա, որով ղեկավարվում էին ստուդիայի ուսանողները:

Եվ, չնայած այս ամենին, Վ. Վարդանյանը շատ ամուր կապվում է Ստանիսլավսկու դպրոցին, հափշտակությամբ հետեւում է նրա զրուցներին ու գործունեությանը, Գեղարվեստական թատրոնի ստեղծագործության մեջ տեսնելով իրեն հարազատ ուղղությունը: Այս-

¹ «Советский театр» (журнал), 1932, № 10—11, էջ 30:

² Նույն տեղ, էջ 31:

պես, հենց այս տարիներին է, որ Վ. Վարդանյանը ընտրում է Ստանիսլավսկու ուսմունքով զեկավարվող ռեժիսորական ուղին և հետագայում էլ հետեւում դրան՝ առանց տատանումների, առանց այլևայլ ուղիներ փընտրելու ռեժիսորայի մեջ:

Բայց ՄԽԱՏ-ի դպրոցին հարելը Վ. Վարդանյանին չմղեց ռեժիսորայի մեջ բոլոր մյուս ուղղությունները ամբողջովին ժխտելու ուղին: Ընդհակառակը, Վ. Վարդանյանը Մեյքերխոլդին ու Թահիրովին միշտ էլ համարել է ռեժիսորայի մեծագույն վարպետներ, չնայած սկզբունքորեն չի ընդունել նրանց ոճը:

Մոսկովյան ստուդիայի ուսումնառության տարիները հայ թատրոնի երիտասարդ գործչին հնարավորություն տվին ոչ միայն գտնել իր ստեղծագործական ուղին, այլև ստանալ թատերական արվեստի պատմության և տեսության գիտելիքներ: Պրոֆեսիոնալիզմի զգացումը այլևս առաջատարը դարձավ Վ. Վարդանյանի գործունեության մեջ, մի ռեժիսոր, որ նախաձեռնողը դարձավ Սովետական Հայաստանում դրամատիկական ստուդիա կազմակերպելու, իսկ հետագայում թատերական բարձրագույն հաստատություն հիմնելու պատվավոր գործում:

Մոսկովյան ստուդիան վերջացնելուց հետո Վ. Վարդանյանը մեկնում է Թիֆլիս և ներգրավվում հայկական պետական թատրոնի խմբի մեջ:

Դերասանական գործունեությունը Վ. Վարդանյանն սկսել է 1918 թվին: Մինչև Մոսկվա սովորելու մեկնելը նա խաղացել է բազմաթիվ դերեր, դրանցից են՝ Սեյրանը («Նամուս»), Սուրենը («Պատվի համար»), Ալավերդյանը («Եվգինե»), Բոշյանը (Լ. Մանվելյանի «Բժիշկ Բոշյան»), Յասոնը («Մեղեա») և այլն: Երիտասարդ դերասանն իր այդ առաջին դերակատարումներում ոչընշով շեր զարմացնում հանդիսականին, բացի գեղեցիկ արտաքին տեսքից: Հատկապես գրավիչ է եղել նրա Սեյրանը: Արտիստական գեղեցիկ արտաքինը, կրակոտ խառնվածքը՝ առաջին իսկ հայացքից զարմացնում էր հանդիսականին: Բայց սիրողի անփորձությունը, վարպետության պակասը իսկույն կոտրում էր տպավորությունը: Հոգերանական խորություն չունեին Վարդանյանի առաջին հերոսները: Եվ դա բնական էր, որովհետև բեմահարթակ բարձրանալով, երազանքներով տարված երիտասարդն ամենից առաջ մտածում էր զգեստափոխման կախարդական աշխարհի մասին, ուր ամեն ինչ գեղեցիկ էր ու գրավիչ: Հերոսների ներքին դրաման դեռ շեր հասնում անփորձ պատանու սրտին, և նա ամբողջապես հմայված էր «թատրոն» խաղով և ոչ թե բեմահարթակի վրա ներկայացվող կյանքով:

Առաջին դերերը օգնեցին Վարդանյանին մոտիկից ծանոթանալու թատրոնի «խոհանոցին», հաղորդակից դառնալու այն աշխարհին, ուր պիտի հոսեր նրա հետագա կյանքը:

Վ. Վարդանյանի գերասանական գործունեության ավելի հասուն շրջանն սկսվում է 1925 թվականին, Թիֆլիսի հայկական թատրոն ընդունվելու տարուց: Ինչպես շատ երիտասարդ գերասանների, Վ. Վարդանյանին ևս գրավում հն այն հերոսների կերպարանքները, որոնք բեմ են դուրս գալիս գեղեցիկ զգեստներով, իրենց շըրշապատող աշխարհը անխնա քննադատողի գերում:

Դրան նպաստում էր նաև արտիստական ընդգծված արտաքինը, հանուն որի շատ ռեժիսորներ հաճույքով հերոսների գերեր էին տալիս նրան: Այսպիս, առաջին իսկ թատերաշրջանում (1925—1926) Վ. Վարդանյանը, Թիֆլիսի թատրոնում խաղում է Արթուր Ռիվարեսի դերը, «Բուռում», Կասիո՛ «Օթելլոյում», Լաերտ և Ֆորտինբրաս՝ «Համլետում», Սուրեն՝ «Պատվի համարում», Մեյրան՝ «Նամուսում»:

Այս կերպարներն արդեն տարբերվում էին տասնութամյա Վարդանյանի վաղ շրջանի գերակատարումներից: Այսուղեղ զգացվում էր գերասանի ձգտումը՝ թափանցելու հերոսների նիրքնաշխարհը, իմանալու և հականալու, թե նրանք ինչ են մտածում, ինչու հենց այդպիս են վարվում և ոչ այլ կերպ:

Թիֆլիսի հայկական թատրոնում աշխատելու առաջին իսկ տարում Վարդանյանը հանդիս է գալիս սովետական դրամատուրգների պիեսներում ևս: Ա. Լունաշարսկու պիեսում նա ստեղծում է Վալերիի կերպարը, Շշեգլովի «Բուրում»՝ Հենրիի գերը, սովետահայ դրամատուրգիայում կատարում է Ռևուլյոն, Սաղաթելյան,

«Մի կտոր հողի համար») և Զորապետի (Դ. Դեմիրճյան, «Քաջ Նազար») դերերը:

Հաջորդ տարիներին, Թիֆլիսից Երևան փոխադրվելուց հետո, Վարդանյանը բազմացնում է սովետական դրամատուրգիայի բեմական կերպարները՝ հանդես գալով Վինչենցիո (Ֆուրմանով, «Խոռվություն»), Կազուխինի (Լեհտին, «Դատավճիռ»), Նեմցելիշի (Գլեբով, «Ինքա»), Կոմիտեշիկի (Վիշնևսկի, «Առաջին հեծելազոր»), Բոբրովի (Աֆինոգենով, «Աճը»), Մեշիկի (Ֆադեև, «Ջախջախում»), Կոստյայի (Շկվարկին, «Ուրիշի երեխան»), Արկադիի (Կորնելյովիկ, «Պլատոն Կրեչետ») դերում:

Սովետական դրամատուրգիայի կերպարների վրա կատարած աշխատանքը օգնեց արտիստին ավելի լավ ճանաչել շրջապատող իրականությունը, դերի վրա աշխատելու փորձ կուտակել:

Վարդանյանի դերասանական խառնվածքը ձևավորվել է նաև սովետահայ դրամատուրգիայի բեմական կերպարների ստեղծմամբ, որոնք ավելի մոտ էին և ավելի հասկանալի հայ դերասանին: Նա ստեղծում է Ստեփանի և Ժորժի հետաքրքիր կերպարները Շիրվանդաղեի «Մորդանի խնամին» կոմեդիայում, Վարժապետի կերպարը Վաղարշյանի «Օղակում» պիեսում: Ուշագրավ կերպարներ են եղել գյուղսովետի նախագահը (Հախոսմյան, «Թշնամի»), Զոտովը (Վաղարշյան, «Նավթ»), Շիմատովը (Դ. Դեմիրճյան, «Ֆունֆորային շող»), Նապոլեոն Կորկուտյանը (Դեմիրճյանի նույնանուն պիեսում), Կա-

պիտան Խորենը (Գուլակյան, «Արշալույսին»), Մհարոպ-
յանը (Դեմիրճյան, «Կապուտան») և այլն:

Ուստի և հայ սովետական դրամատուրգիայի կերպար-
ների այս խայտաբղետ շարքը դերասանին ոչ միայն ծա-
նոթացրեց ժամանակակից կյանքի հետ, այլև բազմա-
զան դարձրեց նրա խաղացանկը, ջարդեց «ամպլուա»
տրադիցիոն հասկացողությունը։ Հերոսների դերեր կա-
տարելու հետ միասին Վ. Վարդանյանը հանդես է գալիս
րացասական կերպարների դերերում։ Դերասանի ստեղ-
ծագործական ներկապնակի հարստացումը օգնեց նրա
ստեղծագործական աճին, հնարավորություն տվեց
փնտրել և գտնել կերպարների նոր ու թարմ բնիմական
լուծումներ։

Կլասիկ խաղացանկում Վ. Վարդանյանը խաղում է
Զվեզդիչ («Դիմակահանդես»), Գրացիան («Վենետի-
կի վաճառականը»), Բարոն, Սատին և Դերասան («Հա-
տակում»), Մոլցալին («Խելքից պատուհաս»), Սամսոն
(«Պեպո»), Վիշնեսկի («Եկամտավոր պաշտոն»), Բանքո
(«Մակբեթ»), Կոմս Ալմավիվա («Ֆիգարոյի ամուսնու-
թյունը»), Բորիս և Տիխոն («Ամպրոպ»), Պրեզիդենտ
(«Սեր և խարդավանք»), Կլավդիոս («Համլետ»):

Այս բազմաթիվ դերակատարումների մեջ հատկա-
պես աշքի են ընկնում Սեյրանը, Կոմս Ալմավիվան, Բո-
րիսը, գորկիական կերպարները, իսկ սովետական դրա-
մատուրգիայում՝ Գեննադին և Արկադին։

Սեյրանի դերին Վ. Վարդանյանը վերադարձել է քա-
նիցս։ Ամեն անգամ նույն կերպարին անդրադառնալիս

դերասանը յուրահատուկ կողմեր, նոր երանգներ էր գտնում, որոնք խորացնում էին այդ բարդ գերի մեկնաբանությունը։ Եիրվանդադեի «Նամուսը» հայկական բեմ էր բարձրանում բավական հաճախ, և գլխավոր գերի բազմաթիվ կատարողների մեջ Վարդանյանը լավագույնն էր։ Դերասանն առանձնահատուկ մի ուժով ընդգծում էր Սեյրանի սիրո ուժը։

Անվիճելի է, որ Սեյրանի բոլոր դերակատարների մոտ դեպի Սուսանն ունեցած սիրո զգացումը ցայտուն է արտահայտվել, որովհետև դա ընդգծված է նաև դրական կերպարում։ Բայց ի տարբերություն ուրիշների, Վարդանյանը հերոսի այդ զգացումը շափաղանցրել, հասցրել է մոլեռանդության։ Որբ հայտնվում էր Սուսանը, Վարդանյանի Սեյրանը մոռանում էր ամեն ինչ, ասես ոչ ոքի չէր նկատում։ Նրա աշքի առաջ կանգնում էր սիրած աղջիկը, իսկ մնացած ամեն ինչ աղոտանում էր, կորշում։ Եվ քայլում էր բեմի վրա Սեյրան-Վարդանյանը կախարդվածի նման, ասես հանդիսականի առաջ շամախեցի մի պատանի չէր, այլ հեքիաթային հերոս, որին կարելի է հանդիպել միայն հիասքանչ երազում, որովհետև կյանքում մարդիկ այդպես չեն լինում։ Ամեն ինչ մի կողմ էր դնում գերասանը և համայնապարփակ դարձնում Սեյրանի մոլեռանդ սերը։ Զնայած Սեյրան-Վարդանյանը հագնում էր չերքեզկա, գոտու մեջ փայլում էր դաշույնը, բայց այդ ամենը թվում էր ավելորդ ու անկարևոր, որովհետև, բեմում գործում էր ասես ոչ

թե իրական սիրահար պատանին, այլ կենցաղային բնուրոշումից զերծ լեզենդար մի հերոս:

Կերպարի նման մեկնաբանման հիմքում ընկած էր ոչ այնքան իր՝ Սեյրանի, որքան, և դա գլխավորն է՝ նրա սիրո առանձնահատուկ լինելու միտքը։ Առանձնահատուկ, գերբնական, մոլեռանդ սեր, այսպես էր հասկանում Վարդանյանը Սեյրանի կերպարի լեյտմոտիվը, և դերասանն ամեն մի մանրամասնի մեջ ընդգծում էր այդ։ Դա տրադիցիոն հերոս-սիրահարի կերպարի օրիգինալ, թարմ լուծումն էր, որ թույլ էր տալիս դերասանին ողբերգական հնշեղության հասցնել հերոսի դրաման։ Եվ դա ոչ միայն խորացնում էր ողջ ներկայացման իդեական նշանակությունը, այլև ճիշտ բացատրում Սեյրանի այն արարքները, որոնք միշտ հակասական ըզգացմունքներ են ծնում հանդիսականի կամ ընթերցողի մեջ։

Եթե Սեյրանի կերպարի լեյտմոտիվը բացում էր նրա բացառիկ սիրո թեման, առա ողջ ներկայացման գաղափարը օրգանապես և անխոսափելիորեն փոխվում էր. այդ սերը բացառիկ է, այո՛, բայց նման սերն անգամ գոյության իրավունք չունի այդ ահավոր իրականության պայմաններում։ Եթի կործանվում է թույլ զգացումը, դեռ կարելի է մտածել, թե ուժեղ լինելու դեպքում կարող էր դիմանալ կյանքի հարվածներին, բայց երբ կործանվում է գերբնական ուժի այդ սերը, ապա մնում է համոզվել, որ այդ անարդար աշխարհում ոչ մի սեր, ոչ մի մեծ զգացում չէր կարող ապրել։ Այսպես, սիրո բացառիկու-

թյունն ընդգծելու միջոցով Սեյրան-Վարդանյանը հասել
է ողջ ներկայացման գաղափարը խորացնելուն։ Գտնը-
ված ճիշտ բանալին դերասանին հնարավորություն է
տվել հետաքրքիր ձևով պատճառաբանել նաև Սեյրանի
այնպիսի արարքը, ինչպիսին սիրած աղջկան զրադար-
տելն է։ Եվ իրոք, ինչպի՞ս արդարացնել Սեյրանի այդ
արարքը, և հնարավո՞ր է արդյոք արդարացնել։ Թերևս
Սեյրանի դերակատարներից ոչ մեկին չի հաջողվել այդ՝
ո՛չ մինչև Վարդանյանի կատարումը, ո՛չ էլ նրանից հե-
տու։ Վ. Վարդանյանը մատուցում է իր լուծումը, որ թեև
վիճելի է, բայց զուրկ չէ ներքին տրամաբանությունից։
Սեյրանը բացառիկ զգացման մարմնացումն է, նա նման
չէ ոչ մեկին, նրա սերը չի ենթարկվում բանականության,
նա պատրաստ է դիմել ամեն մի քայլի՝ հանուն իր ջեր-
մեռանդ սիրու։

Այն, ինչ նա ասում է Ռուստամին, դա հոգեկան ան-
ասելի տառապանքի հետևանք է, որ նրան մերթ մինչև
երկինք է հասցնում, մերթ անդունդ գլորում։ Աներե-
վակայելի է Սեյրանի սիրո ուժը, բայց աներևակայելի
է ատելության ուժը նույնպես։ Սեյրանը ծայրահեղու-
թյունների մարդ է, չկա միջինը, չկա նորմա, այլ կա
թոփշք և անկում։ Նման մարդը միայն կարող է այդպիս
սիրել, նման սերը միայն կարող է մարդուն հանել «նոր-
մալ» վիճակից և մղել դեպի այն, ինչ «նորմալ» մարդը
չպետք է աներ։ Սեյրանի բնավլորություննը հակադիր
զգացումների, ծայրահեղ հակասությունների միասնու-
թյունն է։ Դա անհավասարակշուրջան արտահայտու-

թյուն չէ, այլ բացառիկ զգացման, որ մղում է հերոսին ուրիշ ճանապարհ: Վ. Վարդանյանն այսպես էր մեկնաբանում Սեյրանի կերպարը:

Հերոսի ճակատագրի մեջ դերասանը բացել է հետամնաց իրականության մեջ ապրող երիտասարդ մարդու կերպարը, որի գեղեցիկ իրազները փշրվում են ֆեղալական սոսկալի նախապաշտումների ժայռերին բախվելով: Մաքուր սիրո անհագ ծարավ և շրջապատի իրականության պատճառով այդ սիրո անմարդկացին ջախջախում՝ ահա թե ինչ է պատմել Վարդանյանի Սեյրանը:

Բոլորովին ուրիշ բնավորություն է բացել դերասանը «Ամպրոպ» ներկայացման մեջ Թորիսի դերում: Գեղեցիկ, բայց անվճռական, հմայիչ, բայց անկամ,— այսպիսին էր Թորիս-Վարդանյանը: Այստեղ ևս դերասանը օգտագործում է կերպարի բնավորության իրարամերժ կողմերի հակադրությունը:

Հայտնվելով բեմում, Թորիս-Վարդանյանը թողնում է մի մարդու տպավորություն, որին շատ է ճանձրացրել պրովինցիալ քաղաքի կյանքի միօրինակությունը: Մարդկանց հետ անբռնազբոս վարվեցողությունը, ընդգծված ինտելիգենտ արտասանությունը, փոքրինչ համարձակ վարվելաձեր և նույնիսկ շափից ավելի մաքուր արտաքինը, այս ամենը ոչ մի կերպ չէր համապատասխանում իրոք որ այն ճանձրակի շրջապատին, ուր ակամա ընկել էր նա: Ճիշտ է, Վարդանյանի Թորիսը անկեղծորեն հրապուրվում է Կատերինայով, բայց դա փոքրոգի մարդու

անկեղծություն է, որին նա կարող է անձնատուր լինել այնքան ժամանակ, քանի դեռ զոհաբերություն չի պահանջվում։ Վարդանյանը Բորիսի այս վարքագիծը բեմականորեն լուծել է միանգամայն ուրուն ձեռվ։ Երբ հանդիպում էր Կատերինային, նրա հայացքում մերթընդ մերթ երկյուղ, լարվածություն էր արտացոլվում։ Մերթ գողի նման զննում էր չորս բոլորը, մերթ, ասես վախենալով Կատերինա-Ռոկանյանի գեղեցկությունից, հայացքը խոնարհում, մերթ էլ կտրուկ շարժում անում՝ ասես փախչել ուղենալով։ Բորիս-Վարդանյանի ձայնը հնչում է փափուկ, նա շատ մտերմարար է խոսում Կատերինայի հետ, քանի դեռ շդիտե, որ նա պատրաստ է ամեն ինչի։ Բայց, զգալով, որ Կատերինան պատրաստ է ամեն քայլի, նա կորցնում էր իրեն, ձայնը թեթևակի գողում և բառերը հազիվ էին պոկվում շուրջերից։ Բորիս-Վարդանյանի արտաքինը, սակայն, միշտ էլ վայելուց էր, շարժումները՝ անբռնազբոս, և գժվար էր հավատալ, թե նման «քաջ» տղամարդը կարող է երկշոտությամբ նահանջել հպարտ ու անկախ Կատերինա-Ռոկանյանի առաջ։ Մինչև վերջին բացատրությունը Կատերինան չէր ճանաչում Բորիս-Վարդանյանին. սրա էությունը միայն հանդիսականին էր հայտնի։

Դժբախտ Կատերինայի համար Վարդանյանի Բորիսը գեղեցիկ էր ոչ միայն արտաքինով, այլև հոգով (այդպես էր նա պահում իրեն, այդպես էր թաքցնում նա իր իսկական գեմքը)։ Եվ, տեսնելով այդ գեղեցիկ Բորիս-Վարդանյանին, Կատերինա-Ռոկանյանը անզոր էր խեղ-

դել իր զգացումը: Նա ամբողջապես հանձնվում է Բորբոսի կամքին, իսկ նա, ասես մեծ զգացումներից վախենալով, խուզս է տալիս նրանից, հեռանում իր բախտից, կործանում երիտասարդ Կատերինայի կյանքը:

Գրավիչ արտաքինով էր ներկայացնում Վարդանյանը նաև կոմս Ալմավիվային Բոմարշեի «Ֆիգարոյի ամուսնության» մեջ, բեմադրություն՝ Ա. Գուլակյանի: Այս դերում դերասանը հմտորեն ցուցադրում է ամբարտավան, ինքնավստահ արխտոկրատին, որի ներքին դատարկությունը չէր սքողվում հարուստ ու շքեղ դգհստների տակ:

Այս բեմադրությունը շահեկանորեն տարրերվում էր Արմեն Գուլակյանի նախորդ աշխատանքներից նրանով, որ այստեղ դերասանի ստեղծագործությունը մղվում էր առաջին պլան: Լայն հնարավորություններ ստանալով ուժիսյորից՝ դերասանը առավել ուժով էր բացում կերպարը: Վավիկ Վարդանյանի պատկերած կոմս Ալմավիվան ներկայացման լավագույն դերակատարումներից էր: Սա ինքնատիպ մի. դերապատկեր էր՝ հետաքրքիր ու համոզիչ: Մազրական ոչ մի գույն չկար կոմս Ալմավիվայի արտաքին տեսքի մեջ: Արխտոկրատի կիրթ շարժուձեւ, նույնիսկ ընդգծված մեղմություն կանաչավագագծի մեջ: Բայց հենց որ Վարդանյանի Ալմավիվան շփվում էր Ֆիգարոյի հետ՝ նա մեկ-երկու ուղղիկից հետո այլևս չէր կարողանում թաքցնել իր իսկական էությունը: Եթե Ֆիգարոն հանկարծակի դիմում էր կոմսին, վերջինս զգվաճքով ետ էր քաշվում, նույնիսկ

վախեցած հայացքով էր հետևում այդ «հասարակ սափ-րիշի» շարժումներին: Կանանց հանդիպելիս կոմսը բո-լորովին վերափոխվում էր: Սրանց հետ նա դառնում էր վերին աստիճանի սիրալիր և նրբազգաց: Այդ թուլու-թյան հետևանքով էլ Վարդանյանի Ալմավիվան հաճախ ընկնում էր ծիծաղելի վիճակների մեջ: Եվ ինչքան լուրջ էր Վարդանյան-Ալմավիվան արտաքնապես, այնքան ծիծաղելի էր ներքուստ: Հատկապես ներկայացման ֆի-նալում կոմմ Ալմավիվան պատկերացվում էր ընդդժված ծիծաղելի, սատիրական գույներով: Իսկապես, շատ ծի-ծաղելի էր տեսնել այդ «լուրջ» կոմսին, որը զավեշտա-կան վիճակի մեջ էլ մինչև վերջ համոզված էր իր գերա-զանցության մեջ: Արտաքին լրջություն և ներքին դա-տարկություն՝ այս էր Ալմավիվայի գերի բացահայտ-ման բանալին:

Ցայտուն կերպարներ է ստեղծել Վարդանյանը նաև ուսումնական դրամատուրգիայում:

Փոքր թատրոնից անմիջապես հետո Գ. Սունդուկյանի անվան թատրոնը, որի կողեկտիվն էր ընդունվել Վ. Վար-դանյանը 1928 թ., բնմ է հանում Ռոմաշովի «Հրե կա-մուրջ» պիեսը (բեմադրություն՝ Վ. Վաղարշյանի): Բնդ-գրկելով տասնամյա (1917—1927) մի ժամանակաշրջան, պիեսը պատմում էր, թե ինչպես հեղափոխության հրե կամուրջի վրայով անցել են տարբեր մարդիկ և ինչպես այդ հրի մեջ վերածուլվում, թրծվում են նրանց ըմ-բըռնումներն ու հոգեբանությունը: Զգոնության թիման կարևոր տեղ էր գրավում պիեսում և ներկայացման մեջ:

Դա կապված էր դավաճան Գեննադիի վարքագծի հետ։
Վարդանյանի կատարմամբ Գեննադին հանդես էր գալիս
իրեւ անհաջողակ մի դավադիր, որ ներքին ճգնաժամ է
ապրում և բացեիրաց կանգնում դիվերսիայի ուղու վրա։
Դերասանի կողմից գտնված դերի արտահայտիչ ար-
տաքին նկարագիծը բացում էր Գեննադիի հոգու գար-
շելի էռթյունը։

Ի տարրերություն վնասարարների դերերի ուրիշ
շատ կատարումների, Վարդանյանն ստեղծել է ոչ թե
շտամպային, ծաղրանկարային տիպ, այլ ձգտել է բե-
մական կերպարը օժտել ոհեալ բովանդակությամբ։ Եր-
բեմն Գեննադի-Վարդանյանը նույնիսկ գրավիչ էր թը-
վում, որը գերասանին թույլ է տալիս ավելի մեծ ուժով
պսակագերծ անել այդ մարդու զազրելի ներքինը։ Հա-
մամական Ստանիսլավսկու սկզբունքին, Վարդանյանը հե-
տևում էր նրա այն մտքին, թե երբ գերասանը խաղում
է շարագործի դեր, թող փնտրի այն պահերը, ուր նա
բարի է։ Հենց այդպես էր վարվում դերասանը, ստեղ-
ծելով ոչ թե վնասարարի կերպարի սխեմա, այլ կենդա-
նի, ոհեալ և իրականում վտանգավոր մարդու կերպար։
Բացասական հերոսի նման մեկնաբանությունն այդ
տարիներին նորություն էր, և Վարդանյանը այն առաջին
դերասաններից մեկն էր, որոնք ձգտում էին հայրենի
թատրոնում հաստատել բեմական ոհեալիզմը՝ նրա մը-
խատյան հասկացողությամբ։

Ոչ պակաս հետաքրքիր էր Արկադիի կերպարը Կոր-
նելյանի «Պլատոն. Կրեշետում» (ոեժիսյոր՝ Ա. Գուլակ-
իսյուկի)

յան): Այս դերում ևս արտիստը իրական գույներով է պատկերում երկշոտ այն ինտելիգենտին, որին օտար է խիզախելը, ստեղծագործական հանդգնությունը: Այստեղ ևս դերասանը ծաղրանկարային միջոցների չի դիմում, որպիսիք այնքան հաճախ կիրառվում էին սովետական դրամատուրգիայի բացասական գործող անձանց մարմնավորելիս:

Վերը հիշված «Ամպրոպ» ներկայացման մեջ, բացի Բորիսից, Վարդանյանը խաղացել է նաև Տիխոնի դերը, ոչ միայն երկշոտ, այլև մոռացված, անկամ մի մարդու դեր: Այստեղ Վարդանյանը չի էլ մտածել, թե կարելի է ծաղրանկարային մեկնաբանություն տալ կերպարին, այն ժամանակ, երբ սովետական դրամատուրգիայի բացասական հերոսների դերերում նա ստիպված էր հաղթահարել այդ թերությունը, որը հատկանշական էր ոչ միայն 1920-ական թվականների, այլև հետագա տարիների թատրոնի համար: Եվ այդ իմաստով Գեննադիի կերպարից հետո Արկադիի դերակատարումը մի քայլ էր գեպի առաջ: Առաջին անգամ Վարդանյանի դերասանական ստեղծագործության մեջ հաստատվեց նույնպիսի ոեալիստական մոտեցում, սովետական դրամատուրգիայի բացասական կերպարների նկատմամբ, որ տրադիցիոն էր կլասիկ պիեսների կերպարները մարմնավորելիս:

«Պլատոն Կրեչետ» ներկայացման մեջ բախվում հն երկու տարրեր բնավորություններ, և սրանց բախումը ավելի մեծ հետաքրքրություն է առաջ բերում, քան եթե

ուժեղ, «նորմալ» Պլատոն-Ներսիսյանի կողքին երևար թուզը, ծաղրանկարային Արկադի-Վարդանյանը: Ռեժիսոր Ա. Գուլակյանը և արտիստ Վարդանյանը ճիշտ են ըմբռնել դրամատուրգի խնդիրը, որ ցանկացել է ուհաւիստորեն բացահայտել մարդկային այն բնավորությունները, որոնց վիճակված էր արտացոլել մարդկային ունալիքաբերությունները: Հետաքրքիր ու համակըրելի Պլատոն-Ներսիսյանի կողքին բեմում ապրում էր ոչ պակաս հետաքրքիր և մարդկային, իր հմայքն ունեցող Արկադի-Վարդանյանը: Առաջին հայացքից դժվար էր հասկանալ, թե ի՞նչ տարբերություն կա այդ երկու բժիշկների միջև: Բայց կամաց-կամաց Արկադի-Վարդանյանը զրկվում էր իր հմայքից, բացահայտում իրեն: Զէ՞ որ այդպես է նաև կյանքում, ուր իսկույն չէ, որ կուահում են, թե ինչպիսին է այս կամ այն մարդք: Կյանքում մարդուն ճանաչելու այդ դժվարությունն է Վարդանյանին մղել բեմահարթակ, որտեղից շատ հաճախ հանդիսարաջ էին նայում բացասական հերոսների պատրաստի դիմակներ: Բացասական հերոսներին ծաղրանկարային ձևով պատկերելուց, մինչև նրանց ուհաւիստական պատկերման ուղին եղել է ստեղծագործական աճի, արվեստագիտի հասունացման ուղի: Այդ ըմբռունմանը Վ. Վարդանյանը հասել է ոչ առանց կլասիկ դրամատուրգիայի կերպարների օգնության, բայց, հասնելով դրան, արտիստը ստեղծագործորեն նախապատրաստեց իրեն գորկիական դրամատուրգիայի կերպակատարումների համար, իսկ այդ դրամատուրգիան սոցիա-

լիստական ռեալիզմի արվեստի հաստատումն էր հայքիմում:

Եվ իրոք, Վ. Վարդանյանի դերասանական հաջողության գագաթը դարձան գորկիական կերպարները, որոնք նա ստեղծեց «Հատակում», «Եգոր Բուլշչովը և ուրիշները», «Դոստիգաևը և ուրիշները» պիեսների բեմադրություններում:

Գորկիական հերոսների հետ նրա առաջին ծանոթությունը տեղի է ունեցել 1928 թվականին Թիֆլիսի հայկական թատրոնում դրված «Հատակում» ներկայացման մեջ (ռեժիսոր՝ Ն. Շետով): Թեև երիտասարդ արտիստը վատ չէր խաղում Բարոնի բարդ դերը, բայց չէր հասնում ամբողջականության: Դերի արտաքին նկարագիրը գտնված էր, ոույնիսկ Բարոնի վարքագիծը Վարդանյանի կատարմամբ իսկական «բարոնական» էր, բայց մինչև կյանքի հատակն իշած արիստոկրատի հոգեբանության ողջ խորությունն արտիստը չէր բացել: Այնուամենայնիվ, Գորկու դրամատուրգիայի հետ ունեցած առաջին հանդիպումն անհետեանք շանցավ Վարդանյանի համար: Գեղարվեստական թատրոնի ռեալիզմը, որի ջատագովն էր Վ. Վարդանյանը, ավելի հասկանալի և ընդունելի էր գորկիական կերպարների մարմնավորման մեջ: Բարոնի կերպարի վրա աշխատելիս Վարդանյանը ռեալ կերպով զգաց առավելությունը և ուժը ստեղծագործական այն մեթոդի, որ հաստատել էր Կ. Ստանիսլավսկին:

Գորկիական առաջին դերի վրա կատարած աշխատանքի արդյունքը մեծ չէր, բայց դա ստեղծագործական

լիցք տվեց արտիստին Մ. Գորկու պիեսների բեմադրություններում հետագայում ավելի հաջող հանդես գալու համար:

Գորկիական երկրորդ՝ Դերասանի, գերակատարումը Գ. Սունդուկյանի անվան թատրոնում «Հատակում» ներկայացման մեջ (ռեժիսյոր՝ Ա. Գուլակյան) շահնկանորեն տարբերվում է առաջինից: Վ. Վարդանյանը անկեղծորեն, խորին հուզմունքով պատմում է իրերի դաժան բերումով թատրոնից վտարված գերասանի ողբերգությունը: Վարդանյանի գերասանը հիվանդագին է վերապրում իր անկումը, նա տեսնորեն ելք է փնտրում կյանքի հատակից դուրս գալու համար: Դերասան-Վարդանյանը ողորմելի կերպարանք ուներ, բայց նրա ողջ վարքագիծը, մաներները վկայում էին, որ նա իրոք ինչ-որ ժամանակ տաղանդավոր արտիստ է եղել: Հանդիսականը հավատում էր Դերասան-Վարդանյանին, որ ոգեշնչված հիշում էր բեմում իր ստեղծած կերպարները, որոնք ստիպում էին նրան և՛ լալ, և՛ ծիծառել: Վարդանյանը մի փոքր յուրովի է մեկնաբանել գերասանի կերպարը, շեշտելով տաղանդի կործանման թեման: Ընկըզմվելով կյանքի «հատակը», օժտված, տաղանդավոր Դերասան-Վարդանյանը չէր հասկանում ճշմարտությունը, չէր տեսնում վերածնման ուղին, թեև շատ էր ուզում դուրս գալ այդ ահավոր ճահճից, այլևս անկարող էր դիմանալ,— ահա թե ինչպես էր բացատրվում Վարդանյանի մոտ այն փաստը, որ նրա Դերասանն սկսում է հավատալ կուկայի սնամեջ քարոզին: Դերասանը մո-

լեռանդորեն հավատում է, որ ինքը դուրս կգա հատակից, կվերադառնա իր սիրելի բեմը։ Նրան թվում է, թի դրան խանդարում են «հատակի» մարդիկ, և երբ հանդես է գալիս կուկան, որ հուսազրում է դերասանին, նա իսկույն կառշում է այդ հույսից։ Կուկայի քարողները, որքան էլ հուսազրող, բայց կեղծ էին։ Իսկ կեղծիքը, սուսը, ինչքան էլ գեղեցիկ լինի, չի կարող սատար լինել հուսալրված մարդկանց։ Ընդհակառակը, վերջնականապես կկործանի։ Տաղանդը առավել ևս կեղծիքը կարիք չունի, այդ էր հավաստում բեմից Դերասան-Վարդանյանի ողբերգական ճակատագիրը։ Եվ երբ նա հեռանում էր այնտեղ... դեպի ամայություն, որպեսզի խեղդամահ լինի, հանդիսատեսը պարզորոշ հասկանում էր, որ Դերասան-Վարդանյանը գործում էր ակամա, որ այլ կերպ վարվել նա անկարող էր... Կյանքի հավատը, վերածննդի հավատը հօգս է ցնդել, փշովել վերջին հույսը, մերկացել փայտիած պատրանքների ողջ կեղծիքը, հասել էր տաղանդի վերջը, Դերասան-Վարդանյանի կյանքի վախճանը։

Որոշ ժամանակ անց Վ. Վարդանյանը նույն բեմադրության մեջ հանդես է գալիս Սատինի դերում։ Ականատեսները պատմում են, որ Սատին-Վարդանյանը իր արտաքինով հիշեցնում էր Ստանիսլավսկու Սատինին։ Ինքը՝ դերասանը, չի թաքցնում Ստանիսլավսկու խաղի աղղիցությունը։ Հայ թատրոնում ուժիսյորն այդ պիհացը բեմադրել էր այնպես, որ հիմնական միզանացենները կրկնեին Գեղարվեստական թատրոնի ներկայացու-

մը: Արտաքին նմանությունն անդրադառնում է Վարդանյանի Սատինի դերակատարման վրա ևս: Չի կարելի ասել, թե Վարդանյանը վատ էր կատարում Գորկու պիեսի այդ գլխավոր դերը, բայց բանն այն է, որ այդ կատարումը ոչ մի նոր բան չբերեց. դա Ստանիսլավուկու խաղի կրկնությունն էր, և ինչպես ամեն մի կրկնություն, դա ևս շատ բանով զիջում էր օրիգինալին:

Ամեն մի արտիստ, որքան էլ մեծ ու փոքր դերեր խաղացած լինի, միշտ ունենում է մի շատ սիրելի և փայլուն կատարված դեր: Վ. Վարդանյանի համար դա Պավլինի դերն էր՝ Մ. Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները» պիետում: Արտիստը բազմիցս խոստովանել է, որ դա իր սիրած դերն է, այդ դերը միշտ հափշտակությամբ է խաղացել:

«Եգոր Բուլըչովը և ուրիշները» ներկայացումը էտապային նշանակություն է ստացել սովետահայ թատրոնի պատմության մեջ: Այդ ներկայացման հետ է կապված մեր թատրոնում սոցիալիստական ոհալիզմի հաստատման իրողությունը, այստեղ հայ թատրոնն ամբողջ թափով հանդես է բերել ստեղծագործական իր մեծ կարողությունները: Ներկայացման մեջ Պավլինի դերը Վ. Վարդանյանի կատարմամբ մինչև այսօր էլ մնում է չգերազանցված: Արտիստը յուրովի, խոր և օրիգինալ մեկնաբանություն է տալիս գորկիական այդ բարդ կերպարին:

Վարդանյանի Պավլինն ունի իր կենսագրությունը, իր հայացքները կյանքի ու կրոնի նկատմամբ: Ահա թե

այդ բոլորն ինչպես է պատկերացնում դերակատարը: «Իհարկե Պավլինն ինչ-որ տեղ, ըստ երևույթին, հոգեվոր սեմինարիայում, սովորել է, — պատմում է Վարդանյանը: — Նա կամաց-կամաց մարդ է դարձել: Հատուկ ուշադրություն է դարձնում իր արտաքինին, միշտ հագնում է օսլայած օճիք, մաքուր մանժետներ: Մըշտապես «լուրջ» է, նույնիսկ խիստ... ակնոցներ դնում է յուր անձին առավել կարեռություն տալու համար...»¹, — այսպիսին էր Վարդանյանի Պավլինն արտաքինից: Եվ նա այդ ամենը՝ խստորեն պահպանում էր իր արարքներում: Դա պարզ երևում է հատկապես Պավլին-Վարդանյանի՝ դեպի Բուլըշով-Վաղարշյանն ունեցած վերաբերմունքի մեջ: Կրքոտ վեճի մեջ մտնելով շրջապատի մարդկանց հետ, Բուլըշով-Վաղարշյանը նրանցից յուրանքացուրին անարգանքի սյունին է գամում: Վաղարշյանի գլխավոր նպատակներից մեկն էլ այն է, որ աստծո սպասավորներին՝ Մելանիային և Պավլինին, երկնային բարձունքից, որտեղից նրանց համար հեշտ է մահկանացու մարդկանց հետ խոսել, երկիր իշխությունից Մելանիա-Հասմիկի հետ ունեցած վեճի մեջ Բուլըշով-Վաղարշյանը հասնում է իր նպատակին: Պավլին-Վարդանյանի հետ վիճելիս վաղարշյանական Բուլըշովը ձգտում է նույնն անել, ստիպել, որ նա մարդկացին լիդվով խոսի իր հետ, բայց դժվար էր հավատալ, թի Պավլին-Վարդանյանը կարող է անկհղթ խոսել, ասիլ ճշմար-

¹ Գրի է առնված Վ. Վարդանյանի հետ ունեցած գրույցից
1953 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում:

տությունը: Եթե Մելանիան «կորցնում է համբերությունը» և հերետիկոս Եգորի առաջ սարսափահար հնչեցնում «աշխարհի կործանման»» բոթը, ապա Պավլին-Վարդանյանը մինչև վերջ մնում է իր պատվաստիճանին վայել վարքագծի շրջանակներում: Ավելին, Պավլինն առիթ բաց չի թողնում Եգորի դեմ ակտիվ հարձակման անցնելու համար: Այն տեսարանում, որ Բուլըշովը Պավլինի երեսին գոռում է. «Ես երկրային եմ: Ոտի՛ց գլուխ երկրային եմ», — Վարդանյանի Պավլինը ի պատասխան գոշում է. «Երկիրը փոշի՛ է...», — և, ասես մարդու մահվան հոտն առնող ցին, հարձակվում է Բուլըշովի վրա: Վարդանյանի մոտ դա գալիս է քահանայի բնավորությունից, որ իր մասին նույնիսկ մեծ գիտնական-աստվածաբանի համարում ունի: Սկզբում նա գիտնականի է նմանեցնում իրեն, հետո կամաց-կամաց ինքն էլ սկսում է համոզվել զրանում»¹:

Պավլին-Վարդանյանի արտաքին բարետեսության տակ հանդիսականը տեսնում է երեսպաշտ քահանային, կեղծ բարեպաշտին, որ սիրում է լոկ լավ ուտել ու խըմել: Վարդանյանի Պավլինը «դեմ չէ կապվել պատահած կնոջ հետ»²: Երբ Գլաֆիրան օդի և ուսոելեղեն է բերում, նա ուշի-ուշով զննում է նրան, ակամա կռանում է, որ ակնոցների վրայից մի լավ տնտղի նրա լիքը կազմվածքը... Հետո, հենց այդ դիրքում, իսկույն խաչակնքում է և մի շնչով կլանում օդին: Ահա նա՝ կրոնը և

¹ Գրի է առնված Վ. Վարդանյանի հետ ունեցած գրուցից 1953 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում:

կյանքը։ Այս մի հատիկ շտրիխով արտիստը ցույց է տալիս քաջանա Պավլինի ողջ «փիլիսոփիայության» գինը։ Ակամա մտաբերում հս Գորկու այն միտքը, թե Տիցիանի Վեներայի կոնքերը ավելի մեծ վնաս են հասցրել կրոնին, քան տասնյակ հատոր գրքեր։ Կանացի գեղեցիկ կազմվածքին գցված Պավլին-Վարդանյանի վավաշում հայացքը ի շիք է դարձնում քաջանայի բոլոր քառողները։

Բավական հետաքրքրական է հետեւ Վարդանյանի Պավլինի և Վաղարշյանի Բուլըշովի ներքին փոխհարաբերությանը։ Պավլին-Վարդանյանին թվացել է, թե ինքը միշտ էլ կարող է խաբել Բուլըշովին։ Նա նույնիսկ համոզված էր դրանում։ «Իմ Պավլինը մտերիմ, շատ մտերիմ էր Բուլըշովի հետ,— պատմում է արտիստը։— Հավատ ներշնչելով Եգորին, հույս ուներ նրա վրա և միշտ համոզված էր, որ նրա հետ կարելի էր գործ տեսնել։ Բայց կամաց-կամաց համոզվում է, որ Եգոր Վասիլևիչը լավ գիտե, թե ինչ պտուղ է ինքը, և այսպես հայր Պավլինը զրկվում է Եգոր-վաճառականից»¹։

Ներկայացման մեջ Վարդանյանի Պավլինը դիմակազերծ է լինում և՛ իբրև հոգեւոր անձ, և՛ իբրև ունեւոր դասի ներկայացուցիչ։ Իր խաղով արտիստը պարզ ցույց է տալիս, որ սոցիալապես անհաստատ հին աշխարհում անհաստատ էր նաև նրա գաղափարախոսությունը։ Հենց որ Պավլին-Վարդանյանը զգում է, որ խախուտ է

¹ Գրի է առնված Վ. Վարդանյանի հետ ունեցած զրուցից 1953 թ. սեպտեմբերի 18-ին, Երևանում։



Կոմս Ալբարդիկյան («Ֆիզառովի ամուսնությունը»)



Հայոց Պատրիհն («Եղու Բուլըշով»)

իր սոցիալական հիմքը՝ նա թողնում է իր ռմտերիմ ընկերոջը», կառշելով «Հոգու փրկության» գաղափարից, «որ և ըստ Պավլինի, կարող է փրկել նրան վերահաս կործանումից»:

Հայր Պավլինի այս դերակատարման օրինակով կարելի է հատկել նաև արտիստի ստեղծագործական «խոհանոցին»։ Կյանքից առնված սեփական տպավորությունները կարենու դեր են խաղում Վ. Վարդանյանի համար։ Մանոթանալով դերին, խորամուխ լինելով կերպարի բնավորության մեջ, նա այնպիսի մանրամասներ է ընտրում նրա համար, որոնք առիթ էր ունեցել դիտել հենց կյանքում։ Դերի վրա այսպիսի աշխատանքի մեթոդը, ինչպես հայտնի է, լայնորեն կիրառվել է Գեղարվեստական թատրոնում։ Եվ Վարդանյանը խստորեն հետեւում է դրան, գրական կերպարը հարստացնելով կենդանի շտրիխներով։ Ահա թե ինչ է պատմում Վ. Վարդանյանը։ «Ես ունեմ կյանքից վերցրած Պավլինի նախատիպը։ Երբ ես սովորում էի Դերբենդի ուալական ուսումնարանում, մեր դասղեկը՝ Հայր Կոնստանդին անունով մի ուսու հոգևորական էր։ Երեք տարի նա իմ ուսուցիչն է եղել։ Նա սեհարցուրակացին էր, միապետական, կատաղի նացիոնալիստ։ Հայերին արհամարհանքով «յանցներ» էր կոչում։ Դաժան ու կոպիտ, շար ու խորամանկ՝ այդպիսին էր Հայր Կոնստանդինը, որ պարկեցտության դիմակ էր կրում։ Նա հաճախ էր ծեծում աշակերտներին։ Սովորություն ուներ սապոգներով խփել երեխաների փորին։ Կոնստանդինի ներքին էությունը քիչ

է տարբերվում Պավլինից: Իմ մեջ ընդմիշտ տպակորվել էր «Հայր» Կոնստանդինը և, Պավլինի դերի վրա աշխատելիս, իմ տպավորություններից շատերը փոխանցեցի այդ կերպարի վրա»:

Գաղափարական-գեղարվեստական մակարդակով Հայր Պավլինի կերպարը «Եգոր Բուլըչովը» ներկայացման լավագույն դերակատարումներից էր: Վաղարշ Վաղարշյանի Բուլըչովի, Հասմիկի Մելանիայի, Ավետիսյանի Դոստիգակի քանդակած բեմական կերպարների կողքին նույնպիսի վարպետությամբ քանդակված կերպար էր Վավիկ Վարդանյանի Հայր Պավլինը, որը արժանացել է հայ և ոռւս քննադատության բարձր գնահատականին:

Վավիկ Վարդանյանը Պավլինի դերը կատարեց և մեկ ուրիշ բեմադրության մեջ՝ Մ. Գորկու «Դոստիգակը և ուրիշները» պիեսում:

«Եգոր Բուլըչովը» բեմադրությունից մեկ տարի անց Սունդուկյանի անվան թատրոնը ներկայացրեց «Դոստիգակը և ուրիշները» պիեսը, որտեղ Վավիկ Վարդանյանը խաղաց Հայր Պավլինի դերը:

Եթե «Եգոր Բուլըչովը և ուրիշները» պիեսում, լիետարվարյան ռեռլյուսիայի նախօրյակին, բուրժուական աշխարհի կործանումը բացահայտված էր գոլիսավորապես հենց այդ բուրժուազիայի միջավայրում, ապա այս նոր պիեսում նույն այդ թեման, այս անդամ

արդեն սոցիալիստական ռեռլյուցիայի օրերին, բացահայտվում է բուրժուազիայի մղած հակառակուցիոն պայքարի մեջ: Այս տարրերությունը իր կնիքըն էր զնում նաև պիեսի կերպարների վրա: Թեև նախորդ պիեսից այստեղ ծանոթ կերպարներ շատ կան, օրինակ, Դուստիգաև, Շուրա, Տյատին, Պավլին և այլն, բայց նրանք շատ են փոխվել, ինչպես փոխվել են պատմական ժամանակաշրջանը՝ մարդկանց դիրքորոշումները:

«Դուստիգաևը և ուրիշները» բեմադրության մեջ (ռեժիսոր՝ Վաղարշ Վաղարշյան) Պավլինը, Վարդանյանի կատարմամբ, շատ ավելի քողարկված է, քան առաջ: Հիմա Վարդանյան-Պավլինը ամեն մի քայլը շափում-ձեռում է, սարսափելի վախենում է դրսի աշխարհից: Բեմ մտնելիս քանիցս ետ է նայում, շտապում է պահ առաջ մի ապահով անկյուն գտնել: Նա առաջվա պես համարձակ չէ, քիչ է խոսում, ավելի շատ լսում է սրան-նրան, ականջ դնում ամեն մի շշուկի: Առաջվա փառավոր արտաքինն էլ չի պահպանվել: Պավլին-Վարդանյանը այժմ այնքան էլ չէր հետեւում իր արտաքինին: Եթե առաջ միշտ հագնում էր օսլայած օձիք, մաքուր մանժետներ, ապա հիմա նրա վրա ամեն ինչ կրում է ակամա անփության կնիքը:

Մի խոսքով, դերասանն ամեն կերպ ընդգծում էր դրսի իրադարձությունների ազդեցությունը: Իսկ դրսում կատարվում էր Հոկտեմբերյան Մեծ ռեռլյուցիան: Պավ-

լին-Վարդանյանը, սարսափած այդ իրադարձություններից, տեղ չի գտնում նույնիսկ վաճառական Վասիլի Դոստիգակի տանը: Եվ շատ բնական ու համոզիչ էր, որ ներկայացման ֆինալում, երբ ներս են մտնում ուղղուցիոն դինվորները, Պավլին-Վարդանյանը պատեպատ ընկնելուց հետո մտնում է կահույքի հետեւ, որտեղից և նրան դուրս են բերում:

Այս երկու ներկայացման մեջ ստեղծված Պավլինի կերպարը գարձավ Վավիկ Վարդանյանի լավագույն գերակատարումը: Դերասանական այդ փայլուն աշխատանքը բարձր գնահատվեց և՛ հանդիսականի, և՛ քըն-նադատության կողմից:

Որքան էլ մեծ լինեն Վ. Վարդանյանի արտիստական հաջողությունները, այնուամենայնիվ, այդ սապարեզը չէր գլխավորը նրա համար, թեև ստեղծած լավագույն կերպարները վկայում են նրա արտիստական տաղանդը, որ դժբախտաբար հետագա զարգացում շատացան թատրոնում աշխատելու հաջորդ տարիներին:

Վերջին նոր դերը Վարդանյանը խաղաց ավելի քան մի տասնհինգամյակ առաջ, Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, «Ստալինգրադից հեռու» ներկայացման մեջ: Հանդիս գալով Կրասավինի դերում, Վարդանյանը մի անգամ ևս ապացուցեց, որ նրա արտիստական ներկապնակը հարուստ է թարմ գույներով, որ հայ թատրոնը ի դեմս Վ. Վարդանյանի ունի յուրահատուկ, ինքնատիպ մի տաղանդավոր դերասան:

Դնում թիֆլիսի հայկական թատրոնում,ուր Վ. Վարդանյանը ընդունվել էր Մոսկվայի ստուդիայից վերադառնալուց հետո, երիտասարդ շրջանավարսը արեց ինքնուրույն առաջին քայլերը պրոֆեսիոնալ ռեժիսուրայի ասպարեզում։ Այնուհեղ նա բեմադրում է զնամենքնը երկու գործ՝ «Մեծապատիվ մուրացկանները» և «Պատվի համարը», որոնց վրա աշխատել է ոչ այնպես, ինչպես Ստավրոպոլում, 1918—1920 թվականներին։ Ռեժիսորի գերն ու միսիան արմատապես փոխվել էին Վարդանյանի ըմբռնմամբ։ Այժմ նա պարզ գիտակցում էր այն ողջ պատասխանատվությունը, որ ընկնում էր ռեժիսորի վրա՝ դրամատիկական ստեղծագործության գեղարվեստական առանձնահատկությունները բանաւոր մեջ։

Եթե Վ. Վարդանյանը ռեժիսուրայով առաջ զբաղվում էր ի միջի այլոց, հրապուրվելով գերասանությամբ, ապա հետագայում նա ռեժիսուրայի մեջ տեսնում է իր հիմնական կոչումը, ի միջի այլոց զբաղվելով գերասանությամբ։

Վ. Վարդանյանը ռեժիսորական ստեղծագործության ասպարեզ է մտնում ո՛չ իբրև մերժված գերասան։ Վարդանյանը, գերասանական հաջող կարիերա ունենալով, փաստորեն կամովին հրաժարվեց դրանից՝ նվիրվելով ռեժիսորական արվեստին։ Եվ այն հանգամանքը, որ նա լավ գերասան էր եղել, միայն նպաստել կառող էր նրա ռեժիսորական աշխատանքին։

Վահրամ Փափազյանը, թատրոնի խիստ քննադատ-ներից մեկը, որպիսին նա հանդիս է գալիս իր հուշերի էջերում, նշում է, որ դեռևս Թիֆլիսի հայկական թատրոնում ակնհայտ էր Վավիկ Վարդանյանի հակումը դեպի ոեժիսուրան։ Ականավոր վարպետը բավականությամբ է գրի առնում վ. Վարդանյանի հաջողությունը ոեժիսուրացի ասպարեզում։

Եվ չնայած 1928—1934 թթ. վ. Վարդանյանը թատրոնում աշխատում է իրեն դերասան, բայց ոեժիսյորական գործունեությունն ավելի շատ է գրավում նրան, ավելի մեծ ստեղծագործական ուշադրություն խլում նրանից։ Հնարավորություն շունենալով թատրոնում պիեսներ բեմադրել, նա գնում է ակումբային բեմերը, ուր մեկը մյուսի ետևից իրականացնում է կլասիկ և ժամանակակից հեղինակների բեմադրություններ։

Վ. Վարդանյանի իսկական ոեժիսյորական գործունեությունն սկսվում է 30-ական թվականների կեսերին, երբ նա, լինելով Գ. Սունդուկյանի անվան թատրոնի արտիստ, ղեկավարում է իր անձնական նախաձեռնությամբ ստեղծված դրամատիկական ստուդիան։

Վարդանյանի պրոֆեսիոնալ ոեժիսյորական գործունեության հենց այդ շրջանում սովետական թատրոնի պատմության մեջ նշանակալից փոփոխություններ են տեղի ունենում, որոնք և ազդում են նրա ստեղծագործության վրա։

1930-ական թվականների սկզբին գեղարվեստական

կուլտուրայի ասպարեզում տեղի էին ունենում սոցիալիստական արվեստի զարգացման համար բախտորոշերևութներ։ ՌՍ.ՊՊ.-ի լիկվիդացիայից և գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցումից երկու տարի անց, 1934 թվի օգոստոսին, կայացավ սովետական գրողների առաջին համագումարը, ուր սոցիալիստական ռեալիզմի մեթոդը, որ մշակվել էր սովետական գրականության ու արվեստի շատ տարիների պրակտիկայի ընթացքում, ճանաչվեց իբրև գեղարվեստական ստեղծագործության ուղղություն տվող մեթոդ։

20-ական թվականներին բնորոշ թատերական բազմաթիվ հոսանքներն աստիճանաբար անհետանում էին իրենց տեղը գիշելով Ստանիսլավսկու դպրոցին։

Ճիշտ է, դեռ գոյություն ուներ.Վ. Մեյերխոլդի դրամագրություն ստեղծագործական պոլեմիկա էր մղվում թատերական տարրեր ուղղությունների միջև, բայց այդ թատրոնների բախտն արդեն վճռված էր և 1930-ական թվականների երկրորդ կեսին դրանք փակվեցին։ Գեղարվեստական թատրոնի արվեստը հասարակական լայն ճանաչում գտավ։

Երկրի գրեթե բոլոր թատրոնները իրենց արվեստը վերակառուցում էին ըստ այդ թատրոնի արվեստի։ Եթե շատ ուժիսյորներ այդ անում էին ոչ անկեղծորեն, եթե նրանք օրգանապես դեռևս չէին յուրացրել Գեղարվեստական թատրոնի մեթոդը, ապա Վ. Կարդանյանը ներքնապես նախապատրաստված էր նման վերակառուցման։

ավելի ճիշտ՝ նրա համար «վերակառուցման» պրոբլեմը շկար էլ, որովհետև նա իբրև ոեժիսյոր արդեն կրում էր այդ ազդեցությունը:

Անվիճելի է, որ թատերական մի, թեկուղեա առաջնակարգ, օրգանիզմի արվեստի ազգիցությամբ բոլոր թատրոնների մասսայական վերակառուցումը ծայրահեղություն էր, որ այժմ իրավամբ քննադատվում է: Մայրահեղությունն էր և այն, որ իսպառ մերժվում էին ամբողջ ուղղություններ, ոչ մի դրական բան չէր դիտվում նրանց մեջ: Սովետական թատերագիտությունն այդ մասին ևս այժմ խոսում է պարզ ու որոշակի:

1930-ական թվականներին սովետահայ թատրոնն ապրում էր շափազանց հետաքրքրական մի պրոցես: Այդ տարիներին էր, որ հայ թատրոնը ընդհույս մոտեցավ սովետական թեմատիկային, գեղարվեստորեն ընկալեց ժամանակակից սովետական դրամատուրգիան:

Եթե 1920-ական թվականներին սովետահայ թատրոնի՝ արդիականությանը նվիրված ոեպերտուարը հիմնականում բաղկացած էր ոուս սովետական հեղինակների պիեսներից, ապա 30-ական թվականներին արագորեն զարգանում է հայ սովետական դրամատուրգիան՝ հայ թատրոնի զարգացման այդ գլխավոր ազդակը: Թավական է հիշատակել մի երկու փաստ, որպեսզի պարզ դառնա սովետահայ դրամատուրգիայի զարգացման մաշտաբները: 14 տարվա ընթացքում (1921—1934) Սովետական Հայաստանի բոլոր թատրոնները բեմադրել են 164 պիես, որոնցից միայն ութն էին

պատկանում սովետահայ դրամատուրգներին: 1930—1935 թթ. ընթացքում սովետահայ հեղինակները ներկայացրել են թատրոններին մոտ 500 պիես: Դրանցից բոլորը չեն, որ բեմադրվել են, սակայն, ակնհայտ էր մեծ շարժման սկիզբը՝ շարժում հանուն ազգային սովետական դրամատուրգիայի: Այդ տարիների մամուլի էջերում, ստեղծագործական միություններում, թատրոններում սուր բանավեճեր են ծավալվել սովետահայ դրամատուրգիայի հարցերի շուրջ: Հետաքրքրական հոդվածներով էին ասսպարեզ գալիս քննադատներ Հայկ Գյուլիքը և այլն, Տիգրան Հախումյանը, Սարգիս Մելիքսեթյանը: Մամուլը պարբերաբար հրապարակում էր սովետահայ զրոյների պիեսները: Հաճախակի լավագույն պիեսների կոնկուրսներ էին հայտարարվում: Այս բոլորի արդյունքը եղավ այն, որ 30-ական թվականներին սովետահայ թատրոնը ստացավ մի ամբողջ շարք պիեսներ՝ Դերենիկ Դեմիրճյանի «Նապոլեոն Կորկուցյանը», «Ֆոսֆորային շողը», Վաղարշ Վաղարշյանի «Օղակումը», «Սասունցի Դավիթը», Ստեփան Բաղդասարյանի «Արյունոտ անապատում» և «Մարտերումը», Մկրտիչ Զանանի «Շահնամեն», Մելիք-Քոչարյանի «Կույր երաժիշտը», Հացագործյանի և Խուդավերդյանի «Խնդության սրինգը», Արաքսմանյանի «Էմմանվելը», Լյուդվիգ Միքայելյանի «Գողը», Սերգեյ Պայազատի «Հարսանիքը» և այլն: Առա այս դրամատուրգիան էր, որ սովետահայ թատրոնին հնարավորություն տվեց

1930-ական թվականներին ամրապնդելու իր ազգային հիմքերը:

Թատերական արվեստում ևս 30-ական թվականները նշանակալից են: Եթե 20-ական թվականներին կլասիկ և ժամանակակից դրամատուրգիայի կերպարները հաճախ բացահայտվում էին ագիտացիոն թատրոնի պրիումներով, գերադասվում էին, ճիշտ է, բեմական սուր, բայց ճակատային բնութագրությունները, ապա հետագայում, 30-ական թվականներին արդեն առկա է կերպարների հոգեբանական խորացման, նրանց ավելի ոհալիստական բացահայտման ընթացքը:

Ագիտացիոն թատրոնի պրիումներով բեմադրված ստեղծագործությունները 30-ական թվականներին արդեն սուր քննադատության էին ենթարկվում: Այդ տարիներին սկզբունքորեն փոխվում է թատրոնի վերաբերմունքը դեպի դասական դրամատուրգիան:

Կլասիկների ինքնակամ աղավաղումը, նրանց ստեղծագործությունների իդեական բովանդակության խըմբագրումն առաջ է բերում հասարակական դիմադրություն: Եթե 20-ական և 30-ական թվականների առաջին կեսին դեռ արվում էին նման փորձեր, ապա հետագայում այդպիսի աղավաղումները պարզապես արգելվեցին:

1930-ական թվականների սկզբին հայ թատրոնը «Եղոր Բուլըշովը և ուրիշները» ներկայացումով ազգարարեց, որ սովետահայ բեմում սոցիալիստական ոհալիդմի արվեստը ձեռք բերեց իր առաջին մեծ հաղթանակը:

Այսպիսով, Վ. Վարդանյանի ռեժիսյորական գործունեության սկզբնական շրջանում սովորակայի թատրոնը հաստատապես կանգնում է սոցիալիստական ռեալիզմի դիրքերում, դրանով իսկ կանխորոշելով ստեղծագործության դժվարին ուղին ոտք դնող հայ ռեժիսյորների ջոկատի գաղափարական-գեղարվեստական ուղղությունը:

Ռեժիսյոր Վ. Վարդանյանի ստեղծագործական կենսագրության մեջ այդ հանգամանքը վճռական դեր խաղաց: Նա ռեժիսյորների այն սերնդի ներկայացուցիչն էր, որին վիճակված էր թատրոնի պրակտիկայում իրականացնել ու զարգացնել հաստատված ու ճանաչված ուղղությունը:

Զի կարելի պատահական համարել այն փաստը, որ արտիստ Վ. Վարդանյանին է հանձնարարվում Գ. Սունդուկյանի անվան թատրոնին կից դրամատիկական ստուդիայի կազմակերպումը: Վ. Վարդանյանի ռեժիսյորական և կազմակերպչական ընդունակություններն այնքան ակնառու էին, որ երիտասարդների ստուդիական աշխատանքը վարելու գործը վստահվում է նրան: Եվ ահա ստուդիան ղեկավարելու առաջին իսկ տարին Վ. Վարդանյանը բհմադրում է Մոլիերի «Տարտյուֆ» պիհուը: Դա 1934 թիվն էր, երբ հայկական թատրոնում դեռ նրկատվում էին կլասիկ երկերի քննահան մեկնաբանության, մինչև իսկ բացահայտ աղավաղման փորձեր:

Դեռևս 20-ական թվերի կեսին հայկական թատրոնի մի շարք ռեժիսյորներ հայտարարեցին, թե պիհուը լոկ

միջոց է ղերասանի բեմական տեխնիկան, նրա շարժումները ցուցադրելու համար¹:

Երեսնական թվականների սկզբին Գ. Սունգուկյանի անվան թատրոնի ստեղծագործական կյանքը երկակի ընթացք ուներ: Մի կողմից թատրոնը համարձակությամբ ու վճռականորեն հաստատել էր սոցիալիստական ռեալիզմը, իսկ մյուս կողմից՝ տուրք էր տալիս ֆորմալիզմին, վուլգար սոցիոլոգիզմին՝ հատկապես կլասիկների պիեսները բեմադրելիս: Հենց այդ ժամանակ ցուց տրվեց թատրոնի դրամատիկական ստուգիայի «Տարտյուֆ» ներկայացումը, ուր չէր աղավաղված մեծ կոմեդիոգրաֆի պիեսի տեքստը: «Տարտյուֆի» բեմադրության մեջ հազվագեպ էին ռեժիսյորական փայլուն կտորներ, այդ աշխատանքն աշքի չէր լնկնում ռեժիսյորական խորունկ մեկնարաւանությամբ, բայց ակնառու էր տեքստի հանգեպ ռեժիսյորի ունեցած հոգատար վերաբերմունքը, որ երեք չէր կարելի ասել կլասիկ պիեսների այլ բեմադրությունների մասին:

Սակայն «Տարտյուֆ» բեմադրության նշանակությունը չի կարելի սահմանափակել զուտ ռեժիսյորական հաջողությամբ կամ անհաջողությամբ: Այս աշխատանքով վավեր վարդանյանը սկիզբ դրեց թատերական մի արհեստանոցի, որը ղերասանական կադրեր պատրաստելու հետաքրքիր ուղիներ էր հաստատում:

1929-ին ստեղծած Առաջին Պետական թատրոնին

1 «Խորհրդային Հայաստան», 1924, № 250.

կից թատրոնական ստուդիան բավականին օգտակար գործ էր կատարել: Դրա վկազությունն են էմիլ Զոլայի «Ռաբուրդինի ժառանգների» (1931 թ.) և Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանների» (1932 թ.) բեմադրությունները (ոեժիսյոր՝ Արմեն Գուլակյան), որոնք ակներև գեղարվեստական արժանիքներ ունեին: Բայց 1933-ից ստուդիան, մի քանի անգամ անցնելով մի կազմակերպությունից մյուսի իրավասությանը, կանգնում է փակվելու վտանգի առաջ: Վավիկ Վարդանյանը, ստուդիայի ղեկավարությունը վերցնելով իր ձեռքը, նորից կենդանություն է տալիս նրան:

Վերակենդանացված թատերական ուսումնական հաստատության աշխատանքները Վ. Վարդանյանի ղեկավարությամբ ընթանում են նոր սկզբունքներով: Նախ և առաջ լայնանում է ստուդիայի կազմը, ստուդիան կազմվում է երեք կուրսերից, որոնց մեջ սովորում են մոտ 60 ուսանող: Այս էլ շի բավարում թատրոնների տարեցտարի անող պահանջները: Ել Վավիկ Վարդանյանի անձնական նախաձեռնությամբ 1934 թվի օգոստոսին կազմակերպվում է թատերական արհեստանոց: Այստեղ են հավաքվում բանվորական ինքնագործ թատերախմբերի լավագույն մասնակիցները, թատերասեր շնորհալի երիտասարդությունը: Ահա այս ուժերի հետ է, որ Վավիկ Վարդանյանը սկսում է «Տարտյուֆի» բեմադրությունը: Դեռ աշխատանքները սկսելուց առաջ ոեժիսյորը հասկացել ու հայտարարել է, որ արհեստանոցի նպատակը ոչ թե բեմադրություն ստեղծելն է, այլ

ուսանողներին թատերական արվեստի սկզբունքներ սովորեցնելը։ Հետևելով Մոսկվայի մի շաբթ թատրոն-ստուդիաների փորձին, Վ. Վարդանյանը «Տարտլուֆի» բեմադրության ընթացքում իր սաներին սովորեցրել է թատերական արվեստի օրենքները, սկզբունքները, տեխնիկան։ Բեմադրության ժամանակ ստուդիականներն անցել են այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ գրիմ, թատրոնի պատմություն, դերասանի վարպետություն, ռեժիսյորական անալիզ և այլն։ Վավիկ Վարդանյանը համարյա մեկ տարի այսպես աշխատել է ստուդիականների հետ։ Եվ երբ 1935-ի մայիսի 31-ին Առաջին Պետական թատրոնի դահլիճում կայացավ թատրոն-արհեստանոցի անդրանիկ ներկայացումը՝ բոլորն էլ ջերմ ընդունեցին այն և գտան, որ «ընկ. Վավիկ Վարդանյանի ձեռնարկած աշխատանքն ուշադրության արժանի գործ է, և նա ամենայն իրավամբ արժանի է ներկայացումը՝ դիտող հասարակության ցուց տված համակրանքին ու քաջալերությանը»¹:

Այսպիսով, «Տարտլուֆի» բեմադրությունը, ինչպես և ստուդիայի մյուս ներկայացումները, ավելի մանկավարժական նշանակություն ունեին, քան ստեղծագործական, ռեժիսյորական։ Այնուամենայնիվ, հենց այս աշխատանքներում ակնհայտ դարձան Վավիկ Վարդանյանի ստեղծագործական հակումները։ Բարեխիղճ վերաբերմունքը դեպի հեղինակային

¹ «Խորհրդային արվեստ», 1935, № 11:

տեքստը, ձգտումը՝ առանց աղավաղման բացելու հեղինակի իդեան դերասանի ռեալիստական խաղի միջոցով՝ ահա ռեժիսյոր Վ. Վարդանյանի հատկությունները, որ երևան են գալիս արդեն «Տարտյուֆ» բնմադրության մեջ: Նույն մոտեցումն է եղել նաև «Սկապինի արարքները» պիեսի նկատմամբ, որ բեմադրել է Վ. Վարդանյանը նույն թվականին: Սակայն աշխատանքները դեռևս չեին կարող ամբողջովին բնութագրել ռեժիսյորի դեմքը. սրանք բնորոշ էին Վարդանյանի ստեղծագործական անհատականությանը միայն սկզբնական շրջանում: Վ. Վարդանյանը աճեց ու ամրապնդեց իրեն սովետական ռեժիսյոր ժամանակակից դրամատուրգների պիեսներ բեմադրելով. ահա այն ռեպերտուարը, որ որոշեց Վ. Վարդանյանի ստեղծագործական ուղղությունը:

Նախքան առաջին արդիական պիեսի ինքնուրույն բեմադրությունը, Վարդանյանը Ա. Գովակյանի հետ աշխատում է «Առաջին հեծելազորը» և «Պլատոն Կրեշետ» ներկայացումների վրա:

Վս. Վիշնևսկու «Առաջին հեծելազորը» դրամատիկական էպոպեան բեմադրելիս, Վարդանյանին առիթ է ներկայանում տասից ավելի պատկեր բեմադրել ինքնուրույն: Վս. Վիշնևսկու պիեսի յուրահատուկ կառուցվածքը գալիս էր էպոպեայի դեպքերն ընդգրկելու մասշտաբներից, որը այն ժամանակ ըստ արժանավույն չի բացվում հայ թատրոնում: Բայց այդ առաջին լուրջ աշխատանքը սովետական պիեսի վրա օգնեց Վարդանյանին ռեհալ կերպով դգալու կերպարների այն աշխարհը,

որ նրան վիճակված էր ներկայացնել հետագա աշխատանքներում:

Սովետական նոր մարդուն ճանաշելու օգնեց նաև «Պլատոն Կրեչետ» ներկայացման վրա աշխատելը, ուր «շերմությամբ ու անկեղծությամբ ցույց էին տրվում նոր, սովետական կոփվածքի մարդկանց հմայիլ կերպարները, նրանց անսահման նվիրվածությունն իրենց գործին, նրանց նաև առօրյա կյանքում երեան եկող հերոսությունը»:

Դրա հետ միասին դերասաններն ու ռեժիսորները անհրաժեշտ էին համարում արմատապես վերափոխել ստեղծագործական աշխատանքի մեթոդները, վճռականորեն ու հետևողականորեն պայքարելու ֆորմալիստական տարրերի ռեցիդիվների դեմ»¹:


1936 թվականի հունվարին «Պրավդայի» էջերում խիստ քննադատության ենթարկվեցին ֆորմալիզմը վերածնելու փորձերը, որոնք թաքնվում էին կեղծ նորարարության դիմակի տակ: Պարտիական մամուլի ցուցումները օգնեցին սովետահայ թատրոնի գործիչներին վերանայել իրենց գործունեությունը, երեան հանել ու հաղթահարել իրենց թույլ տված սխալները:


1936 թվականի ապրիլին սովետահայ թատրոնի գործիչների մեջ «Պրավդայի» հոդվածը ստեղծագործական քննարկման դրվեց: Թատերական հատուկ խորհըր-

¹ С. Медиксетян. «Путь нашего театра», Армгиз, Ереван, 1941, стр. 104.



Սուրեն («Պատմի համար»)





ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՈՒՅՆ 1984 թ -ի մայիսի 5-օրը՝ Եղիշեական համաժողով կազմակերպության կողմէ

Դակցությունում երևան հանվեցին մեր ռեժիսյորներից մի քանիսի սխալները: Այդ դիսկուսիան մի անգամ ևս ցուց տվեց, որ սոցիալիստական թատրոնի զարդացման հիմնական գծից ամեն մի շեղում կարող է հանդիցնել դաշտարական-ստեղծագործական վրիպումների:

Խորհրդակցությունը նշեց թատերական գործը բարելավելու մի շարք միջոցառումներ: Սովետահայ թատրոնի գործիչները ևս մտան ստեղծագործական զարդացման մի նոր փուլ:

Այդ պայմաններում էր, որ իրականացավ Վ. Վարդանյանի «Հեռավորը» բեմադրությունը:

Պիեսի ընտրությունն արդեն շատ բանով վճռում էր բեմադրության հաջողությունը: Աֆինոգենովի «Հեռավորը» պիեսը պատկանում է այն ստեղծագործությունների թվին, որոնց մեջ մարդկային բարդ բնավորությունների միջոցով ողջ խորությամբ բացվում է սովետական հայրենասիրության թեման: Աֆինոգենովի հակումը դեպի Զեխովի ստեղծագործությունը իր կնիքն է դրել այդ պիեսի ողջ կառուցվածքի վրա: Արտաքնապես դեպքերն այնտեղ ծավալվում են շատ դանդորեն, բայց դրա մեջ հոսում է ներքնապես լարված ու հագեցած կյանքը: «Հեռավորը» պիեսում ավելի, քան Աֆինոգենովի պիեսներից որևէ մեկում, զգացվում է գորկիական ստեղծագործության բարերար ազդեցությունը, հատկապես դրական կերպարների նկարագման մեջ: Դա մի պիես էր, որ համապատասխանում էր Վ. Վարդանյանի ստեղծագործական նախասիրությանը: Հենց

այդ պիեսում էր, որ պետք է հաստատվեր նրա ռեժիսյուրական արվեստը, որովհետև եթե ռեժիսյորը չկարողանար բացել նման պիեսը, նա կասկածի տակ կդներ իր իսկ ունեցած նախասիրությունը:

Գլխավոր դժվարությունն այն էր, որ պիեսը հագեցած էր ներքին կոնֆլիկտով և գրեթե զուրկ էր արտաքին դինամիկայից: Բեմադրական տեխնիկայի իմաստով «Հեռավորը» դժվար երկ է:

Բացի դրանից, բեմագրողի առաջ կանգնում էր մի կարևոր հարց ևս, որի ճիշտ լուծումից էր կախված պիեսի գաղափարական հնչեղությունը: Բանն այն է, որ Աֆինոգենովն իր այդ պիեսով կառուցել էր սյուժեիութին ու իդեական անտիթեղ, հակադիր Գորկու «Եգոր Բուլըչովը և ուրիշները» պիեսին: Մալկոն՝ հեռավորարևելյան Կարմիր Բանակի կորպուսի հրամանատարը, անհույս հիվանդ է, տառապում է թոքերի սարկոմացով: Նրա վագոն-սալոնը տեխնիկական պատճառներով ուշանում է «Հեռավորը» կիսակայարանի փակուղում: Բոլորը գիտեն Մալկոյի մոտալուս մահվան մասին: Հրամանատարն ինքն էլ գիտե այդ, թեև շրջապատողներին թվում է, թե նա չի կուհում իր վերահաս մահը:

Մալկոյի և սլաքավար Վլասի միջև ծագող կոնֆլիկտը իդեական հնչեղություն ուներ: Բայց բավական էր այդ կոնֆլիկտը դարձնել կենտրոնական, որպեսզի ներկայացումը սիսալ հնչեր, շարտահայտեր հեղինակի գըլխավոր միտքը: Ինչպես Գորկու «Եգոր Բուլըչովում» շէր կարելի Բուլըչովի պայքարը մահվան դեմ դարձնել բե-

մաղրության գլխավոր խնդիրը, այնպես էլ «Հեռավորում» աններելի կլիներ մահմին գամված մարդու հոգեբանությունը դարձնել գլխավորը: Ուժիսյորը ճիշտ է հասկացել, որ Աֆինոգենովի պիեսի հերոսների կոնկրետ ձգտումների հետևում բարձրանում է երկրորդ պլանը, հոգենոր կյանքի պլանը, որ ավելի կարևոր է, քան առաջինը:

Ամենադժվարը այդ երկրորդ պլանը գտնելն էր, հանուն որի և զրկել էր այդ պիեսը:

Վ. Վարդանյանը կարողացավ տեսնել ու հասկանալ «Հեռավորը» պիեսի փիլիսոփայական խորությունը. նրա համար հասկանալի էր, որ Մալկոյի և Վլասի վեճը մեծանշանակ վեճ է կյանքի ու մահվան մասին: Նախկին սարկավագ Վլասի համար մահը ամեն ինչի վերջն է: Ըստ Վլասի, անձնական մահով կյանքը առհասարակ վերջանում է: Եվ ահա այդ հայացքին է հակադրվում մոտալուս մահվան դատավարութված Մալկոյի փիլիսոփայությունը, մարդ, որ իր մեջ կրում է նոր էպոխայի լուսավոր, գուցե ոչ բոլորի համար հասկանալի էռթյունը:

Այսպիսին է կոնֆլիկտի զարգացման ընթացքը: Բայց պիեսում կա մեկ ուրիշ թեմա, որ բխում է այս հիմնական գծից: Հեռավոր անկյուններում ապրող, Մոսկվայի մասին երազող մարդկանց թեման, մարդիկ, որոնք կարծում են, թե իրենք կտրված են «մեծ» կյանքից: Շրջագայող ուղղղութիւնից կավրենտին երազում է գնալ Մոսկվա, նա ծարավի է փառքի, իսկ «Հեռավորում» ի՞նչ

փառք կարող է լինել: «Հեռավորը» կիսակայարանի լավ մարդկանց մոլորություններին Աֆինոգենովը հակառակում է Մալկոյի մտքերը: Սա համոզում է նրանց, թե մեր երկրում աշխատանքն է փառք բերում: Միայն աշխատանքն է նշանավոր դարձնում մարդուն՝ ուր էլ որ նա լինի:

Ահա այսպիսի խնդիրներ էր կնում Աֆինոգենովի պիեսը Վ. Վարդանյանի առաջ: Ռեժիսյորը ճիշտ կուահեց հեղինակի մտահղացումը և հիանալի մարմնացրեց այն Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեմի վրա:

Հանդիսականներն ու քննադատները «Հեռավորը» ներկայացումը դիտելուց հետո անմիջապես խոսեցին Վ. Վարդանյանի ռեժիսյորական արժանիքների մասին, ճանաչեցին նրա աշխատանքի առավելությունները: «Խորհրդային Հայաստան» թերթի ոեցենզենտը գրում էր. «Ռեժիսյոր Վ. Վարդանյանի բեմադրությունը հատկապես արժեքավոր է այն տեսակետից, որ նա կարողացել է գործողություններով ո՛չ հարուստ այս պիեսը դարձնել շարժուն, գործողությունը, եթե կարելի է ասել, փոխադրել մարդկանց ներսը, ճշտորեն դրսենորելով նրանց հոգեբանական անցումները, հուզականությունը»:

Ռեժիսյորի գլխավոր ծառայությունը եղել է այն, որ նա բացել է «Հեռավորի» ակտուալ թեման: Ի տարրերություն Զեխովի երեք քույրերի, որոնք այնպես էլ շարունակեցին երազել Մոսկվայի մասին, դրա մեջ տեսնելով իրենց միակ փրկությունը, «Հեռավորի» հերոսները հասկացան, որ ստեղծագործ աշխատանքն է ամենա-

գեղեցիկ ու մատշելի երազանքը, աշխատանքն է մարդու կոչումն ու փառքը: «Հեռավորը» ներկայացումը ընդհանրացած ձևով հաստատում էր մարդկայնության նոր ըմբռնումը: Մուկվայում թե տասնյակ հազարավոր կիլոմետրերով նրանից հեռու, խուզ տայգայում, Հեռավորը կիսակայարանում թե այլուր՝ սովորական մարդը ամենուրեք ապրում է ընդհանուր գաղափարներով, երկրի կյանքի զարկերակն ամենուրեք խփում է հավասար թափով և ուժգնությամբ:

Այս մտքի հաստատմանը Վ. Վարդանյանը հասել է պիեսի հերոսների ներքնաշխարհը բանալով: «Հեռավորի» բեմադրությամբ Վ. Վարդանյանը հաստատապես մտնում է այն ռեժիսյորների շարքը, որոնք հայրենի թատրոնը տանում էին սոցիալիստական ռեալիզմի ուղղով:

«Հեռավորի» բեմադրությունը փորձաքար է թե՛ ռեժիսյորի. և թե՛ գերասանի համար, որովհետև տեսարանները կառուցելիս ռեժիսյորը փաստորեն տրամադրության տակ չունի սյուժետային մի հիմնական գիծ, որ կարող էր զարգանալ ամեն մի տեսարանում: Եթե ռեժիսյորը փորձեր ուշադրությունը բենուել գործողությունների արտաքին փոքրիկ ինտրիկների վրա, դրաման կառող էր տապալվել. բայց բեմադրության արժեքը հենց այն է, որ ռեժիսյորը ըմբռնել է դրամայի ստեղծագործական յուրահատկությունը, և նպատակադրվել է շկորշընել և ո՛չ մի խոսք, հոգեբանական ո՛չ մի նրբերանգ:

Մեծ ուշադրությամբ էին հետևում դերասաննե-

ըր ամեն մի խոսքին, շեշտին, հոգեբանական խաղի ամեն մի ելևէջին։ Ոեժիսյոր Վ. Վարդանյանն իր միշտացենները կառուցել էր այնպես, որ պերսոնաֆներին առաջին պլանի վրա քաշելով՝ դնում էր ուշադրության կենտրոնում։ Վ. Վարդանյանը միանգամայն մըտածված ձեռվ նրանցից ամեն մեկին «տրիբունա» է տալիս, որպեսզի կարողանա փոքրիկ առիթ շփախցնել։ Հենց այդ մոտեցումով ոեժիսյորը խստիվ սահմանագծում է հերոսներին և աշխատում է, որ տիպերը պարզ գծված լինեն, ամեն մեկն ավարտվի մինչև վերջ և սկսվի մյուսը։ Դա հնարավորություն է տալիս հերոսներին իսկապես բացվելու և այդ դրաման հասցնելու հանդիսականին։ «Վարդանյանի բեմադրության մեջ իշխում է ոեալիզմը»։ Այնուհետև ոեցենզինտն իրավամբ նկատում է. «Վ. Վարդանյանը ցուց տվեց, որ աճում է մի նոր ոեժիսյոր, որը իր առաջին փորձով լավ քննություն տվեց»¹:

Վ. Վարդանյանի ոեժիսյորական հետագա գործունեությունը ցուց է տալիս, որ սովետական պիեսի առաջին ինքնուրույն բեմադրության մեջ գտնված մեթոդուրիկական դրույթները հաստատվեցին ու զարգացան հաջորդ տարիներին։

Այս բեմադրության վրա աշխատելիս Վ. Վարդանյանն առաջին անգամ գործ ունեցավ սովետահայ թատրոնի ճանաշված դերասաններ Հրաշյա Ներսիսյանի,

¹ «Խորհրդային արվեստ», 1936, № 6;

Միքայել Մանվելյանի, Սյուզան Գարագաշի, Ռուզաննա Վարդանյանի հետ:

Չատ կարևոր էր, թե երիտասարդ ռեժիսյորն ինչպես կմոտենա դերասաններին, կկարողանա՞ , արդյոք, իր հղացումներով համակել վարպետներին, կհավատա՞ն նրանք երիտասարդ ռեժիսյորին: Այս իմաստով էլ «Հեռավորը» փայլուն հաղթանակ էր երիտասարդ ռեժիսյորի համար:

Եթե կամենանք երկու խոսքով բնութագրել դերասանների հետ ռեժիսյորի տարած աշխատանքը, ապա ամենից առաջ պիտի հիշենք անկեղծ ու բնական մոտեցումը բեմական կերպարի բացահայտման մեջ: Այժմ, ժամանակակից թատերական արվեստի պահանջներից ելնելով, կարելի է ասել, թի դրանք բեմարվեստի տարրական նախադրյալներ են, բայց ինչպես ցույց է տալիս մեր թատերական առօրյան, այդ հարցերը տակավին չեն գտել իրենց լուծումը:

«Հեռավորը» ներկայացման բոլոր գրախոսները միաբերան նշում էին դերասանական խաղի մեղմությունն ու բնականությունը:

Կարելի էր ենթադրել, որ հրամանատար Մալկոյի դերակատար Հրաչյա Ներսիսյանը կստեղծի բուռն կըրքերով ապրող բնավորություն, և որ նրա տեմպերամենտը ստվերի տակ կպահի մյուս դերակատարներին: Մակայն, ինչքան էլ զարմանալի լինի, «Հեռավորը» ներկայացման ամենամեղմ դերակատարումն էր ներսիսյանի Մալկոն:

Կրակուտ մոնոլոգներ կամ արտակարգ դինամիկ միզանսցեններ չկային Ներսիսյանի ստեղծած այս կերպարի համար: Արտաքնապես նույնիսկ միապաղաղ դերապատկերի մեջ բոցկլտում էին նրա մտքերն ու հուզերը: Հաճախ Ներսիսյան-Մալկոն ավելի արտահայտիչ էր լուռթյան մեջ: Դերի այս յուրահատուկ նկարագիրը Ներսիսյանը, ուժիսյորի օգնությամբ, իսկապես վարպետորեն էր բացահայտում: Զափազանց հետաքրքրական էր Ներսիսյան-Մալկոյի և Մանվելյան-Վլասի բանավեճը:

Դյուրին չէր հաղթահարել Մանվելյան-Վլասի փիլիսոփայությունը, հաստատել մահկանացու մարդու մեջ նրա անմահության գիտակցությունը: Ուժիսյորը և դերասանները հասկացել էին, որ այս բանավեճը չի կարելի կրքերի վրա կառուցել, թեև դա կարող էր և էֆեկտով հնչել բեմից:

Եվ ահա խոսում են երկու հակառակ մտածողության տեր մարդիկ. երկուսն էլ խելոք, երկուսն էլ իրենց համոզմունքների մեջ հաստատուն: Դրական կերպարի խնդիրը բարդանում է նաև նրանով, որ Մանվելյանի Վլասը շատ ավելի լավ գիտե իր շրջապատը, մարդկանց առօրյա հոգսերը: Զափազանց խորամանկ էր Մանվելյանի ստեղծած Վլասը: Ներսիսյան-Մալկոն դիմում է հեղնանքի, ապա և մեղմ, նույնիսկ սիրալիր տոների, իսկ հենց որ խոսքը գալիս է գլխավոր թիմային՝ նա անողոք է դառնում, բայց միշտ զուսպ, միշտ շափի զգացումը պահպանելով: Կերպարների նման բացահայտման շնորհիվ էր, որ հանդիսատեսը հավատ էր

տածում աշքի առաջ կատարվող գործողության նկատմամբ: Բնական ու մեղմ էր Ռուզաննա Վարդանյանի ստեղծած Վերա Նիկոլաևնան: Հաստկապես ուժեղ էր դերասանուհու խաղը այն պահերին, երբ նա բացում էր հերոսուհու վիշտը:

Ուշագրավ է, որ «Հեռավորը» ներկայացման բոլոր դրական կերպարները միանգամայն կենդանի և բնական խարակտերներ էին, լինելով բեմադրության ամենահաջող դերակատարումները: Սա ևս մեծ հաղթանակ էր երիտասարդ ոեժիսյորի համար, քանի որ մինչև օրս էլ մեր թատրոնների բեմերում հաճախ չէ, որ հանդիպում ենք դրական ցայտուն ու համոզիչ կերպարների: Ներկայացման կերպարների ոեժիսյորական և դերասանական նման բացահայտումը հանգեցնում էր այն բանին, որ «մի տեսակ հարազատ, վարակիչ մթնոլորտ կապում է դաջլիճն ու բեմն իրար հետ, և հանդիսատեսներից ամեն մեկը կարծես իր մեջ փնտրում է այդ հերոսներին»¹: Համնել նման արտահայտովթյան՝ իրոք որ մեծ հաջողություն էր ոեժիսյորի համար, այն էլ երիտասարդ ոեժիսյորի: Վավիկ Վարդանյանը այն ոեժիսյորներից է, որոնց համար դերասանի հետ աշխատելը ներկայացում ստեղծելու կարևորագույն և հիմնական էտապն է: Տողերս գրողին քանից վիճակվել է ներկա լինել Վավիկ Վարդանյանի փորձերին և՝ հայկական, և՝ Երևանի ռուսական թատրոնում: Ոեժիսյորի առաջին փորձերն

¹ «Խորհրդադին արվեստ», 1986, № 6:

անցնում են անհետաքրքիր։ Սակայն, երբ նա սկսում է խորանալ հոգեբանական էության մեջ, փորձերը բնականորեն դառնում են այնքան հետաքրքիր, որ դերասանների համար արդեն դժվար է դառնում անշատվել գործող անձանց հոգեբանական նրբերանգներից, որոնք առաջին հայացքից չեն էլ նկատվում պիեսում։

Վավիկ Վարդանյանը լիակատար ազատություն է տալիս դերասանին, այն աստիճանի ազատություն, որ որոշ դերասաններ անգամ շփոթվում են։ Կամաց-կամաց, համարյա աննկատ, ոեժիսյորը ներգրավում է դերասանին կերպարի ներքնաշխարհը։ Ազատություն տալով դերասանին, ոեժիսյորը ըստ էության հնարավորություն է ստեղծում նրա երևակացության դրսեորման համար։ Եվ ոեժիսյորն ազատ օգտվում է այդ երևակայությունից։ Նա երբեք դերասանից առաջ չեն գնում, այլ հետեւում և ուղղություն է տալիս նրան։ Նրա կարծիքով ոեժիսյորը պետք է շատ համբերատար լինի, որպեսզի կարողանա դերասանին հասցնել այնպիսի վիճակի, երբ նա բնականորեն կընկալի ոեժիսյորի հուշած ամեն մի միտք։ Իսկապես, այդպիսին է Վարդանյանը փորձերի ժամանակ։ Դերասանի բնական «մուտքը» դերի մեջ, նրա ինքնուրույն կողմնորոշումը բոլորովին էլ չեն բացասում ոեժիսյորի դեկավար դիրքը, քանի որ նա իր ըմբռնումները ներշնչում է դերասանին։ Ճիշտ է, այս բոլորը շափազանց կարևոր են ոեժիսյորի համար, բայց ոեժիսյորական արվեստին տիրապետելու համար այսքանը դեռ բավական չէր։ Պետք է ասել, որ Վ. Վարդան-

յանը իր առաջին աշխատանքներով տիրապետեց ոեժի-սուրայի գլխավորապես այս կողմին: Նա դեռ չէր թևա-կոխել ոեժիսուրայի մի այլ, ոչ պակաս կարեոր ոլորտը՝ որն ընդգրկում էր ներկայացման կոմպոզիցիա ստեղծելու բարդ պրոցեսը: «Հեռավորը» այդ տեսակետից մի-այն սկզբ էր, այդ կարողության հետագա զարգացումը եկավ տարիների փորձի, տքնածան աշխատանքի, ան-հանգիստ որոնումների հետ:

«Հեռավորը» բեմադրելուց մեկ տարի անց Վ. Վարդանյանը Երևանի նորաստեղծ ոուսական թատրոնում բեմադրում է «Առերեսում» պիեսը:

«Առերեսում» պիեսի դրամատուրգիական որակը շատ բանով զիշում էր «Հեռավորին»: Այստեղ չկա բնա-վորությունների հոգեբանական այն խորությունը, որ հատուկ է Աֆինոգենովի պիեսին: Տուր եղբայրների այս պիեսի հիմքում դրված արկածային ինտրիգը զրկում էր մարդկային բնավորությունները խոր կերպով բացելու հնարավորությունից: Ի տարբերություն «Հեռավորի», այստեղ հեղինակի ողջ ուշադրությունը բևեռված էր ար-տաքին դինամիկայի վրա:

Եվ եթե Աֆինոգենովի պիեսը բեմադրելիս, կերպար-ների ներքին հոգեբանությունից ելնելով, Վ. Վարդան-յանը ձգտում էր նրանց վարքագիծը արտաքին դինամի-կայով հարստացնել, ապա «Առերեսում» պիեսում ոե-ժիսյորը մտահոգվում է պիեսի ներքին դինամիկան խո-րացնելով:

Ոեժիսյորն այս պիեսում կարեոր թեմա տեսնելով,

ցանկանում էր բացել «Առերեսումի» գլխավոր և անվիճելի առավելությունը: Զնայած պիեսի դեղեկտիվ հենքին, այնտեղ հնչում էր զգոնության, թշնամական դիվերսիայի դեմ պայքարելու կարևոր և ակտուալ թեման:

Երևանի ոռուսական թատրոնի ներկայացման մեջ սովետական քննիչ Լարցեկի պայքարը ֆաշիստական լրտես կելլերի դեմ ընկալվում էր իրու ժողովրդի պայքար՝ ընդդեմ թշնամու: Վ. Վարդանյանն իր բիմադրությունը կառուցել էր այնպես, որ այնտեղ առերեսման միջոցով կելլերին դիմակազերծ անելը գործող անձանց ներքին համոզման ու վարքագծի արդյունքն էր դառնում: Պատկերավոր էր ու դինամիկ առերեսման տեսարանը, ուր սովետական ազնիվ քաղաքացիները՝ բրիգադիր Կաշիրինը, կոլտնտեսական Տոլստիխը, բժիշկ Ռուդեը, դերձակ Գուրեմիշը, կարմիրբանակային Պրիխոդկոն դիմակազերծ են անում լրտեսին՝ սովետական մարդկանց թշնամուն:

Ռեժիսորը առաջին պլանն էր մղում պիեսի հայրենասիրական թեման, և «Առերեսում» պիեսը հաջողություն էր գտնում հասարակության մեջ: Քննադատությունը ռեժիսորի այդ աշխատանքը գնահատել է իրու «փայլուն հաղթանակներից մեկը», մեկ անգամ ևս նշելով նրա ստեղծագործության հիմնական գիծը. «Վ. Վարդանյանը պարզ ու անմեկին ձևով է կառուցել ներկայացման ռեժիսորական-քիմական պլանը»¹:

¹ «Խորհրդային Հայաստան», 1937, 17 նոյեմբերի:

Նախապատերազմյան 1937—1941 թվականները
վճռական էին ուժիսյոր Վ. Վարդանյանի համար։ Հենց
այս շրջանում է, որ նա մեկը մյուսի ետևից սովետա-
կան պիեսներ է բեմադրում, որոնք կարևոր նշանակու-
թյուն են ձեռք բերում սովետահայ թատրոնի պատմու-
թյան մեջ։

1938 թվականին հայկական թատրոնը սովետական
պիեսների բեմականացման մեծ փորձ էր ձեռք բերել։
Ժամանակակից դրական հերոսի կերպարը ամուր կեր-
պով հաստատվել էր հայկական թատրոնում, և նա զար-
գանում էր սովետական թեմատիկան բացելու ճանա-
պարհով։ Դրա փայլուն վկայություններից էր Լ. Ռախ-
մանովի «Անհանգիստ ծերություն» («Պրոֆիսոր Պոլե-
մակ») պիեսի բեմադրությունը, որ հանձնարարվել էր
Վ. Վարդանյանին։

Լ. Ռախմանովի պիեսը այդ շրջանում արդեն հայտ-
նի էր Մոսկվայի և Լենինգրադի թատրոնների բեմադրու-
թյուններից։ Այս հանգամանքը ոչ այնքան օգնեց, որ-
քան դժվարացրեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնի
կողեկտիվի գործը։ Թատրոնից այժմ սպասում էին ոչ
թե հայտնի պիեսի բեմադրության կրկնություն, այլ
ինքնուրույն բեմական լուծում։

«Անհանգիստ ծերություն» պիեսի հայկական բեմա-
դրության իդեան չէր սահմանափակվում հին ինտելի-
գենցիայի առաջավոր թեկ՝ ուլլզուցիայի կողմն անց-
նելու ընթացքի պատկերմամբ։ Այդ իդեան, իհարկե,
կար ներկայացման մեջ, բայց ուժիսյորը մի փոքր հե-

ուացել էր դրանից, հետամուտ լինելով այն նպատակին, որ հանդիսատեսը գեղարվեստորեն ընդհանրացված պատկերացում ստանա նորի և իր դարն անցած հնի պայքարի մասին։ Նոր աշխարհայացքի ներկայացուցիչ թուշարովի կերպարը, որքան էլ ցայտուն էր երեանյան ներկայացման մեջ, ամենեին չէր մթագնում պրոֆեսոր Պոլեժակի սքանչելի կերպարը։ Ողջ ներկայացման հուզական կենտրոնը Պոլեժակ-Վաղարշյանն էր։ Ռեժիսորն ու դերակատարը պրոֆեսոր Պոլեժակի կերպարով, որի նախատիպը նշանավոր գիտնական Տիմիրյազեն էր, հաստատում էին կենսասեր ու անհանգիստ հոգու երիտասարդության հաղթանակը։

Հետաքրքիր էր ու յուրահատուկ այդ գաղափարի բեմական մեկնաբանությունը, որ տվել էր ուեժիսյորը։ Թեմայի բացահայտման հետաքրքրությունն ավելացնում էր այն, որ երիտասարդության համար պայքարում էր ֆիզիկապես ծերացած պրոֆեսորը։ Ռեժիսորը ամեն կերպ ընդգծել էր այդ։ Պոլեժակի տանը կատարվող տեսարանները, ուր գործում էին ծեր գիտնականն ու նրա տարեց կինը, ուեժիսյորը կառուցել էր դանդաղ ուիթմով, ասես կամենալով շեշտել ծերությունը։ Հանգիստ ու անշարժություն՝ ահա այդ միջոցների առանձնահատկությունը։ Բայց հենց որ այդ խաղաղ անկյունն է ներխուժում նոր երիտասարդ կյանքի հոսանքը՝ ուեժիսյորը քանդում է դանդաղ ուիթմը, միզանացենները դառնում են շարժուն։ Ոչ մի էֆեկտ, ամեն ինչ թվում էր սովորական ու բնական։

Այդ բեմադրության մեջ Վ. Վարդանյանը հավատար-
մորին շարունակում էր սկսած ստեղծագործական գիծը,
որը չգիտեր բեմական էֆեկտներ, հինվում էր կյանքի
ճշմարտության վրա: Ռեժիսյորին հաջողվեց ստեղծել
ինկապես գրավիչ ու բովանդակալից ներկայացում, մեկ
անգամ ևս Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեմում
հաստատելով սովորական էպոխայի դրական հերոսնե-
րի լիարյուն կերպարները:

Ռեժիսյորի այդ աշխատանքի բնութագիրը տվել է
Ս. Մելիքսեթյանը իր «ՊուТЬ հաшեց թատրոն» գրքում.
«Անհանգիստ ծերություն» ներկայացումն իր ժամանակ
մեծ տպավորություն է թողել հանդիսատեսների վրա,
զրավել իր բարձր գաղափարայնությամբ և խոր հուզա-
կանությամբ: Թարմ, լավատեսական ոգով հագեցած
այդ ներկայացման ուժը ռեալիզմի մեջ էր: Բեմադրող
Վ. Վարդանյանը և գերասանները ճշմարտորին արտա-
ցոլել էին ոչ միայն պատմական ռենուլյուցիոն իրակա-
նության բարձր պաթուսը, այլ էպոխայում ապրող դրա-
կան հերոսների (Պոլեմակ, Մարիա Լուզնա, Բոշարով և
ուրիշներ) ձգտումներն ու իդեալները, այլև խորապես
գիտակցված ձևով փայփայիլ այդ կերպարներն ու մար-
դունչել նրանց համար: Այս հատկանիշը կարմիր թելի
նման անցնում էր ողջ ներկայացման միջով: Մարդը իր
հետաքրքիր ներքնաշխարհով, իր հոգու բաղմատեսակ
շարժմամբ, իր բովանդակալից գործունեությամբ՝ ահա
այն հիմքը, որի վրա կառուցված էր ողջ ներկայացումը:
Դերասանի արվեստը, նրա վարպետությունը այստեղ

զրված էր առաջին պլանում: Իր ժամանակին մամուլը այս ներկայացումը գնահատել է իրեն բեմական մի ստեղծագործություն, որ «Հարվածում էր ֆորմալիզմի մնացորդներին»:

«Անհանգիստ ծերություն» բեմադրության մեջ մի անդամ ևս փորձության ենթարկվեց ոեժիսյոր Վ. Վարդանյանի աշխատանքի հիմնական ոճը, որի ստեղծագործական երեակայությունը հիմնականում զբաղված էր հեղինակի գործի բովանդակությունը ճշմարտացի և հարազատ բացահայտելով:

Վ. Վարդանյանի բեմադրությունների մեջ չես հանդիպի էֆեկտավագոր կառուցված միզանսցենների, չես տեսնի գործողությունը լրացնող բոլորովին անսպասելի և փայլուն դետալներ: Հենց այդ է ասում «Անհանգիստ ծերություն» ներկայացման ոեցինզենտը. «Բեմադրողներ. Վ. Վարդանյանը կարողացել է տալ հաջողված, հայտողիշ միզանսցեններ, խուսափելով ավելորդ և էժանագին էֆեկտներից»:

Ուշագրավ է, որ հենց «Անհանգիստ ծերություն» բեմադրության հետ է օրգանապես կապվում նաև սովորական թատրոնի պրակտիկայում հակառելիութական էլեմենտների ոեցիդիվների վերջնական հաղթահարումը: «Խորհրդացին Հայաստան» թերթում լույս տեսած «Մի հարված ևս թատերական ֆորմալիզմին»¹ հոդվածի հեղինակները պարզ ու որոշ գրում են, որ այդ բեմադրու-

¹ «Խորհրդացին Հայաստան», 1938, 20 հունիսի:



Տեսարան «Ազգակ Երկրուդ» ներկաւոցումից

Կառավարություն
Գուղակական
Դրամատիկական
Թատրոնից



Հետարան «Ռոմեո և Ջոլիետա» ներկայացումից

Տեսարան «Աննա Կարենինա» ներկայացումից



թյամբ թատրոնը իր բեմից վերջնականապես արտաքսում է ֆորմալիզմը, հաստատելով սոցիալիստական ռեալիզմի մեթոդը և, դրանով իսկ, կանգնում սովետական լավագույն թատրոնների շարքում:

Վերը հիշված հոդվածում Վ. Ղազանչյանը և Ռ. Շիրոյանը վարդանյանի, իրքու ոեժիսյորի մասին, գրում են, «Անհրաժեշտ ենք համարում հատկապես ընդգծել շնորհալի երիտասարդ ոեժիսյոր Վավիկ Վարդանյանի ստեղծագործական ունակությունը: Ծիծիսյորը այս բեմադրության մեջ մերժել է մեխանիկական գործողությունների մեթոդները: Նրա վարպետությունը այս բեմադրության մեջ արտահայտվում է նրանում, որ ինքը՝ ոեժիսյորը, շի երևում, նա ձուլվում է ողջ բեմադրության մեջ: Արտաքուստ նա անտեսանելի է, բայց ըստ էության նա դրսևորվում է ողջ ներկայացման ընթացքում»:

Սակայն, բանը միայն այն չէր, որ ոեժիսյորը ձգտել էր մնալ աննկատ, որպեսզի ոշինչ շհշեցնի իր մասին, որպեսզի բեմում արտացոլվի կյանքը:

Արդեն իսկ Լ. Ռախմանովի պիեսի բեմադրության մեջ Վ. Վարդանյանը պարզորոշ է դարձնում իր ոեժիսյորական սկզբունքները, անվերապահորեն ընդունելով և հետևողականորեն կենսագործելով Գեղարվեստական թատրոնի ստեղծագործական սահմանումները:

Վ. Իվ. Նեմիրովիչ-Դանչենկոյի այն թևավոր խոսքը, թե «ոեժիսյորը պետք է մեռնի դերասանի խաղի մեջ»,

Երկար ժամանակաշրջան Վ. Վարդանյանի համար դարձավ ղեկավար սկզբունք:

Հայտնի է, որ ՄԽԱԾ-ի հիմնադիր Կ. Ստանիսլավսկին ավարտված մի ուսմունք չի ստեղծել ոեժիսյորական արվեստի մասին: Նրա «սիստեմը» հիմնականում ընդգրկում է ղերասանի ստեղծագործության ոլորտը: Նա մտադիր էր թատերական արվեստի մասին նախապատրաստվող գործերից յոթերորդը նվիրել ոեժիսուրային, բայց չհասցըց անել այդ:

Հայտնի է նաև այն, որ Վ. Իվ. Նեմիրովիչ-Դանչենկոն ոեժիսյորին դիմում է իրեն պատեղծագործական երեք կողմ ունեցող մի գործիշ: Երբ նա ասում էր, թե ոեժիսյորը պետք է «մեռնի» ղերասանի մեջ, նա նկատի ուներ ոեժիսյորի գործունեության երեք կողմերից մեկը միայն և ոչ թե նրա ողջ գործունեությունը:

Այս բոլորը, անկասկած, հայտնի էր ոեժիսյորներին, որոնք հաստատակես կանգնեցին «ոեժիսյորը պետք է մեռնի ղերասանի մեջ» թեզի պաշտպանության դիրքերում: Թե ինչ հետեւանքներ ունեցավ այդ թեզին անվերապահորեն հետևելը, լավ հայտնի է թատրոնի հետպատերազմյան շրջանի պրակտիկայից, երբ գորեթե բոլոր թատրոններում երևան են գալիս գորշ, նույնանման, բեմական վառվուուն ձևերից, թատերայնությունից զուրկ ներկայացումներ:

Արդյոք անվերապահորե՞ն էր հետևում Վ. Վարդանյանը վերոհիշյալ թեզիսին: Այս Սակայն Վարդանյանի ստեղծագործական կենսագրությունը ցույց է տալիս, որ

նա ճիշտ է հասկացել Նեմիրովիշ-Դանչենկոյի թեզը, դա սկզբունքորեն չի անջատել ոեժիսյորին մյուս պարտականություններից և, որ ամենակարևորն է, ճիշտ էր որոշում հայրենական թատրոնի պատմության այն ժամանակահատվածը, երբ այդ ուղղությանը հետեւը կառող էր միայն և միայն նպաստել նրա զարգացմանը:

Եվ նման մոտեցմամբ միայն պատմականորեն կարելի է օբյեկտիվ գնահատական տալ ոեժիսյորի ստեղծագործական ուղղուն: Իսկ հայ թատերական արվեստի զարգացման պրոցեսն ընթանում էր այնպես, որ Վ. Վարդանյանի գործունեությունը հարստացնում էր մեր թատերական կուլտուրան:

Արդեն ասվել է, որ հայ թատերական կուլտուրայի ամենաթույլ կողմը անցյալում եղել է գեղարվեստական անսամբլի բացակայությունը: Սովորաբար թատրոնի ստեղծման սկզբից արդեն այդ էական թերությունը հաջողությամբ հաղթահարվում էր: Սովետահայ թատրոնում գեղարվեստական անսամբլի սկզբունքը հաստատելու մեջ հատկապես մեծ է ոեժիսյորներ Ա. Բուրջալյանի, Ռ. Սիմոնովի, և. Քալանթարի դերը:

Հայ սովետական թատրոնի սկզբնավորման շրջանում անսամբլայնության խնդիրը եղել է ամենակարենում անսամբլայնության խնդիրը եղել է ամենակարենում վորներից մեկը: Սովետական Հայաստանում թե Մոսկվայուներից մեկը: Սովետական Հայաստանում թետրովայում, ուր դաստիարակվում էին հայ թատրոնի պրոֆեսիոնալ երիտասարդ կադրերը, ամենուր անսամբլի ֆեսիոնալ երիտասարդ կադրերը, ամենուր անսամբլի խնդիրը առաջնակարգ խնդիր էր դարձել: Այսպես, դեռևս 1923-ին Լսոն Քալանթարը, որին հանձնարարված էր

Առաջին Պետական հայ թատրոնի կազմավորումը, գրել
է. «Նա, ով մտահոգվում է թատրոնական կուլտուրայով
և ոչ սոսկ թատրոնով, պետք է պարզ գիտակցի, որ այդ
ուղղությամբ աշխատանքի հիմք պետք է կազմի տաս-
նյակ մարդկանց ներդաշնակ կամքը, ոգևորությունը,
ստեղծագործական մղումը, սրտերի համազարկ բարա-
խումը և առաջնորդվող նպատակների համակարգ ըմ-
բռնումը»¹: Այս սկզբունքով էին ընթանում պետական
թատրոնի աշխատանքները, այս սկզբունքով էլ դաս-
տիարակվում էին Մոսկվայում հայ ստուդիականները:
Մոսկվայի հայ գրամատիկական ստուդիայի ղեկավար
Ռուբեն Սիմոնովը 1924-ին Զարենցի խմբագրած «Standard» ամսագրում գրել է. «Այստեղ, Մոսկվայում, ինձ
վիճակված է հայկական թատրոնի համար մի փոքր
գործ կատարել: Ինձ համար պարզ է, որ թատրոնի զար-
գացումը նույն ուղին է ունենալու ինչպես այստեղ, այն-
պես էլ ՀՍԽՀ-ում: Մեր թատրոնի պակասությունն այն
է, որ բացակայում է ներկայացման ներքին կյանքի
կոնստրուկցիայի ժամանակակից ֆորման: Այն ամենը,
ինչ որ հետաքրքիր է կովկասյան թատրոնում՝ հիմնը-
ված է լոկ գերասանական ու ուժիսյորական անհատ-
ների վրա: Այնինչ ներկայումս թատրոնական կոնս-
տրուկցիայի միակ ձևն է կողեկտիվիզմը... Կոլեկտիվ
միության ահա այդ սկզբունքի հիման վրա է, որ ես
տանում եմ Մոսկվայի հայ գրամատիկական ստուդիայի
աշխատանքները»:

1 «Պայքար», 1923, № 10—11:

Հայ թատրոնում անսամբլայնության սկզբունքը հաստատող ոեժիսյորները հիմնականում հարել են Գեղարվեստական թատրոնի արվեստին: Այդ է վկայում մեր թատրոնի պատմությունը, այդ մասին մանրամասն է խոսել Լևոն Քալանթարը «ՄԽԱՏ-ի 50-ամյակը և հայ թատրոնը» գեկուցման մեջ:

Եվ պատահական չէ, որ Վավիկ Վարդանյանը, լինելով անսամբլային թատրոնի ամենաշերմ պաշտպաններից մեկը, անվերապահորեն հետեւել է միատյան ոեժիսուրայի սկզբունքին՝ «ոեժիսյորը պետք է մեռնի դիրասանի խաղի մեջ»:

Այս սկզբունքի կիրառումը հայ թատրոնում շափազանց կարևոր դեր է կատարել, սկսած 1920-ական թվականներից: Բայց 30-ական թվականների սկզբներին հայ թատրոնի պրակտիկայում նկատելիորեն աշխատանում են ֆորմալիզմի տենդենցները: Նույնիսկ այնպիսի ոեժիսյորներ, որոնք նախկինում մարտականուրեն պայքարում էին անսամբլայնության համար, այժմ նահանջում էին, ոեժիսյորական արվեստում կանգնում հնարանքների ուղղու վրա: Նորից մոռացվում է ոեժիսյորի ամենագլխավոր խնդիրը՝ աշխատանքը դերասանի հետ, դերասանի դաստիարակությունը կոլեկտիվ ստեղծագործության ոգով: Հենց այդ, անսամբլային թատրոնունի սկզբունքների տատանման շրջանում, երբ մոռացվում էր դերասանի ստեղծագործությունը և առաջին պլանն էր մզվում ոեժիսյորը, Վ. Վարդանյանն իր բհմադրություններով հաստատեց «ոեժիսյորը պետք է

մեռնի դերասանի խաղի մեջ» թեզը: Պատկերավոր ասած
դա ոեժիայորի «մահն էր», հանուն դերասանի «հա-
րության»: Նման «անձնագոհությունը» անհրաժեշտ էր
այն շրջանում, երբ անսամբլայնության սկզբունքը
դեռևս ամուր չէր հաստատվել հայկական բնեմում:
Նույնիսկ 1956 թվականին, երբ հայկական թատրոն-
ները, հայկական արվեստի տասնօրյակին հաջողու-
թյամբ ցուցադրում էին իրենց արվեստը Մոսկվա-
յում, իրավացի կշտամբանքներ էին արվում առան-
ձին կոլեկտիվների հասցեին, որ նրանց ստեղծագոր-
ծության մեջ անսամբլայնության սկզբունքը հաճախ
անտեսվում է:

Նախապատերազմյան շրջանում ոեժիայոր Վ. Վար-
դանյանի ստեղծագործության նման ուղղությունը շա-
րունակում էր այն գլխավոր գիծը, որ սկիզբ էր առել
սովորական թատրոնի հիմնագրման օրից, կոլեկտիվ
անսամբլային թատրոնի սկզբունքը հաստատող, լիար-
ժեք կոլեկտիվիստ-դերասանի դաստիարակության գի-
ծը, հայ թատրոնում ինդիվիդուալիզմի տեսնդենցը վե-
րացնելու գիծը: Ահա թե ինչու այդ շրջանում ոեժիայոր
Վ. Վարդանյանը չէր «երևում» իր ներկայացումներում:
Բայց երեսում էր անսամբլը, երեսում էին դերասանները,
տեսանելիորեն հանդես էր գալիս ողջ ներկայացման
գաղափարական-գեղարվեստական կերպարը, թեև,—
այդ էլ պետք է նշել,— առանց ոեժիայորական վառ մի-
զանցենների, առանց ոեժիայորական երեակայության
թոփշքների: Դա անհրաժեշտ մի էտապ էր, հետագա աճի

համար, ուժերը կոփելու, ռեժիսյորի արվեստի նորմալ զարգացման էտապ:

Հետաքրքիր է և օրինաշափ, որ հենց Վ. Վարդանյանին էին հանձնարարվում այնպիսի պիեսների բեմադրություններ, որոնք պահանջում էին խնամքով բացել յուրաքանչյուր կերպար, ստեղծել կուռ անսամբլ, որ ընդունակ լինի գեղարվեստորեն արտացոլել դրամատուրգի ընդհանուր և գլխավոր գաղափարը:

Վ. Վարդանյանը երբեք չի պատկանել նրանց թվին, ովքեր զուրկ են ռեժիսյորական ինքնուրույն մտքից: Նրա ռեժիսյորական որոնումները, ճիշտ է, սովորաբար զուրս չէին գալիս հեղինակի տված նյութի սահմաններից, բայց միշտ գոյություն են ունեցել և ուղղություն տրվել Վ. Վարդանյանի ստեղծագործությանը: Նրա ռեժիսյորական վարպետության տրամաբանական և աստիճանական աճը արտահայտվում է նրանում, որ յուրաքանչյուր նոր բեմադրությամբ ռեժիսյորական որոնումների ոլորտը գնալով լայնանում, խորանում է և մի շարք ներկայացումներում արտահայտվում լավ մտածված ու իրականացված միզանացեններով:

«Անհանգիստ ծերությունից» հետո Վ. Վարդանյանի «Հրացանավոր մարդը» և «Լենին» պիեսների բեմադրությունները պերճախոս կերպով վկայում են ռեժիսյորի, որին վստահվել էր այդքան պատասխանատու մի գործ, ստեղծագործական աճը: Եվ այդ պիեսների հաջող բեմադրությամբ Վ. Վարդանյանը հաստատուն կերպով

մտնում է սովհետական թատրոնի լավագույն ռեժիսյորների շարքը:

Հայ թատրոնը ժամանակակիցների կերպարները ստեղծելու իր նախընթաց ողջ աշխատանքով պատրաստ էր բեմի վրա վերարտադրելու Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեզուլյուցիայի տարիներին ժողովրդի և Կոմունիստական պարտիայի դերը: Դա հետ խնդիր չէր. հայ բեմում առաջին անգամ էր պատկերվում անմահ լենինի կերպարը:

Ն. Պոգոդինի «Հրացանավոր մարդը» պիեսի վրա Վ. Վարդանյանի կատարած աշխատանքը իր ձևով տարբերվում էր նրա նախորդ աշխատանքներից: Ռեժիսյորն այստեղ ստիպված էր բառացիորեն հետազոտական աշխատանք տանել: Անհրաժեշտ էր ուսումնասիրել սոցիալիստական ռեզուլյուցիայի բուն էպոխային վերաբերող փաստաթղթեր, կարդալ զանազան աշխատություններ, ծանոթանալ կերպարվեստագիտական նյութերի հետ, բայց այդ բոլորը դեռ բավական չէր, 1917 թվականի ռեզուլյուցիոն առօրյայի կենդանի պատկերները ստեղծելու համար: Հիմնական գործն սկսվում է ողջ կուտակածը թատերական արվեստի լեզվի վերածելու պահից: Հարկավոր էր քաղաքական հասկացողություններն ու թեղիսները փոխադրել հույզերի աշխարհը, մարմնավորել կոնկրետ մարդկանց բեմական կենդանի կերպարներում:

Աշխատավորության միլիոնավոր մասսաների համար թանկ էր ու սիրելի լենինի կերպարը: Ոչ ոք չէր նե-

որ թատրոնին, եթե նա ինչ-որ բանով հեռանար ուսուցուցիայի հանձարի կերպարից: Դործը բարդանում էր նաև նրանով, որ այստեղ չէր կարելի բավարարվել կենինի կերպարի արտաքին մտավոր նմանությամբ: Պահանջվում էր ոչ միայն դիմանկարային ստույգ նմանություն, այլև այնպիսի միզանացենների ստեղծում, որոնք դերասանին հնարավորություն կտային ցայտունորեն մարմնավորելու ոչ միայն լենինյան մտքի ուժը, այլև լենինյան ոգին, ներաշխարհը: Ռեժիսորը լավ գիտեր, որ հանդիսատեսը ոչ միայն ուշի-ուշով պիտի լսի կենինի յուրաքանչյուր բառը, այլև ուշադիր պիտի հետեւ նրա յուրաքանչյուր քայլին, ժեստին, շարժմանը:

Հայ թատրոնում «Հրացանավոր մարդը» բեմադրելու ժամանակ սովետական կինոն էկրան հանեց այնպիսի ֆիլմեր, ուր ցույց էր տրված կենինի կերպարը Շշուկինի տաղանդավոր կատարմամբ: Միլիոնավոր հանդիսատեսներ անվերապահորեն հավատացին ու սիրեցին Շշուկինի ստեղծած կերպարը: Հայ թատրոնն իր բեմից պետք է ցույց տար կենինի կերպարն այնպես, որ նա զգիշեր շշուկինյան ստեղծագործությանը: Լենինի դերաշաղին կատար Վ. Վաղարշանը կերպարը նախապատրաստելու շրջանում խոստովանել է, որ այդ գերը խաղալ տաղանդավոր Շշուկինից հետո ու նրա հետ միասին և, այդուամենայնիվ, բավարարել մեր հանդիսատեսին՝ մեծ հաջողություն է դերասանի համար¹:

Բայց ոեժիսյորի հիմնական խնդիրը այդ բեմադրության մեջ չէր սահմանափակվում միայն կենինի կերպարի պատկերմամբ։ Չափազանց կարեոր էր բեմի վրա ստեղծել հարազատ միջավայր, մարդկային ճշշմարիտ փոխհարաբերություններ՝ ռեռլուսցիայի հանճարի և նրանց միջև, ովքեր ռեռլուսցիա էին արել։ Այդ էր պարտավորեցնում հենց ն. Պոգողինի պիեսը. այստեղ դրամատուրգիական կենտրոնական հերոսը Շադրինն էր, որի կերպարը կարելի էր բացել ռեռլուսցիայի բովով անցած գյուղացու հոգեբանության մեջ թափանցելով միայն։

Ահա խնդիրներ, որոնք ծառանում էին բեմադրողի առաջ «Հրացանավոր մարդը» պիեսի վրա աշխատելիս։

Բեմադրող Վ. Վարդանյանը, նկարիչ Ս. Թարյանը և կենինի դերակատար Վ. Վաղարշյանը ստեղծագործական գործուղում են ստանում։ Մոսկվայում և կենինդրագում նրանք ուսումնասիրում են ոչ միայն գրական նյութեր, փաստաթղթեր, լուսանկարներ, այլև ծանոթանում են պատմական այն վայրերին, որոնք պետք է պատկերվեին հայ թատրոնի բեմում։ Դժբախտաբար, պարբերական մամուկում քիչ է արտացոլված ոեժիսյորի այդ քրտնաշան և գժվարին աշխատանքը։

Պիեսի վրա ոեժիսյորի կատարած աշխատանքի փուլերը վկայում են ոեժիսյորի հմտությունը, որ ստեղծագործական մտքից բացի պետք է քաղաքական մեծ տակտ ունինար, որպեսզի տեսարանները, Վ. Ի. կենինի

մասնակցությամբ, կենսականորեն ճիշտ արտացոլեին պատմական ճշմարտությունը:

Այդ աշխատանքը թատրոնին հասցրեց ցանկալի արդյունքի:

Ոեժիսյորի ստեղծագործական ժառայությունը հղավ այն, որ նա, ճիշտ բանալով պիհեսի բովանդակությունը, ստեղծեց քաղաքական և հուզական մեծ հնչեղության ներկայացում:

Թատրոնի կողեկտիվը, ոգեշնչված ստեղծագործական հաջողությամբ, ուրախ օրեր էր ապրում, իսկ ոեժիսյորի մասին կարճ ու ժամանակակից է: «Վ. Վարդանյանը ոեալիստ արվեստագետ է: Նա կարողացել է ստեղծել ոեալիստական լիարժեք ներկայացում»¹: Այս էր Վարդանյանի աշխատանքին տրված համեստ, բայց ըստ էության մեծ գնահատականը, ոեժիսյոր, որ այստեղ ևս ռմեռել» էր գերասանի խաղի մեջ:

«Հրացանավոր մարդը» բեմադրությունը էտապացին նշանակություն ուներ սովորակայ թատրոնի համար այն իմաստով, որ այստեղ բարձրացել էր ուսուցիչն հերոսի սքանչելի կերպարը իր ողջ վսեմությամբ:

«Հրացանավոր մարդը» բեմադրությունից մեկ տարի անց Վ. Վարդանյանը բեմ է հանում Կապլերի և Զլատոգորովայի «Էկնինը 18 թվին» պիհեսը: Այս անգամ աշխատանքը թեև համեմատաբար դյուրին հղավ, քանի որ հիմնական դժվարություններն արդեն հաղթա-

1 «Գրական թերթ», 1938, 30 նոյեմբերի:

Հարված էին Ն. Պոգողինի պիեսի բեմադրության մեջ, բայց թատրոնը ստեղծագործական ավելի մեծ արդյունքների հասավ: Ոեժիսյորը և դերասանները հնարավորություն ունեին արդեն ամբողջովին իրենց ուշադրությունը կենտրոնացնելու հերոսների ներքնաշխարհի բացահայտման վրա. չէ՞ որ դերի արտաքին նկարագիրը գրտնելու բոլոր բարդությունները արդեն անցել էին: Բացի այդ, պիեսն ինքը շատ նյութ էր տալիս ոեժիսյորի համար, որը ձգտում է բեմականորեն ավելի ցայտուն ներկայացնել իրադարձությունները: Այստեղ ոեժիսյորն ավելի ազատ է զգում, կարողանում է բեմական այնպիսի սիտուացիաներ գտնել, որոնց մասին պիեսում հիշատակություն չկա: Ոեժիսյոր Վ. Վարդանյանի վարպետությունը հարստացման ընթացք է ապրում: Նա ոտք է դնում իր ստեղծագործության երկրորդ շրջանը, որ բնութագրվում է կերպարի կամ ողջ պիեսի բովանդակությունը պատկերավոր կերպով բացելու, վառ թատերական ձևերի որոնումներով:

«Լենին» ներկայացումը ուկոլյուցիայի հերոսների կերպարները մարմնավորելու հաջորդ քայլը եղավ հայ բեմում:

Վ. Վարդանյանի ոեժիսյորական գործունեության նախապատերազմյան շրջանն ավարտվեց հաջողությամբ, որ հոշակ բերեց ոչ միայն ոեժիսյորին, այլև տղավորակայ թատրոնին, որ առաջին անգամ՝ նրա բեմադրություններով մարմնավորել էր ուկոլյուցիոն ժողո-

վլրդի ներկայացուցիչների և Կոմունիստական պարտիայի առաջնորդի կերպարները:

Նախապատերազմյան շրջանում Վ. Վարդանյանն առաջին անգամ իր և ոեժիսյոր դիմում է Գորկու դրամատուրգիային: 1938 թվին նա երևանի Կ. Ստանիսլավսկու անվան ուսումական թատրոնում բհմադրում է «Թըշնամիներ» պիեսը: Պրոլետարիատի և բուրժուազիայի պայքարի մասին պատմող այդ ստեղծագործությունը, սոցիալիստական ուսալիզմի դրամատուրգիայի այդ նըմուշը, շատ բան է սովորեցրել ոեժիսյոր Վարդանյանին: «Անձամբ ես, բոլոր իմ ընկերներն ու կոլեգաները,— ասում է Վ. Վարդանյանը, — միշտ նշել ենք, որ Գորկու, գորկիական դրամատուրգիայի հետ հաղորդակցությունը ստեղծագործական հրճվանք է պատճառում, գաղափարայնություն ու վարպետություն սովորեցնում, գերասանին, ոեժիսյորին մտավորապես զարգացնում... Գորկու պիեսին առաջին անգամ ծանոթանալուց անմիշապես հետո ուզում ես աշխատել ու աշխատել նրա երկի վրա, շրաժանվել նրա մտքերից, լինել մեծ գրողի հետ, բացի նրա հանճարեղ ստեղծագործությունը»:

Հետագայում, 1952 թ. Վ. Վարդանյանը, Բ. Ե. Զախավայի ղեկավարությամբ, աշխատում է «Եգոր Բուլըշովը և ուրիշները» բհմադրության վրա՝ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում: Այս աշխատանքը սովետական ականավոր ոեժիսյորի հետ միասին՝ քիչ բան չի սովորերել Վ. Վարդանյանին:

Վ. Վարդանյանը պատմում է, որ «Գորկու պիեսի

վրա աշխատելը, թատրոնի կոլեկտիվի շփումը ռեժիսյոր
թ. Ե. Զախավայի հետ՝ բարձրացրին փորձերի կուլտու-
րան, նկատելի հետք թողնելով մեր թատրոնի ստեղծա-
գործական կյանքում»։ Վ. Վարդանյանը այն հայ ռե-
ժիսյորներից էր, որոնք համառորեն փորձերի բարձր
կուլտուրա էին ներարկում ստեղծագործական կոլեկտի-
վին։ Բացի այդ, «Եզրո Բուլըշովը և ուրիշները» բեմա-
դրության մեջ ռեժիսյոր Զախավային հաջողվել էր ստեղ-
ծել թատերական մի շարք հիանալի տեսարաններ (երկ-
րորդ գործողության ֆինալում փողհարի տեսարանը,
ներկայացման ֆինալը և այլն), որոնք թատերայնու-
թյան մի-մի փայլուն օրինակներ են։

Նույնիսկ այն փոքր շփումը, որ Վարդանյանն ունե-
ցել է Գորկու դրամատուրգիայի հետ, նրան ստեղծա-
գործական մեծ օգնություն է ցույց տվել տիրապետելու
բեմական արտահայտչականության նոր ձևերին։

Վ. Վարդանյանի նախապատերազմյան շրջանի վեր-
ջին բեմադրությունը եղավ Գեղամ Սարյանի «Ճրպար-
տությունը»։ Պիեսի և բեմադրության ճակատագիրը
կանխորոշված էր հենց այն պատճառով, որ այնտեղ
փորձ էր արվում արդարացնել անհատի կուլտի ժամա-
նակաշրջանի զոհերին, հեղինակն ու ռեժիսյորը ձգտում
էին ապացուցել, որ կան և զրպարտված զոհեր, որ մեկի
պատահական մեղադրանքով, ավելի ճիշտ զրպարտան-
քով շի կարելի պատվազուրկ անել ամբողջ մի ընտա-
նիք։ Հասկանալի է, որ անհատի կուլտի ժաղկման ժա-
մանակաշրջանում նման հարցադրումն անհնար էր Եվ

շատ շուտով մամուկում ու հրապարակական քննարկումներում Գեղամ Սարյանի պիեսը, ինչպես և Վ. Վարդանյանի բեմադրությունը ճանաչվեցին արատավոր, նույնիսկ զրապարտություն իրականության հանդեպ: Շատ շանցած բեմադրությունը հանվեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնի խաղացանկից:

Այժմ անհրաժեշտ է նշել, որ թատրոնի այդ աշխատանքը սովետական արվեստի այն եղակի ստեղծագործություններից էր, որտեղ բողոքի ձայներ լսվեցին աղնիվ մարդկանց զրապարտության դեմ:

Ենելով պիեսից, Վ. Վարդանյանը, դերասաններ Հասմիկի, Սյուզան Գարագաշի, Օլգա Գուլազյանի, Դավիթ Մալյանի և ուրիշների օգնությամբ, ստեղծել էր մի շարք սուր բեմական վիճակներ, որոնց դրամատիկմը անկեղծորեն հուզում էր հանդիսականներին:

«Զրապարտություն» պիեսի և բեմադրության ասպարեզ գալը պետք է դիտել որպես մի համարձակ ու ազնիվ քայլ սովետահայ թատրոնի պատմության մեջ: Այդ համարձակ քայլի հեղինակներից մեկն էր Վ. Վարդանյանը:

Հայ թատրոնի զարգացման նախապատերազմյան շրջանում, մոտ մի տասնամյակ, Վ. Վարդանյանը իրեն ոեժիսյոր աշխատել է ոեսպուրլիկայի լավագույն թատերական կոլեկտիվում: Այդ մի քանի տարում նա առաջդիմել է նաև իրեն ոեժիսյոր-մանկավարժ, թատրոնի կուտուրան առաջ մոռղ գործից: Պատահական չէ, որ Վ. Վարդանյանի ոեժիսյորական գործունեության հետ կապված հայ թատրոնի մի քանի նշանակալից բե-

մաղրություններ։ Նախապատերազմյան շրջանում հենց վ. Վարդանյանի «Անհանգիստ ծերություն», «Հրացանավոր մարդը», «Լենին» բեմադրությունները Գ. Սունդուկյանի անվան թատրոնի լուրջ հաջողություններն էին։ Նույն այդ շրջանում է վ. Վարդանյանը ասպարեզ գալիս իբրև ստուդիայի թատերական դեկավար, Ստանիսլավսկու «սիստեմի» ակտիվ պրոպագանդիստ։

Ինչպես նախապատերազմյան տարիներին, ակտիվ ու բեղմնավոր է եղել վ. Վարդանյանի ռեժիսորական գործունեությունը նաև Հայրենական պատերազմի տարիներին։

Այդ ժամանակաշրջանի թատերական ներկայացումների հիմնական թեման դարձավ սովետական հայրենասիրությունը։ Սովետահայ թատրոնը ևս ստեղծագործական մեծ գործ կատարեց՝ ժողովրդին տոգորելով հայրենասիրական բարձր զգացմունքներով։ Եվ թատրոնի այդ հիմնական գիծը իրականացնելու գործում մեծ դեր խաղաց նաև ռեժիսոր վ. Վարդանյանը։

1941—1945 թվերի ընթացքում Վարդանյանի բեմադրած յոթ պիեսներից չորսը հագեցած էին հայրենասիրական պաթոսով։ Դրանց մեջ կային և՛ պատմական, և՛ պատմառելլյուցիոն թեմայով գրված պիեսներ՝ «Գեվորգ Մարզպետունի», «Գեներալ Բրուսիլով», «Արշալույսին»։ Բեմի վրա վերարտադրվող հեռավոր ու մոտավոր անցյալի պատմական իրադարձություններում ռեժիսորը որոշակիորեն առանձնացնում և ընդգծում էր հայրենասիրության թեման։ Հասարակական լայն ար-



Տեսարան «Հռացանավոր մարդ» ներկայացումից

Տեսարան «Գևորգ Մարզպիտունի» ներկայացումից





Հայոց ժողովութիւն կատարելու պահին 1950 թ.

ձագանք գտավ Հատկապես Կ. Սիմոնովի «Ծուս մարդիկ» պիեսի բեմադրությունը: Սովետական բոլոր թատրոնների մեջ Գ. Սունդուկյանի անվան թատրոնն առաջիններից մեկն էր, որ Հանդիսատեսին ցույց տվեց Սիմոնովի պիեսում պատկերված խորապես հուզիչ գեղաքերը: Ինչպես և առաջներում, պատերազմի տարիներին ևս գաղափարական մեծ լիցքը պիեսների բեմադրություններ էին Հանձնարարվում Վ. Վարդանյանին: Դրանցից մեկը եղավ Կ. Սիմոնովի պիեսի բեմադրությունը:

1942 թվականի դաժան օրերին Գ. Սունդուկյանի անվան թատրոնի կոլեկտիվը, ռեժիսոր Վ. Վարդանյանի ղեկավարությամբ, ձեռնարկեց մեծ պատերազմի շնչով համակված ներկայացում ստեղծելու աշխատանքին: Անողոք էին ժամանակները, դաժան՝ պիեսում կատարվող իրադարձությունները, և թատրոնը պետք է գտներ արտահայտչական միջոցների համապատասխան խըստություն ու խորություն: Այս պահանջներն օրդանապետն ուղարկելու համար առաջարկեց, և նա, առանց արտաքին էֆեկտներով տարվելու, հարազատորեն բացում է Կ. Սիմոնովի պիեսի բովանդակությունը: Պիեսը չէր գունազարդում պատերազմի ծանր ու դժվարին առօրյան: Վարդանյանի բեմադրության մեջ հարազատությամբ էր արտացոլվում պատերազմի իրական պատկերը: Պատերազմը պատերազմ է, դաժան է ու անզիջում, պայքարի մեջ մարդկային գեղեցիկ կյանքեր են խորտակվում:

Այսպիսին էր «Ռուս մարդիկ» ներկայացումը նայող հանդիսականի առաջին տպավորությունը, չնայած ո՞չ պիեսում, ո՞չ ներկայացման մեջ չկային «ռազմական» մարտերի շառաչուն տեսարաններ: Պատերազմը ունակ կերպով զգացվում էր հերոսների փոխհարաբերությունների, մարտիկների ներքին հոգեբանության մեջ: Հայրենասիրության թեման հայկական բեմադրության մեջ հնչում էր ոչ թե հանդիսավոր ռեգիստրերի վրա, այլ հանգիստ, մարդկային այդ վսիմ զգացմունքին վայել պարզությամբ ու խորությամբ:

Ուժիսյորը դրան հասել է կերպարների յուրահատուկ մեկնարանմամբ: Զնայած բեմի վրա պատերազմական առօրյան էր պատկերվում, սակայն միզանսցենները հանգստություն ու զսպվածություն էին արտահայտում: Պատերազմական իրարանցման ոչ մի արտաքին արտահայտություն, ամեն ինչ զարգանում էր մի տեսակ անշտապ ընթացքով: Մարդիկ բեմի վրա հանգիստ գնում էին մեռնելու: Նրանց խոսքը հնչում էր պարզ, առանց կեղծ պաթոսի, ինչպես սովորաբար բեմի վրա չեն պատկերվում կործանման գնացող կերպարները:

Բայց ինչո՞ւ է ռեժիսյորը պիեսը բացելու համար հատկապես այդ բանալին ընտրել, ինչո՞ւ է հրաժարվել վառ, «ռազմաշունչ» տեսարաններից, դրանց մեջ սովորական մարդկանց հերոսական վարքագծի պաթոսը արտահայտելու հնարավորությունից:

Ուժիսյորական մեկնարանման ինքնատիպությունն այստեղ բխում էր ոչ այնքան Կ, Սիմոնովի պիեսի ա-

ուանձնահատկությունից, թեև դա էլ ուներ էական նշանակություն, որքան Վ. Վարդանյանի ստեղծագործական խառնվածքի առանձնահատկությունից։ Նա փնտրում էր թատերական այն ձեզ, բեմական այն լեզուն, որով կարելի էր ճշմարտացիորեն պատմել հասարակ մարդկանց իսկական հերոսության մասին։ Զէ որ պիեսի հերոսները առանձնահատուկ, ընտրյալ մարդիկ չեն, էլ ինչո՞ւ բեմ հանել նրանց իբրև ընտրյալ անհատներ՝ գերբնական հատկանիշներով։ Դա հետաքրքիր մոտեցում էր, որ դուրս էր մզում մակերսային, զուտ արտաքին թատերայնությունը՝ իսկական թատերայնության առաջ ճանապարհ բացելու համար։ Առաջին անգամը չէր, որ Վ. Վարդանյանը ընտրում էր ուժիւզորական մեկնաբանության այս ուղին, բայց նման արդյունքի հասնում էր, թերևս, առաջին անգամ։

Ուժիւզորը բեմի վրա ստեղծում էր այնպիսի տրամադրություն, մթնոլորտ, որի մեջ մարդիկ զգում էին իրենց ինչպես հարազատ օջախում։ Ոչ ոք չէր մտածում մահվան մասին, բռլորը հանդիսաւ ու անվլրդով գործում էին, համոզված, որ կյանքը պիտի հաղթանակ տանի։ Բայց մահեր ժամ առ ժամ, անողոքաբար մերձինում է սովետական հասարակ մարդկանց այդ խըմձալի, մարդիկ, որ մեն-մենակ թե միասին, առանց խուճապի մատնվելու գնում էին այնտեղ, որտեղից այլևս չէին վերադառնում։ Նրանց կողքին մահն էր. նա գործում էր ֆիզիկապես, բայց մարդիկ մտածում էին կյանքի մասին։ Նմանօրինակ հակադրությունը տրվում էր

ոեժիսյորական հնարների ժլատ միջոցներով, հազիվ նկատելի շարիխներով: Ռեժիսյորն ասես խուսափում էր կտրուկ շարժումներից, բարձր ձայնից, «պաթոսով» ասվող խոսքից, նա զգում և զգացնել էր տալիս այն անսովորը, որ հատուկ էր բեմի վրա պատկերվող այդ առօրյա, սովորական վիճակին: Եվ նա ձգտում էր շխախտել սովորականի, առօրյայի սահմանները: Բայց այդ սովորականը մի առանձնահատուկ սովորական էր. սա էր Կ. Սիմոնովի պիեսը բացելու ոեժիսյորական բանալին: Այդ բանալին գտել էր Վ. Վարդանյանը և այն փայլուն կերպով օգտագործելով, ստեղծել ճշմարտացի ներկայացում պատերազմի մասին:

«Մուս մարդիկ» ներկայացումը նվաճեց անկեղծ սերը հայ հանդիսականի, որ ներկայացումն ընկալում էր ժողովրդական պատերազմի մասնակցի հայացքով:

... 1942 թիվ, ֆաշիստները գտնվում են Մոսկվայից հարյուր կիլոմետրի վրա, նրանց հրոսակները շարժվում են դեպի Հյուսիսային Կովկաս: Սովետական Հայրենիքը վտանգի տակ է: Հայ մայրերը ամեն օր ուղիւածակատ են ճանապարհում իրենց սիրասուն զավակներին, երևանը թաղված է լուսաքողարկման խավարում, և այդ իրազրության մեջ բեմի վրա բացվում է ուղիւածակատային ոեալ կյանքը: Հանդես են գալիս ճակատի մարդիկ՝ պարզ ու հերոսական... Որքա՞ն մայրական արցունքներ են թափվել այդ ներկայացումներին, որքա՞ն առնական ձեռքեր բռունքը գառել, և մարդիկ հաջորդ օրն իսկ նույնպիսի հանգստությամբ դնում էին ուղ-

մաճակատ, իրենց հետ տանում թատրոնում ծնված զգացմունքը:

Մարդկացին այդ ապրումները հասարակության մեջ բորբոք էին պահում հաղթանակի հավատը, հույս ներշնչում, նրանց սրտերը համակում այրող ատելությամբ զեղի թշնամին: Դա մի խիստ ու ժլատ պատմություն էր, պատերազմի մասին, որ առաջին անգամ այնպես անկեղծորեն ու ճշմարտացի հնչեց հայ բեմից: Եվ այդ պատմության հեղինակներից մեկը Վ. Վարդանյանն էր, որ ստեղծել էր հայրենասիրական հուզիչ ներկայացում:

Այսպիսով, սովորաբայ թատրոնի գարդացման այս փուլում ևս, ոեժիսյորն ստեղծեց մի բեմագրություն, որ հաստատապես մտավ թատրոնի ստեղծագործության ուկե ֆոնդը:

«Ծուս մարդիկ» բեմագրության հետ միասին, պատերազմի տարիներին Վ. Վարդանյանը ստեղծեց իր լավագույն բեմագրություններից մեկը՝ Նար-Դոսի «Սպանված աղավնին»:

Պիեսի վրա աշխատելիս ոեժիսյորի առաջ կանգնում էին այնպիսի խնդիրներ, որոնց հետ նա առաջներում գործ չէր ունեցել: «Սպանված աղավնին» մի պիես է, որի մեջ տրամադրությունը կարևոր դեր է խաղում: Կան պատկերներ, որոնք պահանջում են իմպրեսիոնիստական մոտեցում: Հեղինակի մտահղացումը, որ սպանված աղավնու պատկերով ստացել էր սիմվոլիստական լուծում, թելադրում էր ոեժիսյորական ուրույն մի ոճ: Զի

կարելի ասել, թե Վ. Վարդանյանը լիովին հաղթահարել է այդ ոճը գտնելու ստեղծագործական խնդիրը, բայց անկասկած է, որ նա ինքնուրույնաբար, սեփական ըմբռունումով կարողացել է բացել դրամատիկական երկի բովանդակությունը: Փոխվում ու հարստանում է թատերայնության հասկացողությունը, որ այժմ Վարդանյանն ընկալում է իրրե ոեժիսյորական արվեստի յուրահատուկ լեզու Միշտ չէ, և ամեն ինչ չէ, որ բեմի վրա հնարավոր է բացել դերասանների խաղի օգնությամբ միայն,— ահա թե ինչ էր սովորեցնում «Սպանված աղավնին» բեմադրության վրա կատարված աշխատանքը:

Եվ ոեժիսյորը հասնում է իր ոեժիսյորական կերպարների ստեղծմանը, որոնք հիմնվում են դերասանական կատարման վրա, բայց շեն սահմանափակվում դրանով: Նման մոտեցումը ոեժիսյորին հնարավորություն է տալիս վերանայել նար-Դոսի պիեսի տրագիցիոն մեկնաբանությունը: Սենտիմենտալիզմի և մելոդրամատիզմի այն երանգը, որ առկա էր նար-Դոսի պիեսի հայտական շատ ուրիշ բեմադրությունների մեջ, գ. Սունդուկյանի անվան թատրոնում հաղթահարում են ոեժիսյորն ու դերակատարները:

Այսպես, ոեժիսյորի աշխատանքը կլասիկ և սովետական լավագույն պիեսների վրա բարձրացնում են նրա վարպետությունը, գաղափարական-գեղարվետական մակարդակը:

Պատերազմի վերջին շրջանում, սակայն, սովետա-

կան թատրոնում նկատելիորեն իջնում է պահանջկոտությունը խաղացանկի նկատմամբ, թատրոնների բեմերում հայտնվում են գաղափարազուրկ, իսկ երբեմն էլ՝ պարզապես արատավոր դրամատիկական ստեղծագործություններ:

ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի 1946 թվի օգոստոսի 26-ի «Դրամատիկական թատրոնների ռեպերտուարի և նրա բարելավման միջոցառումների մասին» որոշման հրապարակումից հետո սովետական թատրոնների գաղափարական-գեղարվեստական վերակառուցման ասպարեզում մեծ աշխատանք սկսվեց:

Առաջնորդվելով պարտիայի Կենտկոմի 1946—48 թթ. իդեոլոգիական հարցերի մասին կայացրած որոշումներով, սովետահայ թատրոնի գործիչները ևս պայքար ծավալեցին իրենց թատրոնների ռեպերտուարը բարելավելու համար:

Ժամանակակից սովետական թեմատիկայով ներկայացումներ ստեղծող հայ ռեժիսորների առաջին շարքերումն էր Վ. Վարդանյանը: 1946-ից մինչև 1953 թիվը նա բեմադրում է այնպիսի պիեսներ, ինչպիսիք են՝ «Ռուսական հարցը», «Խոր արմատները», «Մոսկովյան բնավորությունը», «Թեհրանը»:

Սովետահայ թատրոնի պատմության հետպատերագոյան շրջանի այդ ներկայացումները ունեցան սկզբունքային նշանակություն, արդիական թեմատիկան հաստատելով թատրոնի ռեպերտուարում:

Այդ աշխատանքների մեջ իր գաղափարական-գե-

ղարվեստական մակարդակով հատկապես աշքի է ընկնում «Ռուսական հարց» պիեսի բեմագրությունը։ Կոնստանտին Սիմոնովի հրապարակախոսական կրքով հագեցած այդ պիեսը գրավում է ռեժիսյորին իր բովանդակությամբ, պիեսի հերոսների ճակատագիրը հուզում էր թատրոնի կոլեկտիվին։ և ահա ստեղծվում է հետպատերազմյան շրջանի հիանալի ներկայացումներից մեկը։

«Ռուսական հարցը» հանդիսատեսների լայն շրջանին հուզում էր ոչ միայն դրված հարցի սրությամբ, քաղաքական պրոբլեմի լուծման մասշտաբով, այլև ողջ ներկայացման գեղարվեստական ատաղձով։ Բեմագրության մեջ ռեժիսյորը արդեն չէր մեռնում բեմական կերպարների մեջ, ինչպես նախորդ ներկայացումներում։ Պիեսում պատկերվող դեմքերը ռեժիսյորին թելադրում էին փնտրել արտահայտչական ցայտուն ձևեր, որոնք չէին կարող ամփոփվել բացառապես դերասանական խաղի մեջ։ Պահանջվում էր ռեժիսյորական ակտիվ միշտառություն, և քանի որ այդ պահանջը արդեն ծանոթ էր ռեժիսյորին և բխում էր հենց դրամատիկական նյութից, Վ. Վարդանյանն ընդունեց ստեղծագործական այդ «մարտահրավերը»։

Անհրաժեշտ էր թատրոնի բեմի վրա ստեղծել ժամանակակից ամերիկյան քաղաքի առօրյայի ճշմարիտ պատկերը, ցույց տալ ամերիկյան խմբագրության ներքին կյանքը, այդ օտար իրականության ոիթմն ու կուլորիտը։ Դրա հետ միասին հիմնական ուշադրությունը

բնեովում էր շարքային ամերիկացիների կերպարների վրա, իրու տարրեր աշխարհայացքի ու բնավորության տեր մարդկանց:

«Ռուսական հարց» պիեսի հրապարակախոսական կիրքը, քաղաքական ակտուալությունը, ինչպես և գրամատուրգիայի ձեզ ռեժիսյորին կարող են մղել ազիտներկայացում ստեղծելու ուղին, որն, իհարկե, կունհնարիր գրական կողմը, բայց չէր հասնի ներգործության այն աստիճանին, որին հասել էր Վ. Վարդանյանը ռեժիսյորական այլ մոտեցմամբ: Պիեսի բնավորությունները խորապես բանալու ուղին էր գրավել ռեժիսյորին: Բեմի վրա իրար էին բախվում մարդկային բնավորություններ, որոնց ետևում պարզ երևում էին նրանց քաղաքական հայացքները:

Ճիշտ ու խորը բացելով պիեսում գործող կերպարների ներքնաշխարհը, ռեժիսյորը ձգտում էր հասնել այն բանին, որ այդ մարդկանց ճակատագիրը ոչ միայն հետաքրքրի ճանաչողական իմաստով, այլև հուզի հանդիսականին: Ստեղծվեց մի ներկայացում, որի մեջ սովորական ռեժիսյորի վերաբերմունքը իրադարձությունների նկատմամբ ակնհայտորեն առաջին պլանն էր քաշվում: «Ռուսական հարցը» տենդենցիոզ ներկայացում էր, բարիս լավագույն իմաստով: Այդ տենդենցիոզությունը բխում էր բեմի վրա պատկերվող կյանքից, օրգանական հետևանքն էր գեղարվեստական ամբողջության: Երևանի ներկայացման տենդենցը ուացիոնալ չէր, այլ խորապես հուզական ու վարակիւ:

Յեմադրողի ուշադրության կենտրոնում էր շարքային ամերիկացու՝ Հարրի Սմիտի կերպարը։ Ոեժիսյորը քայլ առ քայլ բացում է կերպարի էվոլյուցիան և հասցնում ֆինալին, որ ինքնին ռեժիսյորական մի փայլուն գյուտ էր՝ խորապես տպավորիչ և էմոցիոնալ։ Այդ իմաստով, սա լավագույնն էր նույն պիեսի թերևս մյուս բոլոր բեմադրություններից։ Դա վկայել է պիեսի հեղինակ Կոնստանդին Սիմոնովը, որը նայելով Երևանի ներկայացումը՝ թողել է իր կարծիքը թատրոնի տպավորությունների գրքում։

Հարրի Սմիտի դրաման հերոսին հանգեցնում է քաղաքական հայացքների վերանայման։ Ներքին հակասական ապրումներից զայրագնած Սմիտը ներկայացման ֆինալում մեն-մենակ գալիս է նախաբեմ։ Ողջ բեմը խավարի մեջ է... եվ լուսարձակի ճառագայթների խուրձը բռնկում ու լուսավորում է միայն Սմիտի կերպարանքը...

Ասես դիտմամբ ռեժիսյորը հերոսի կերպարը անջատել է շրջապատող աշխարհից և խոշոր պլանով ցույց է տվել նրան, հանդիսատեսի ուշադրությունը սևեկելով նրա բուռն ապրումների վրա։ Իսկ նա, Հարրի Սմիտը, խորհում է ամենագլխավորի մասին՝ ինչպես շարունակել ապրել, ո՞ւր գնալ։ Նրա առաջ երկու Ամերիկա է՝ Լինկոլնի Ամերիկան և Հերստի Ամերիկան։ Ոեժիսյորը ուշի-ուշով հետևում է Սմիտին, և երբ նա շուրջ դալով ուղղվում է բեմի խորքը, ուր բռնկել էր գիշերային նյու-Յորքի խայտաբղետ պանորաման, հանդիսականը

տեսնում է հաստատ քայլերով առաջ գնացող մի մարդու, որ անհետանում է հակայական քաղաքում... Նա գնում է այնտեղ, որպեսզի պայքարի կինկոլնի Ամերիկայի համար: Դա ոեժիսյորական մի պատկեր էր, որի մեջ վառ թատերայնությամբ, «մեծ պլանով» բացվում է Սիմոնովի պիեսի գաղափարը:

«Ռուսական հարցը» եղավ ոեժիսյորի լավագույն աշխատանքը հետպատերազմյան շրջանում: Ճիշտ է, մինչև 1953 թվականը Վ. Վարդանյանը բեմադրել է մի քանի ուրիշ պիեսներ ևս, բայց այս բեմադրություններում նկատելի տուրք է տրված անկոնֆլիկտ դրամատուրգիայի «տեսությանը»:

Կյանքի ոեալիստական պատկերման փոխարեն կյանքի գունազարդում, մարդկային կերպարների խոր բացահայտման փոխարեն այդ կերպարների մակերեսային մեկնաբանում՝ ահա այդպիսին էին անկոնֆլիկտ դրամատուրգիայի պիեսները, այդպիսին էին և նրանց հիման վրա ստեղծված բեմադրությունները:

Դժբախտաբար, հետագա տարիներին Վավիկ Վարդանյանին շվիճակվեց նոր բեմադրություններով հանդես գալ հայկական գրամատիկական թատրոնի բեմին: Զբաղված լինելով մանկավարժական աշխատանքով, վարելով Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գլխավոր ոեժիսյորի բազմազբաղ պաշտոնը, Վ. Վարդանյանը համարյա բոլորովին կտըրվ դրամատիկական թատրոնի ստեղծագործական ավեց դրամատիկական թատրոնի ամենահիտական առողջայից, և այն էլ՝ իր գործունեության ամենահիտա-

քըրքիր շրջանում, երբ, յուրացնելով դերասանի հետ
աշխատելու կարևոր սկզբունքը, նա արդեն թևակոխել
էր ռեժիսյորական արվեստի առավել բարդ ոլորտներ:

Այդ էին վկայում նրա «Ծուս մարդիկ», «Ծուսական
հարց» բեմադրությունները, որոնք հատկանշվում են
դրամատուրգիական գործի թատերային հետաքրքիր
բացահայտմամբ:

Առաջիմ Վ. Վարդանյանի վերջին աշխատանքը կե-
Տոլստոյի «Աննա Կարենինայի» բեմադրությունն է Երե-
վանի Կ. Ս. Ստանիսլավսկու անվան ոռուսական թատ-
րոնում:

«Աննա Կարենինայի» բեմադրությունը նվիրված էր
մեծ գրողի մահվան 50-ամյակին, այն իրականացվեց
1960 թվականի վերջերին:

«Աննա Կարենինան» ունի հարուստ, թեև ոչ երկա-
րատև բեմական տրադիցիա, որ ստեղծվեց Գեղարվես-
տական թատրոնի բեմադրությամբ: Այնտեղ գտնված
ռեժիսյորական և դերասանական հաջողությունները
ձեռք բերեցին մի տեսակ բեմական էտալոնի նշանակու-
թյուն: Մինչև օրս էլ սովորական բեմում չի ստեղծվել
Կարենինի կերպար, որ ինչ որ ձևով կրկնած Աիներ
Խմելյովի կերտած հոյակապ կերպարը, չի եղել ուրիշ
Աննա, որ չնմանվեր Տարասովայի անմոռանալի Աննա-
յին: Այս տեսակինակից, ինարկե, ռեժիսյոր Վարդանյանի
գործը դժվարանում էր: Բայց եթե հնարավոր չէր ա-
զատվել կամ վերանայել «Աննա Կարենինայի» միատ-
յան տրադիցիան, ապա հնարավոր էր, նույնիսկ տն-

Հըրաժեշտ էր վերանայել Ն. Վոլկովի կազմած բեմականացումը՝ Բանն այն է, որ Ն. Վոլկովի «Աննա Կարենինա» վեպի հիման վրա կազմած «դրամատիկական ծրագիրը» ունի ավելի քան քսանհինգ տարվա «հասակ»։ Այն ժամանակ, 30-ական թվականների կեսին, վեպի նման բեմականացումն արդարացված էր ժամանակի պահանջներից ելնելով։ Սակայն, այդ նույն սնիփուխ բեմադրությունը 1960 թվականին, երբ Տոլստոյի ստեղծագործության ընդհանուր գնահատության ինչպես և «Աննա Կարենինա» վեպում արտացոլված մարդկային փոխհարաբերությունների ընկալման մեջ բավական փոփոխություններ են կատարվել՝ մնում է անհասկանալի։

Եվ, իհարկե, ոեժիսյոր Վարդանյանը ճիշտ շվարվեց, անվերապահորեն ընդունելով հին բեմականացումը, քանի որ դա նրան սկզբից արդեն զրկեց վեպին թարմու արդիական մեկնություն տալու հնարավորությունից։

Ն. Վոլկովի բեմականացման մեջ ավելի մեծ ուշադրություն է դարձված վեպի սյուժետային գծերին, քան հերոսների ներաշխարհին։ Այժմ, երբ ժամանակակից դրամատուրգիան այսպես կոչված դեղուամատիզացիայի ուղղությամբ բավականին լուրջ նվաճումների է հասել, իհարկե, կարելի էր «Աննա Կարենինան» բեմ հանելիս նախապատվությունը տալ ոչ թե սյուժետային գծերի, այլ կերպարների հոգեբանության բացահայտմանը։ Զպետք է կասկածել, որ եթե Գեղարվեստական թատրոնը նորից անդրադառնա Տոլստոյի այդ վեպին, ապա

անպայման կվերանայվի հնօրյա, ինչ-որ շափով «ուժը կորցրած» բեմականացումը:

Ունեցած դրամատիկական հիմքի սահմաններում Վ. Վարդանյանին հաջողվիլ է ստեղծել հետաքրքրական մի ներկայացում, ուր առկա են ոեժիսյորական մի քանի փայլուն պատկերներ: Սակայն, ինչքան էլ դա զարմանալի լինի, այստեղ Վ. Վարդանյանի ոեժիսուրայի ամենաթույլ օղակը գերակատարներն էին: Ներկայացման թերևս միակ լիարժեք կերպարը Աննան է՝ Յու. Կոլիսնիշենկոյի կատարմամբ: Ե՛վ Կարենինը, և՛ Վրոնսկին, և՛ մյուս կերպարները անհամեմատ ավելի թույլ էին ստացվել: Իհարկե, մեղքը նախ և առաջ դերասաններինն էր, սակայն, ոեժիսյորն էլ իր բաժինը ուներ: Թեմադրության ոեժիսյորական աշխատանքի ամենագնահատելի կողմն է պատկերների կուռ և վառ թատերային ընկալումը: Հիշենք մի երկու տիպան:

Ահա հավաքված են բարձրատոհմիկ հյուրերը իշխանութիւն թեթսիի հյուրասրահում. սրանց վարվելակերպը, խոսվածքը, շարժուձևերը՝ ամեն ինչ կարծես թե կրում է վերին աստիճանի կիրթ միջավայրի կնիքը: Սակայն ոեժիսյորը ստեղծում է այնպիսի միզանսցեններ, որ այդ ամենի տակ երևան նրանց մանր ու պղաոր կրքերը: Բարձրատոհմիկ հյուրերը շարախոսում են այնպես, ասես խոսելիս լինեն ամենագեղեցիկ ու վսիմ բաների մասին: Նստած կողք-կողքի, առանց որևէ ավելորդ շարժման՝ այդ մարդիկ գլխի մի թեթև շարժումով պատր

բաստ են հողին հավասարեցնել ամեն մի սրբություն
և մարդկացին պատիվ։ Ամեն ինչ զուսպ և առերևուցի՛
հանդարտ է, բայց ներքուստ այս պատկերը հագեցված
է անզուսպ դինամիզմով։

Նույն սկզբունքով է կառուցված մի այլ հետաքրքրա-
կան պատկեր՝ Աննայի խոստովանությունը ամուսնուն,
քիչ առաջ հայտնի դարձավ Աննայի «գաղտնիքը» հա-
սարակությանը՝ Վրոնսկու հետ պատահած աղետի լուրն
առնելով, Աննան չկարողացավ թաքցնել իր վերաբեր-
մունքը և ճշաց։ Ահա Կարենինը և Աննան կառքով վե-
րադառնում են տուն։ Ամբողջ բեմը մթնած է. լուսա-
վորված է միայն կառքը, և հանդիսատեսը տեսնում է
Կարենինի և Աննայի դեմքերը։ Սմբակների դոփյունի
տակ լսվում է կարճ մի դիալոգ՝ Կարենինի մեքենայաց-
ված խոսելաձեռվ արտահայտած մի երկու նախադասու-
թյուն, Աննայի արտաքնապես զուսպ, բայց ներքին հույ-
զերով լցված խոսքերը։ Աննան խոստովանում է, որ
սիրում է ուրիշի։ Դրամատիզմով հագեցած խոստովա-
նություն, մարդկացին հույզերի ալեկոծում, իսկ բեմի
վրա ամեն ինչ զուսպ է և հանդարտ։ Սակայն այդ հան-
դարտությունը նման է թաքնված, ամուր զսպանակի
տակ սեղմված այն ուժին, որ ամեն մի վայրկյան կա-
րող է պայթեցնել զսպանակը։ Հանդիսատեսը զգում է
և այդ ուժը, և այդ ամուր զսպանակը։

«Աննա Կարենինա» բեմադրության դրամատիկական
առանցքը կազմում է Աննայի պայքարը հանուն իր սի-
րու։ Այս հիմնական գիծը ոհմիսյորը իսկապես լավ է

բացահայտել: Թուղթը այն տեսարանները, ուր ներկա է Աննան, դիտվում են հետաքրքրությամբ, հագեցած են հուզզերով: Ինձիսյորը ելնում է ՎԼ. ԻԼ. Նեմիրովիշ-Դանշենկոյի այն մտքից, որ բեմում պիտի հրդեհվի Ան-նայի ոգին, ուստի և Աննայի համար նա գտել է հետաքրքիր բեմավիճակներ, որոնց մեջ հերոսուհու հուզաշ-խարհն արտահայտելու լայն հնարավորություններ կան: Նաև զրա շնորհիվ է, որ դերասանուհի Յու. Կոլեսնիչեն-կոն կարողացավ մարմնավորել մի կնոջ կերպար, որի ոգին հրդեհվում էր բեմում: Պատահական չէ նաև այն, որ Երևան գաստրոլների եկած ՄԽՍՀ-ի դերասանուհի Աննա Անդրեևան, հանդես գալով Վ. Վարդանյանի բե-մադրության մեջ, բարձր գնահատեց ոեժիսյորի աշխա-տանքը: Մոսկվա մեկնելոց առաջ Ա. Անդրեևան «Աննա Կարենինա» ներկայացման ծրագրի վրա զրեց հետեւյալ երկառողը. «Հարազատ Վալիկ Տիգրանիչ ի դեմս Զեկ ես գտա գեղեցկի մարմնավորումը: Ահա իմ Հայաստա-նը: Հպարտանում եմ, սիրում եմ, խոնարհվում եմ, իմ երազանքն է Զեկ հետ միասին դեռևս իրագործել մեկից ավելի դերեր: Զեկ անկեղծ սիրող հայուհի Աննա Մի-սակի Բարախանյան, 25/10—61»: Սա ևս վկայում է, որ ոեժիսյորի կատարած աշխատանքը իսկապես եղել է հետաքրքրական:

Կարելի է բազմացնել օրինակների թիվը, սակայն բանը դրանում չէ: Այս բեմադրության մեջ մեկ անգամ ևս գուցե առավել զգալի ուժով երևացին Վ. Վարդան-յանի ոեժիսյորական ձեռագրի այն . հետաքրքրական

կողմերը, որոնք շատ կարևոր են հայ թատրոնի զարգացման ներկա փուլում։ Գաղտնիք չէ, որ մեր թատրոնի ռեժիսորային դեռևս պակասում է բեմական կուտուրա, դերասանական կոլեկտիվը անսամբլայնության սկզբունքներով հետևողականորեն դաստիարակելու կուտուրա։ Այդ բացը մեկ անգամ էլ երևաց արդեն հիշատակված դիսկուսիայի ընթացքում, որ ծավալվեց «Դերասանը և ժամանակը» թեմայի շուրջը։

Պետք է ափսոսանքով նշել, որ մեկ և կես տասնամյակ Վ. Վարդանյանը դրամատիկական թատրոնում բեմադրություններ չի տվել։

1954 թվից աշխատելով Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, իբրև գլխավոր ռեժիսոր, Վ. Վարդանյանը շարունակեց բեմական ռեալիզմի արմատավորման մեջ ու կարեոր ծրագրի իրականացումը այդ թատրոնի բեմում, ուր վոկալ փայլուն կատարումների կողքին հաճախ կարելի է տեսնել բեմական ռեալիզմի կոպիտ խախտումներ։

Գործնականում իրականացնելով թատրոնի մեծ կորիֆեյներ Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Դանչենկոյի ուսմունքը՝ ռեալիստական օպերային ներկայացում ըստեղելու ասպարեզում, ռեժիսորը Գունոյի «Ռոմեո և Ջուլիետա» օպերայի բեմադրության մեջ հասնում է աշքի ընկնող հաշողության։

Վ. Լ. Խվ. Նեմիրովիչ-Դանչենկոն պատկերավոր կերպով խոսել է այն մասին, որ երաժշտական թատրոնում անհրաժեշտ է «մարդկայնացնել երաժշտական պար-

տիտուրը», իսկ դա նշանակում է, ասում էր նա, «որ
բեմի վրա կենդանի մարդը, եր գիշ դերասանը՝
երգիշ է, որ ստեղծում է կերպարներ դերասանա-
կան խոր ինքնագացմամբ»։ Վ. Վարդան-
յանը հասնում է դրան. գործող անձերից յուրաքանչյուրի
վարքագծում զգացվում էր ներթափանցումը կերպարի
հոգեբանության մեջ. նույնիսկ որոշ շափով ավելորդ
մտահոգություն կար դերերի ունալ, բնական նկարագիծն
ստեղծելու մեջ, իսկ դա, թերևս, առաջանում էր նրանից,
որ ոեժիսյորը շափից ավելի էր տարվել երաժշտական
պարտիտուրը մարդկայնացնելու խնդրով։ Դրա օրինա-
կը կարող է ծառացել Զուլիետայի հայտնի վալսի պատ-
կերը։ Զուլիետայի արիա-վալսը Գունոյի օպերայի լա-
վագույն հատվածներից մեկն է։ Այդ արիայում կոմպո-
զիտորը մեծ արվեստով բացել է գեռատի հերոսուհու
անհոգությունը, Զուլիետայի ուրախ-զվարթ վերաբեր-
մունքը դիպի կյանքը, որ դեռ սքանչելի էր թվում նրան,
հեքիաթի պես շքեղ։ Երաժշտության մեջ արտահայտ-
ված է Զուլիետայի կերպարի ողջ էքսպոզիցիան, շեքս-
ալիբրյան հերոսուհուն տրվում է իսկապես շեքսպիրյան
բնութագրություն։ Դա կարևոր օղակներից մեկն է օպե-
րայի երաժշտական պարտիտուրում։ Ի՞նչպես է լուծել
այդ պատկերը ոեժիսյորը։

Փառավոր սյունաշարը կիսաշրջանաձև բոլորում է
բեմը, ստեղծելով վերածնության գարաշրջանի իտալա-
կան քաղաքի պատրանք։ Խորքում երեսում են ճարտարա-
պետական հիասքանչ պանորամաներ։ Պալատի սյունա-

շարի առաջ փուլում է մի հրապարակ, որ ներկայացվում
է իրեն բակ: Հենց այստեղ է գալիս դեռատի Զուլիկետան,
աղջիկների շքախմբով շրջապատված: Նա անցնում է
մյուսների կողքով, կանգ առնում պատշգամբի տակ և,
աղջիկներով շրջապատված, երգում իր հոշակավոր
արիան: Զուլիկետա-Գոհար Գասպարյանի բոլոր շարժում-
ները բեմում շատ բնական ու ճշմարտացի էին, հավա-
տում էիր, որ բեմում քայլում են կենդանի մարդիկ և
ոչ թե մանեկեններ: Բայց դա գեռևս երաժշտական պար-
տիտուրի մարդկայնացում չէր, որի մասին ասում էր Նե-
միրովիշ-Դանչենկոն: Հարկավոր է «մարդկայնացնել»
Զուլիկետա-Գոհար Գասպարյանի արիան և ոչ միայն այդ
արիային նախորդող դերասանական հատվածը: Աղջկա
ապրումներն ու զգացումները բացվում են հենց արիայի
մեջ, այդ իսկ պատճառով արիան պետք է հղկվեր ոհմի-
սյորական իմաստով: Մինչդեռ, բնականության ետևից
ընկնելով, ոհմիսյորը համում է այն բանին, որ Զու-
լիկետա-Գասպարյանը իր արիան սկսում է երգել աղջիկ-
ների մեջ հանգիստ կանգնած: Դերասանունու հիանալի
ձայնը, նրա վոկալ արվեստը կտրվում են բեմական
կոնկրետ իրադարձությունից և հնչում իրեն կոնցերտա-
յին առանձին, չնայած և փայլուն ելույթ: Եթե խորա-
նանք այդ պատկերի մեջ, ապա դժվար չի լինի համոզ-
վել, որ այստեղ արտահայտված է Զուլիկետայի աղջկա-
յին անհոգությունը, վերածնդի շրջանին հատուկ նրա
եռանդը: Երբ երգում էր Զուլիկետա-Գասպարյանը,
սկզբում ուզում էիր նայել նրան, բայց կամաց-կամաց

կոնկրետ բեմական կերպարը կորցնում էր իր կենդանի հետաքրքրությունը, և դահլիճում նստածները սկսում էին լսել միայն անզուգական երգչուհու ձայնը: Իհարկե, հնարավոր էր այս տեսարանը բացահայտել ռեժիսյորական ավելի հնարամիտ և պատկերավոր միջոցներով, հուշել ջուլիետային, որ իր զգացմունքների մրրիկի մեջ, մի սյունից մյուսը վազելով, պլաստիկայով արտահայտեր իր հարուստ ապրումները: Վերհիշենք, օրինակ, իտալական «Պայացներ» կինոնկարի այն հիասքանչ տեսարանը, որը նեղութա-կոլորետիզիդան իր զգացմունքների պոռթկման մեջ բնության գիրկն է դուրս գալիս և երաժշտական արիան, խառնվելով նրա բանաստեղծական պլաստիկ կերպարին, ստեղծում է բացառիկ կերպով ազգեցիկ տեսարան: Կինոնկարում ռեժիսյորական տաղանդավոր լուծումն էր գտել կերպարը, գտնվել էր ռեժիսորա կան կերպար:

Վ. Վարդանյանի ռեժիսյորական գործունեության առաջին էտապը օպերային թատրոնում բնականություն բերեց օպերային ներկայացման մեջ, բայց այդ բնականությունը միշտ չէ, որ բարձրանում էր իսկական արվեստի մակարդակին: Դժվար թե այդ հնարավոր լիներ առաջին անգամ ինքնուրույն մի ասպարեզի դիմելիս, ինչպիսին օպերային ռեժիսորան էր:

Վ. Վարդանյանի երկրորդ աշխատանքը օպերային թատրոնում Տ. Զուխաջյանի «Արշակ Երկրորդն» էր, որ ռեժիսյորական մեկնաբանությամբ շահեկանորեն տարբերվում էր առաջինից:

«Արշակ Երկրորդ» բեմադրության մեջ ոեժիսյորը չէր սահմանափակվում լոկ նրանով, որ բնական ու ճշմարտացի ներկայացնի կերպարները: Այստեղ նա հեռանում է իր աշխատանքի այդ սկզբունքից և ձգտում ըստեղծել ու ժիստ ական կերպարներ: Եվ ոեժիսյորական կերպարների որոնումները ընթանում են Տիգրան Զուխաջյանի օպերայի հերոսական պաթոսը գտնելու ուղղությամբ: Օպերային արվեստի սպեցիֆիկան, մասսայական տեսարանների մասշտաբայնությունը ոեժիսյորին թելադրում էին որոնել նույնքան նշանակալից միզանացեններ, ոեժիսյորական կերպարներ:

Վ. Վարդանյանին հաջողվում է ոչ միայն գտնել ու հաղորդել երաժշտական պարտիտուրի պաթոսը, այլև բեմական միջոցներով որոշ շափով բարձրացնել այն, հասցնել մեծ հանդիսավորության: Այդ տեսակետից բնորոշ է ներկայացման ֆինալային պատկերի կառուցումը, որ շկար Զուխաջյանի ստեղծագործության երաժշտական դրամատուրգիայի մեջ:

Բացվում է վարագույրը, և հանդիսականը բեմի վրա տեսնում է հելենիստական շրջանի հայկական ամֆիթատրոնը: Թատրոնում ներկայացվում է Արա Գեղեցիկի ավանդությունը: Հսկայական մասսիվ բեմը, որ շնայած փոքր ինչ ստատիկ է դարձել ոեժիսյորը, հանդիսավոր տրամադրություն է ստեղծում, ուժգնացնում պաթոսը, հասցնելով այն ապաթեոզի, երբ հանկարծ ամֆիթատրոնը փեղկվում է, և նրա ետևում բարձրանում է Հայաստանի շքնաղ պատկերը:

1956-ին Մոսկվայում կայանալիք հայկական արվեստի տասնօրյակի կապակցությամբ «Արշակ Երկրորդ» օպերան վերաբեմադրվեց, և ռեժիսյոր Վ. Վարդանյանը տասնօրյակին ներկայացավ իրու օպերային թատրոնի ռեժիսյոր:

«Արշակ Երկրորդ» օպերային ներկայացումը մեծ հաջողություն գտավ Մոսկվայում: Հոդվածագիրները բարձր գնահատելով Տիգրան Չուխազյանի երաժշտությունը, դրվատանքով նշեցին թատրոնի լավ աշխատանքը և առաջին հերթին բհմադրող-ռեժիսյորի հաջողությունը:

Մեծ թատրոնի գլխավոր ռեժիսյոր Բ. Պոկրովսկին, գտնելով, որ օպերան մեծ փայլով է բհմադրված, առանձնացնում է «տաղանդավոր կառուցված մի շարք տեսարաններ, ինչպես օրինակ, ֆինալային տեսարանը»: Կոմպոզիտոր Վ. Ենկեն ուշադրություն է դարձնում «խորը մտածված միզանսցենների վրա», իսկ Տ. Լեռնտովսկայան, մանրամասն վերլուծելով ռեժիսյորի աշխատանքը, եղրակացնում է, որ «բհմադրության մեջ ճիշտ և նուրբ է գտնված օպերային պայմանականության ու կենդանի իրականության սահմանագիծը, որ մոնումենտալայնությունը այստեղ չի վերածվում օպերային վամպուկայի, որ շափականց նուրբ է ընկալված օպերայի ոճը»¹:

1 Այս գրախոսականները տես՝ «Советская культура», 1956, 12 հունիսի, «Литературная газета», 1956, 12 հունիսի, «Коммунист», 1956, 14 հունիսի, «Советская музыка», 1956, № 8:

Օպերային թատրոնի ասպարեզում էլ Վ. Վարդանյանը անտարբեր չմնաց դեպի ժամանակակից թեման: Զնայած բոլոր դժվարություններին, Վ. Վարդանյանը կոմպոզիտոր Անդրեյ Բաբակի հետ միասին ստեղծում է սովետական թեմային նվիրված «Արծվաբերդ» ներկայացումը: Այս օպերայի մանավանդ առաջին տարրերակը գեղարվիստորեն տուժում էր լիբրետոյի անկատար լինելուց: Եվ կոմպոզիտորը, և բեմադրող-ռեժիսյորը լիբրետոյի կեղծ վիճակները մարմնավորելիս դառնում էին մակերեսային ու անհամոզիչ: Զնայած նման թերություններին, ներկայացումը ունեցավ իսկական հաջողություն:

Դրամատիկմով էր հագեցված օպերայի պրոլոցը, ուր պատկերված էր կոլտնտեսական գյուղացու սպանությունը: Այստեղ ռեժիսյոր Վ. Վարդանյանը հասնում է հակագիր տրամադրությունների դրամատիկական բախմանը: Ա. Սպենդիարյանի անվան թատրոնի բեմի հրսկա տարածությունը ռեժիսյորը կարողացել էր շատ ճիշտ օգտագործել: Զնայած որ բեմի վրա էին գտնվում ընդամենը երկու-երեք գործող անձինք, ռեժիսյորը լայն և ազատ միզանսցենների միջոցով «լցնում էր» ամբողջ բեմը գործողությամբ:

Ներկայացման հետաքրքիր մշակված ռեժիսյորական տեսարաններից էր նաև դատավարությունը: Բեմում դատավարություն չկա, սակայն, ռեժիսյորը կարողացել էր այնպիս կառուցել միզանսցենները, գործող անձանց դնել այնպիսի վիճակների մեջ, որ դատավարության

դրամատիկական շունչը տիրում էր ամբողջ տեսարանում:

Բեմադրող-ռեժիսյորը լավ էր գտել նաև ֆինալային տեսարանը: Ֆինալը կառուցելով պայմանական ձևով, ռեժիսյորը բեմի երկու ծայրամասերում տեղադրում է երկու դաշնամուր, և կոնցերտային այս դասավորությամբ նախաբեմ են դալիս ներկայացման մասնակիցները: Օպերային ռեժիսուրայում, հատկապես մեզանում, սա մի հետաքրքրական նորություն է, որ լիովին արդարացված էր օպերայի բովանդակությամբ:

Վերը նշած երեք օպերային բեմադրություններում էլ վ. Վարդանյանը գերի շմնաց օպերային ռեժիսուրայի տրադիցիոն կանոններին, որոնեց և գտավ բեմական արտահայտության թարմ միջոցներ:

Այսպիսով, իր համար նոր ասպարեզում՝ օպերային ռեժիսուրայի ասպարեզում, վ. Վարդանյանը կարճ ժամանակաշրջանում հասնում է իսկական ստեղծագործական հաջողությունների:

Օպերային ռեժիսուրայի ասպարեզում կատարած աշխատանքը հարստացրեց վ. Վարդանյանի ստեղծագործությունը, նոր տարրեր մտցնելով նրա արվեստի մեջ, որոնք առաջ շնորհին:

Մասշտաբայնության հասնելու ձգտումը, մասսայական մեծ տեսարանների նախասիրությունը սկսում են արմատավորվել վ. Վարդանյանի ռեժիսուրական արվեստի մեջ:

Վ. Վարդանյանի ռեժիսյորական գործունեության

Համառոտ ակնարկը նույնիսկ ցուց է տալիս, որ ի դեմս
նրա սովհետահայ թատրոնը ունի մի ռեժիսյոր, որի ըս-
տեղծագործական կենսագրության հետ անքակտելիորեն
կապված են սովհետահայ թատերական կուլտուրայի մի
քանի շատ բնորոշ երևույթներ:

Սովհետահայ թատրոնի բոլոր կարևոր էտապներում,
սկսած 30-ական թվականներից, Վ. Վարդանյանը հան-
դես է գալիս իր և հեղինակ նշանակալից բեմադրու-
թյունների, որոնք սովհետահայ թատրոնի զարգացման
մեջ կարևոր տեղ են գրավել: Նա առանձնահատուկ դեր
է խաղացել հայ բեմում սովհետական թեմատիկան և
մասնավորապես ոռւս սովհետական դրամատուրգիան
հաստատելու գործում:

* * *

Վ. Վարդանյանի թատերական գործունեությունը շի
սահմանափակվում դերասանական և ռեժիսյորական
աշխատանքով: Վարդանյանը հանդես է գալիս և՛ իր և
մանկավարժ, և՛ իր և թատրոնի տեսության ու պրակ-
տիկայի հարցերին վերաբերող մի շարք գործերի ու հոդ-
վածների հեղինակ, և՛ իր և աշքի ընկնող թատերական,
հասարակական գործիչ:

Վ. Վարդանյանի մանկավարժական գործունեու-
թյունն սկսվում է 1930 թվականից: Երկար տարիներ նա
աշխատել է իր և թատերական ուսումնարանի, տեխնի-
կումի ղեկավար: 1934 թվականին, Գ. Սունդուկյանի ան-

վան թատրոնին կից, նա կաղմակերպում է ստուդիա, ուր աճում են մի շարք դերասաններ, որոնք հետագայում պատշաճ տեղ են գրավում թատրոնի խմբում։ Վ. Վարդանյանը ստուդիայում դասավանդում էր դերասանի վարպետություն և արևմտահելքոպական թատրոնի պատմություն։ Երևանի պետական կոնսերվատորիայում Վ. Վարդանյանը ավանդում էր դերասանի վարպետություն առարկան։

Վ. Վարդանյանը եղել է հայ թատրոնի դարավոր պատմության մեջ 1944 թվականին Երևանում բացված առաջին թատերական բարձրագույն դպրոցի հիմնադիրն ու ղեկավարը։ Թատերական ինստիտուտի շրջանավարտներից շատերը անմիջական աշակերտներն են, որոնք այժմ հաջողությամբ աշխատում են Սովետական Հայաստանի թատրոններում։

Շուրջ երկու տասնամյակ Վ. Վարդանյանը ղեկավարում է թատերական ինստիտուտի դերասանի վարպետության և ոհմիսուրայի ամբիոնը։ 1946 թ. նրան պրոֆեսորի կոչում է շնորհվում։

Վ. Վարդանյան-մանկավարժը իսկապես մեծ և գնահատելի գործ է կատարել։ Խորապես մարդկային և մտերիմ բնավորությունը, մեղմ ու վերին աստիճանի կիրթիառնվածքը, իր սաների դաստիարակության համար գործադրած անսպառ եռանդը Վ. Վարդանյանին դարձրին թատերական ինստիտուտի տարիների սիրված ղեկավարը և դասախոսը։

1955-ին Երևանի Գեղարվեստա-թատերական ինս-

տիտուառում ստեղծվում է Դարգինական թատերական ստուդիա, որի ղեկավարն է դառնում Վ. Վարդանյանը։ Դադստանի ժողովուրդներից և ոչ մեկը մինչև սովետական կարգերը շեն ունեցել պրոֆեսիոնալ թատրոն։ 1930-ին կումիկները հիմնում են առաջին թատրոնը, իսկ դարգինները, որ թվով երկրորդ տեղն են գրավում Դադստանի ժողովուրդների մեջ, մինչև վերջերս էլ շունեին իրենց ազգային թատրոնը։ Եվ ահա 1955-ին ըստեղծված Դարգինական ստուդիան պետք է դառնար ապագա ազգային թատրոնի հիմնական կորիզը։ Հասկանալի է, թե ինչ կարեոր ու պատասխանատու խնդիր էր դրված Վ. Վարդանյանի առաջ։

Հինգ տարի փորձված մանկավարժը զբաղվել է դարգին երիտասարդ ստուդիականների ամենօրյա պրոֆեսիոնալ դաստիարակությամբ։ Ստեղծվել էր մի հետաքրքիր հարազատ ընտանիք, որի նահապետն էր Վ. Վարդանյանը։ Հեռավոր լեռնային առվներից եկած երիտասարդները տարիների դժվար ու համբերատար աշխատանքի և Վ. Վարդանյանի շանքերի շնորհիվ տիրապետեցին թատերական արվեստի գաղտնիքներին։

Երբ Գ. Սունդուկյանի թատրոնի բեմում հորելյանական բազկաթոռին նստած Վավիկ Վարդանյանին դիմեց գեղեցիկ, երիտասարդ մի աղջիկ իր մայրենի լեզվով քշերը հասկացան, որ նա Դարգինական ստուդիայի սաներից է։ Նա եկել էր իր 60-ամյա ուսուցչի հորելյանին, որպեսզի ասի երախտագիտության այն խոսքը, որ տարիներ շարունակ փայփայել են դարգինցի երիտասարդ-

ները: Երախտագիտական խոսքեր հնչեցին նաև Մախաչ-Կալայում, երբ 1961-ի նոյեմբերի 11-ին Հանդիսավոր կերպով բացվեց դարգինական առաջին պետական թատ-րոնը:

Դաղստանի կառավարության որոշմամբ Վավիկ Տիգ-րանի Վարդանյանին շնորհվում է Դաղստանի արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Նրա մանկավարժական ու հասարակական գործու-նեության մեջ դարգինական թատրոնի ստեղծումը դար-ձավ ամենալուսավոր, գեղեցիկ էջերից մեկը:

Վ. Վարդանյանը սովետական հայ թատրոնի այն ռե-ժիսորներից է, որ ունի հետաքրքրությունների լայն շրջանակ: Լինելով գերասան, ռեժիսյոր, մանկավարժ՝ նա տարիներ շարունակ զբաղվել է նաև թատրոնի պատ-մության ու տեսության հարցերով: Վ. Վարդանյանը սովետահայ իրականության մեջ առաջիններից է, որ պրոպագանդել է Ստանիսլավսկու սիստեմը: Սկսած 30-ական թվականներից, նա բազմաթիվ դասախոսու-թյուններ է կարդացել մեծ ռեժիսյորի ուսմունքի մասին, բազմաթիվ հոգվածներ է գրել, արտահայտվել ժամա-նակակից թատրոնի, Ստանիսլավսկու, ՄԽԱՏ-ի բնմա-կան արվեստի տեսական հիմքերի շուրջ:

Պրոպագանդելով Գեղարվեստական թատրոնի սկզբ-րունքները, Վ. Վարդանյանը շի բավարարվել մամուլում կամ թատերագիտական գրքերում եղած տեղեկություն-ներով: Հայ ռեժիսյորը դիմել է հենց իրենց՝ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի վարպետների օգնությանը:

Նա մոտիկից ծանոթ էր Վ. Կաշալովին, Օ. Կնիպպեր-Զեխովյաշին, Ն. Կլիմովին, Թարխանովին, Ի. Մոսկվինին:

Քիչ աշխատանք չի կատարել Վ. Կարդանյանը նաև որպես թատրոնի պատմաբան: Երկար տարիներ նա լայնորեն զբաղվում է ոռւսահայ թատերական կապերի ուսումնասիրությամբ: Առանձին գրքույկներով լույս են տեսել «Գրիբոյեդովը և Հայ թատրոնը», «Զեխովը և Հայ թատրոնը» աշխատությունները: Այդ թատերական կապերի ուսումնասիրության արդյունքը եղավ այն, որ Վ. Կարդանյանը գրեց ծավալուն հետազոտություն՝ «Ռուսական առաջավոր թատերական կուլտուրայի գերը Հայ թատրոնի զարգացման մեջ»: Փաստերով հարուստ այս աշխատության մեջ Վ. Կարդանյանը համոզիչ կերպով բացահայտում է ոռւս և Հայ թատրոնի դարավոր ստեղծագործական և գաղափարական կապերը. Հատկապես հետաքրքրական են այն էջերը, ուր Հեղինակը պատմում է, թե ինչպես Հայ թատրոնի առաջավոր գործիշների շնորհիլ ոռուսական կլասիկ դրամատուրգիային հաղորդակից դարձան Արևելքի մի շարք ժողովուրդներ: Հարցի ուսումնասիրության ընթացքում Վ. Կարդանյանին հաջողվել է գտնել նոր արժեքավոր փաստեր: Այս հետազոտության համառոտ տարրերակը լույս տեսավ 1858-ին և դրական գնահատականի արժանացավ մամուլի էջերում:

Վ. Կարդանյանը Հայ թատրոնի այն գործիշներից է, որոնք ճանաչված ու գնահատված են ոչ միայն ուս-

պուբլիկայի սահմաններում, այլև նրանից դուքս։ Այդ են վկայում սովետական կուլտուրայի ականավոր դեմքերի խոսքերը։ Մարտիրոս Սարյանն իր անձնական նամակում գրել է Վ. Վարդանյանին. «Քո անձնվեր ծառայությունը հայ թատերական արվեստին, ինչպես և խանդավառ հասարակական գործունեությունդ մշտապես իր արձագանքն է ունեցել մեր՝ հայ թատերասեր մտավորականներիս սրտերում»։ Բարձր է գնահատում Վ. Վարդանյանի «բազմակողմանի աշխատանքը մեր թատերական գործի տարբեր բնագավառներում» Ստեփան Զորյանը։

ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Ակակի Խորավան, բարձր գնահատելով Վավիկ Վարդանյանին որպես դերասան և ռեժիսոր, հատկապես նշում է, որ նա շարունակում է վրաց և հայ ժողովուրդների բարեկամության այն փայլուն տրադիցիանները, որոնք հիմնել են մեր նախնիները։ Իրենց անկեղծ խոսքի մեջ ՍՍՌՄ ժողովրդական դերասաններ Միխայիլ Ճիմուրելին և Վերիկո Անջափարիձեն Վ. Վարդանյանին անվանում են սովետական թատերական արվեստի ճանաչված գործիչներից մեկը։

Վ. Վարդանյանը հասարակական ակտիվ գործիչ է։ Նրա հասարակական գործունեությունը սկսվել է դեռ 1918 թվականին, երբ Աստրախանում, 11-րդ հատուկ բանակի շարքերում, Հայկ Գյուլիքելիսյանի ղեկավարությամբ, նա կազմակերպել էր մի շարք ագիտ-բրի-

դադներ, որոնք սպասարկում էին պաշարված քաղաքի պաշտպաններին:

Ակտիվ մասնակցություն ունենալով հասարակական կյանքին, սկսած 1940 թվականից նա ընտրվում է երեվանի քաղաքային Սովետի, ապա Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի երկրորդ և երրորդ գումարման պատգամավոր և վերջապես Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի նախագահության նախագահի տեղակալ:

Վ. Վարդանյանի դերասանական, ռեժիսորական, մանկավարժական և հասարակական գործունեությունը սերտորեն միահյուսվում է ռեսպոբլիկայի Կուլտուրայի մինիստրության սիստեմի դեկավար պոստերում կատարած նրա աշխատանքին: 1953-ից 1954 թվականը Վ. Վարդանյանն աշխատում է իրեն Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրի տեղակալ: Այժմ նա Հայկական Թատերական Ընկերության նախագահն է:

Վ. Վարդանյանը Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության սովորական կոմիտեի անդամ է, իսկ վերջերս ընտրվեց Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության հայկական կոմիտեի նախագահ: Այս հասարակական պաշտոններում Վ. Վարդանյանը ծավալել է իրեն հատուկ ակտիվ գործունեություն: Այժմ Վ. Վարդանյանը գրականության և արվեստի գծով լենինյան մրցանակարաշխության կոմիտեի անդամ է, ուր նույնպես աշխատում է իրեն հատուկ նվիրվածությամբ ու հռանդով:

Որպես ռեժիսոր Վ. Վարդանյանին հաճախ հանձ-

նարարվել են պատասխանատու համերգների և հանդես-ների բեմադրությունները։ Այսպես, 1939 թվականին Մոսկվայում կայացած հայկական արվեստի առաջին տասնօրյակի ժամանակ նա հանդես է գալիս իրքեւ ու-ժիսյորը եզրափակիչ համերգի, որ մեծ հաջողություն է գտնում ոչ միայն Մոսկվայում, նույն այդ համերգը հե-տագայում ցուցադրվում է Լենինգրադում, Բաքվում և Երևանում։

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Վ. Վարդանյանի ծառայությունները։ 1938 թ. նրան շնորհվեց Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործի կոչում, 1950 թվականին՝ ժողովրդական արտիստի։ Սովետական Հայաստանում թատերական արվես-տի ասպարեզում ակտիվ գործունեության համար Վ. Վարդանյանը պարգևատրվել է Լենինի շքանշանով և այլ շքանշաններով ու մեդալներով։

* * *

Վ. Տ. Վարդանյանի ստեղծագործական կենսագրու-թյունը զկայում է, որ ի դեմս նրա հայ թատրոնն ունի պրոֆեսիոնալ բարձր կուլտուրայի ու պատրաստակա-նության տեր մի ռեժիսյոր, որ մեծ գործ է կատարել Սովետական Հայաստանի թատերական կյանքում։

Նախասովետական հայ թատրոնի գործիչները երա-զել անգամ չէին կարող այն մասին, որ հայ թատրոնը կունենա պրոֆեսիոնալ ռեժիսյորների մի ամբողջ շարք։

Այժմ դա իրականություն է: Հայ թատրոնի պրոֆեսիոնալ ռեժիսուրան, կազմակերպվելով սովետական իշխանության օրոք, հասավ ստեղծագործական այնպիսի բարձունքների, որ ճանաչվեց մեր ռեսպուբլիկայի սահմաններից դուրս էլ: Պրոֆեսիոնալ ռեժիսուրան դարձավ մեր թատրոնի գաղափարական-դեղարվեստական ղեկավար ուժը: Հայ թատրոնի ռեժիսուրայի կարող ուժերից մեկն էլ եղավ Վ. Վարդանյանը, որն իր ավագ ու հասակակից ընկերների՝ Արշակ Բուրջալյանի և Լևոն Քալանթարի, Արմեն Գուլակյանի և Վարդան Աճեմյանի և ուրիշների հետ ոչինչ շխնայեց հայ սովետական թատրոնը սոցիալիստական ռեալիզմի ուղիով զարգացնելու համար:

ԱՅԾԻՐ ԱՒՋԱԿԱ
Վավիկ Վարդանյան

Խմբագիր՝ Ա. Հ. Հախվերդյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Ա. Հովհաննյան
Նկարիչ՝ Ան. Գասպարյան
Տեխ. խմբագիր՝ Է. Ճանճապահյան
Վերստուգող սրբագրիչ՝ Է. Թոռոնյան

Վ. Ց 07594 Պատվեր 914 Տիրամ 1000
Հանձնված է արտադրության 31/V 1962 թ.,
Ստորագրված է տպադրության 10/IX 1962 թ.,
Թուղթ՝ 70×108^{1/32}; Տպակ. 4,12 մամ.=5,65 սլայֆ. մամ.,
հրատ. 3,9 մամ.: + 6 ներդիր
Գինը 41 կուլ.:

*

ՀԱՅԻ Կուլտուրալի մինիստրության Հրատարակությունների
և պոլիգրաֆ արդյունաբերության Գիմավոր վարչության
Պոլիգրաֆկոմինատ, Երևան, Տերյան 91:

ԳԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0037698

A 1
3199

